ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓԻՉ ՁԵԿՈՒՅՑ

10-12 ՄԱՐՏ
2023

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

10 - 12 ՄԱՐՏ 2023

Համաժողովի ամփոփիչ զեկույց

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ

i-we

OSCA

Մայիս 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4
Սեղմագիր 8
Մասնակիցների ցանկ 14
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱՋԳԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18
1.1 15 նպատակների մշակում 19
1.2 Երեք նպատակների ընտրություն և ձևաչափի փորձարկում 22
1.3 Համաժողովի նախագծում 24
1.4 Քննարկման հարցեր 26
1.5 «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ» փոփոխության տեսություն 27
1.6 Ապագա Հայկականի Համաժողովի կազմակերպիչներ, հովանավորներ և աջակիցներ 34
1.7 Համագործակցային ցանց 35
2 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 36
2.1 Մեթոդաբանության մշակում 37
2.2 Մասնակիցների ներգրավում 39
2.3 Փորձագիտական հանձնախմբերի կողմից հարցերի սահմանում և ուսուցման փուլի համար նյութերի նախապատրաստում 48
2.4 Քննարկման գործընթաց 54
2.5 Մասնակիցների փորձը 57

3 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 66

3.1 Հաշվիչ/վերահսկիչ հանձնախումբ 67

3.2 Դիրքորոշումների վերաբերյալ մասնակիցների քվեարկության արձանագրություն 68

3.3 Համաժողովին սահմանված ծրագրային առաջնահերթություններ 74

4 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈԳԻՆ 96

5 ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 108

5.1 Գնահատման մեթոդաբանություն 109

5.2 Մասնակիցների հարցման արդյունքներ 109

5.3 Արձագանք մասնակիցներից 115

5.4 Արձագանք պատվավոր հյուրերից և դիտորդներից 116

6 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 118

Հավելված 1. Փորձագիտական հանձնախմբերի անդամներ 122

Հավելված 2. Համաժողովի քննարկումներին ներկայացված դիտանկյունների վերջնական տարբերակներ 128

Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ 169

ՆԱԽԱԲԱՆ

Պատմության ընթացքում մենք չենք ունեցել մեր ապագան երազելու, երևակայելու, նախագծելու և ստեղծելու մեծ հնարավորություն: Մեր ապագան ուրիշներն են ստեղծել, և մենք միայն հետևել ենք ուրիշների նախանշած ուղղություններին:

Մոտ 30 տարի առաջ մեզ սեփական ապագան ինքնուրույն տնօրինելու հետաքրքիր հնարավորություն տրվեց, բայց մենք ձախողեցինք, որովհետև բախվեցինք բազմաթիվ հրատապ խնդիրների, և դա մեզ հետ պահեց մեր ապագայի հետ ճիշտ վարվելուց: Մենք չունենք ներկայի մարտահրավերների պատճառով տխրելու իրավունք: Դրանք միշտ են լինելու, բայց դա չի նշանակում, որ պետք է արհամարհենք ապագան:

Այս ձևաչափով քննարկումներ երբեք տեղի չեն ունեցել հետխորհրդային երկրում: «Քաղաքացիական ասամբլեա» ֆորմատով այս քննարկումը պետք է կենտրոնանա երկրի ու սփյուռքի համատեղ, ընդհանուր ապագայի վրա, ինչն այս միջոցառումը դարձնում է բացառիկ: Առաջատար փորձագետները նախապատրաստական աշխատանք են կատարել ու պատշաճ հիմնավորմամբ ձևավորել են նախնական սցենարներ ու առաջարկներ՝ ստեղծելով հզոր հիմք մեր քննարկումների համար:

Մենք պետք է հասկանանք, որ աշխարհասփյուռ մեր ազգի տարբեր հատվածների միջև գործակցությունն առաջ շարժվելու լավագույն ճանապարհն է: Մենք չենք կարող փոխել մեր անցյալը, բայց կարող ենք փոխել մեր ապագան: Ուստի, եկեք միասին սահմանենք մեր ապագան:

Նուբար Աֆեյան
«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ»
նախաձեռնության
համահիմնադիր

Արթուր Ալավերդյան
«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ»
նախաձեռնության
համահիմնադիր

Ես ուզում եմ մեր ազգը տեսնել համախմբված ու միասնական: Մենք պետք է ստեղծենք գործակցության որակապես նոր, արդյունավետ մոդել Հայաստանում:

Ականատես լինելով Համաժողովի ընթացքին՝ պետք է ասեմ, որ շատ տպավորված եմ արդյունքներից: Մեծ հաջողություն էր, որը նշանավորվեց բուռն ու արդյունավետ բանավեճերով և տվեց մի շարք կարևոր արդյունքներ: Համաժողովի գեներացրած դրական էներգիան ու թափն անկասկած զգալիորեն կխթանեն առաջարկվող լուծումների ու առաջարկությունների կյանքի կոչումը:

Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Համաժողովը սահմանեց բարձր նշաձող ապագայում նմանօրինակ միջոցառումների համար, և այստեղ ձեռք բերված արդյունքները վկայում են ընդհանուր նպատակներին հասնելու ուղղությամբ համատեղ ջանքերի արդյունավետության մասին:

Տիպիկ ժողովրդավարական գործընթացը ենթադրում է քաղաքացիների մասնակցությունը ընտրություններին մի քանի տարին մեկ անգամ, որտեղ նրանց, ըստ էության, առաջարկվում է ընդամենը «այո» կամ «ոչ» ասելու ընտրություն: Բայց այս մոտեցումը հաճախ ուշադրությունից դուրս է թողնում հասարակության շատ ավելի նուրբ ու բարդ խնդիրները: Այսօր անհրաժեշտ է ժողովրդավարական որոշումների կայացման ավելի բարդ և նորարար մոտեցում, որտեղ ժողովրդավարությունը կարտահայտվի ոչ թե պարզապես «այո» կամ «ոչ» ասելով, այլ քաղաքացիների ձայնն ավելի ուղիղ ու պատշաճ ձևով լսելի դարձնելով:

Այս առումով, առավել անմիջական և մասնակցային ժողովրդավարական գործընթացի ներդնումը նորություն է Հայաստանում, դրա իրականացումն էլ՝ բեկումնային առաջընթաց երկրում ժողովրդավարության համար: Հաջողության դեպքում այս մոտեցումը կարող է օրինակ ծառայել այլ երկրներին, որոնք ցանկանում են ամրապնդել ժողովրդավարական իրենց ինստիտուտները և ապահովել քաղաքացիների ավելի բովանդակային ներգրավածությունը:

Ռիչարդ Ազարնիա
«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ»
նախաձեռնության
համահիմնադիր

Ռուբեն Վարդանյան
«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ»
նախաձեռնության
համահիմնադիր

Մարտահրավերը, որին մենք բախվում ենք որպես հասարակություն, անկասկած, ահռելի է, և իրավիճակի հրատապությունը չի կարելի թերագնահատել: Մեր առջև ծառացած խնդիրներն արդյունավետ լուծելու համար մենք նախ պետք է ուժ և քաջություն գտնենք մեր մեջ դրանց դիմակայելու համար: Սա կպահանջի մեր հասարակության հիմքում ընկած հիմնարար արժեքների և սկզբունքների խորը ըմբռնում, ինչպես նաև ուժեղ առաջնորդություն, որը կարող է ոգեշնչել և առաջնորդել ազգին դեպի ավելի պայծառ ապագա:

Նման իրադարձությունների դերն այս առումով չափազանց կարևոր է, քանի որ դրանք ստեղծում են այս կարևոր հարցերի շուրջ համախմբվելու և կառուցողական երկխոսություն սկսելու հարթակ: Բովանդակալից ու մանրակրկիտ քննարկման միջոցով մենք կարող ենք սկսել բացահայտել մեր առջև ծառացած հրատապ հարցերի պատասխանները և սահմանել առաջընթացի և՛ իմաստալից, և՛ ազդեցիկ ճանապարհ: Եվ նման իրադարձություններն ունեն ազգային մակարդակով դրական փոփոխությունների ու վերափոխման խթանման պոտենցիալ:

2020թ. ծանր իրադարձությունները և պատերազմը ստիպեցին ևս մեկ անգամ խորհել կարևորագույն հարցերի շուրջ: Ինչպիսի՞ Հայաստան ու ինչպիսի՞ հայություն ենք ուզում ունենալ, ինչպե՞ս կառուցել այդ Հայաստանը: Մեր նախաձեռնած բազմաթիվ քննարկումներում, ի թիվս այլ կարծիքների, հնչում էր կարևոր մի միտք՝ Հայաստանի և հայության արժանապատիվ ապագան հնարավոր է կառուցել միմիայն աշխարհասփյուռ հայության միասնական ուժերով: Նախաձեռնությանն արդեն միացել են ավելի քան 120 հազար հայրենակիցներ աշխարհի 108 երկրից: Առաջնորդվելով այդ գաղափարներով և մտքերով՝ «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը ձևակերպեց 15 նպատակներ՝ միտված Հայաստանի և աշխարհասփյուռ հայության կայուն զարգացմանը և այդ զարգացման շուրջ համընդհանուր գիտակցության և փոխըմբռնման ձևավորմանը: Այսօր մենք բացում ենք նոր էջ «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության պատմության մեջ: Մենք սկսում ենք հանրային քննարկումների շատ կարևոր մի փուլ աշխարհում հայտնի «քաղաքացիական ասամբլեա» ձևաչափի հիման վրա: Սա որոշ առումներով նոր փորձառություն է հայկական դաշտում, և մենք համոզված ենք, որ մեր միասնական ջանքերով կհասնենք հաջողության:

Արտակ Ապիտոնյան
ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն

Արմինե Հովհաննիսյան
Բնակչության աճ փորձագիտական հանձնախմբի ղեկավար

Ոմանց համար Հայաստանը մեր վեհ լեռներն ու խորը ձորերն են, ոմանց համար Հայաստանը մեր հինավուրց վանքերը, ամրոցները, խաչքարերն են, ոմանց համար էլ կարող է լինել Արցախի «Տատիկն ու Պապիկը», իրենց գյուղը, իրենց տունը, իրենց փողոցի աղբյուրը: Բայց ինչ էլ լինի, Հայաստանը կդադարի հայրենիք լինել, եթե հայ մարդը այս հողի վրա չի ապրում և չի արարում: Ցավալի փաստ է, որ այսօր հայրենիքը հայաթափվում է, դատարկվում է շատ արագ տեմպերով, հազարավոր մարդիկ արտագաղթում են, ծնելիության անկում կա, ծերացող բնակչություն, հազարավոր երիտասարդներ անմահացան վերջին պատերազմներում: Եթե այսպես շարունակվի, կորուստները անդառնալի կլինեն: Այսօր հավաքվել ենք առերեսվելու այս դժվար հարցերին և մտածելու՝ ի՞նչ անել, ինչպե՞ս անել, ո՞րն է ճանապարհը: Պահը հրատապ է, պատասխանատվությունը՝ լուրջ, և գործելու հրամայականն անքննելի է: Եկել է գործելու ժամանակը: Միասին մենք կարող ենք:

Ընդհանուր մոտեցումը շատ պրոֆեսիոնալ է: Եվ գնահատելի է, որ կազմակերպիչներն ուզել են ներգրավել հայության տարբեր հատվածները Հայաստանից և տարբեր երկրներից: Բացի այդ, մասնակիցները տարբեր տարիքի ու սեռի են: Ես տեսնում եմ շատ կանանց և ուրախ եմ դրա համար, որովհետև հայկական նախաձեռնություններում զգացվում է կանանց մասնակցության պակասը: Ուրախ եմ, որ հայությունն, իր բոլոր տարբերություններով, ներգրավված է:

Եթե ապագայի մասին ծրագիր կամ երազանք ենք կազմում, շատ կարևոր է, որ այն իրականացնողները զգան իրենց որպես դրա սեփականատեր: Ցանկացած ծրագրի հաջողության համար շատ կարևոր է, որ բոլորը, սկսած ղեկավարից, զգան, որ դա իրենց ծրագիրն է: Այդ դեպքում մարդն ավելի մեծ սրտով կմտնի տվյալ գործի մեջ և իրեն պատասխանատու կզգա: Եվ այս ամենի մեջ ես հենց այդ դրական ոգին եմ տեսնում:



Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան
Պատմական պատասխանատվություն փորձագիտական հանձնախմբի ղեկավար

Արամ Աբրահամյան
Հայաստան-Սփյուռք միասնականություն փորձագիտական հանձնախմբի ղեկավար

Մենք՝ որպես փորձագետներ, չունենք վերջնական պատասխաններ: Որոշումները պետք է կայացնեն Համաժողովի մասնակիցները: Մենք առանձնացրել ենք խնդիրների երեք խումբ: Նախ, ո՞վ է հայը. անկախ նրանից, թե մարդը քանի տոկոսով է հայ՝ 0, թե 100, հայն այն մարդն է, որը պատրաստ է մասնակցել հայկական օրակարգերին: Երկրորդը, ի՞նչ է Հայաստանը. դա Հայաստանի Հանրապետությունն է, Արցախի Հանրապետությունն է և այն ամենը, ինչը յուրաքանչյուր հայ համարում է իր հայրենիքը: Երրորդը, ի՞նչ է Սփյուռքը. այն մեկ կառույց չէ, որի հետ Հայաստանը՝ որպես պետություն, Արցախը՝ որպես պետություն, և մենք՝ որպես Հայաստանի հայեր, կարող ենք առնչվել: Սփյուռքը կառույցների համակցություն է, և այս կառույցները կարող են կազմել ցանց:

ՍԵՂՄԱԳԻՐ

2023թ. մարտի 10-12-ը Երևանում կայացավ Ապագա Հայկականի առաջին Համաժողովը՝ հիմնված աշխարհում լայն ճանաչում ունեցող «Քաղաքացիական ասամբլեա» և «21-րդ դարի քաղաքային ժողով» ձևաչափերի վրա: Համաժողովին մասնակցեց Հայաստանից, Արցախից և Սփյուռքից ներկայացուցչական ընտրանքի հիման վրա և թափանցիկ վիճակահանությամբ ընտրված 200 մարդ: Այն սոսկ քաղաքացիական հասարակության հերթական միջոցառում չէր, այլ կառավարման նոր հարթակի մեկնարկ՝ աշխարհի բոլոր հայերին Հայաստանի ապագան միասին սահմանելու հնարավորություն ընձեռելու առաքելությամբ:

Քննարկվեցին նախաձեռնության նախանշած 15 նպատակներից երեքը: Քննարկումները պետք է պատասխանեին հետևյալ հարցերին.

> ***Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում: [Պատմական պատասխանատվություն]***
>
> ***Ինչ սկզբունքների և գործնական կառույցների վրա կարելի է ձևավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ: [Հայաստան-Սփյուռք միասնականություն]***
>
> ***Որոնք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ռդիները: [Բնակչության աճ]***

2022թ. հունիսին «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությանը միացած աշխարհասփյուռ հայության շրջանում անց կացվել է հարցում **գալիք Համաժողովին քննարկվելիք նպատակները** որոշելու համար: Արդյունքում ընտրվել են 2021թ. Նախաձեռնության կողմից ներկայացված 15 նպատակներից երեքը (տես Բաժին 1.1-ում):

Համաժողովի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում քննարկումներին աջակցելու նպատակով ձևավորվել են **փորձագիտական երեք հանձնախմբեր՝** համախմբելով հայկական փորձագիտական համայնքի 100-ից ավելի ներկայացուցիչների աշխարհի տարբեր երկրներից: 2022թ. օգոստոսից մինչև 2023թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում հանձնախմբերն անցկացրել են ընդհանուր առմամբ 21 հանդիպում, որոնց ընթացքում նրանք սահմանել են համապարփակ հարցեր, տրամադրել խորհրդատվություն Համաժողովի ուսումնասիրման փուլի համար և մշակել են առաջարկներ Համաժողովի մասնակիցների քննարկման համար:

Պատմական պատասխանատվություն փորձագիտական հանձնախումբը կենտրոնացել էր հայկական ժառանգության պահպանման, պատմական իրադարձությունների ըմբռնման և անհատների ու խմբերի պատասխանատվության խթանման վրա: Հայաստան-Սփյուռք միասնականություն հանձնախումբը անդրադարձել է Հայաստանի և Սփյուռքի համայնքների հարաբերություններում առկա մարտահրավերներին՝ նպատակ ունենալով խթանել համագործակցությունն ու փոխօգնությունը: Բնակչության աճ հանձնախումբը կենտրոնացել էր Հայաստանի ժողովրդագրական մարտահրավերների վրա և մշակել էր բնակչության թվի ավելացման և բացասական միտումները մեղմելու ռազմավարություն:

Համաժողովը հիմնված էր «քաղաքացիական ասամբլեա» և «21-րդ դարի քաղաքային ժողով» խորհրդակցական ձևաչափերի վրա:

Համաժողովը ձևավորել էր աշխարհասփյուռ հայության յուրօրինակ մանրակերտը[1] ընտրված թափանցիկ վիճակահանությամբ՝ ապահովելով հասարակության սեռատարիքային ու կրթական խմբերի, ինչպես նաև ըստ բնակության վայրի ներկայացվածությունը:

Պաշտոնական թվերի անորոշության պատճառով սփյուռքահայերի համամասնությունը Հայաստանում բնակվողների նկատմամբ գնահատվել է երկու անգամից ավելի, սակայն մասնակիցները հավասարապես բաշխվել են հայրենիքի (ՀՀ և Արցախ) և Սփյուռքի միջև

[1] Աշխարհում հայերի ժողովրդագրական ցուցանիշների ճշգրիտ որոշման դժվարությունների պատճառով ընտրանքը ներկայացուցչական էր, ոչ թե վիճակագրական:

համամասնության համար: Ավելին, Արցախից մասնակիցների թիվը ավելացված էր՝ հաշվի առնելով ընթացող պայքարը, ինչպես նաև քննարկվող հարցերի վերաբերյալ քննադատական տեսակետ ապահովելու համար:

Մասնակիցներն ընտրվել են թափանցիկ վիճակահանության միջոցով նախապես գրանցված 5,786 հայրենակիցներից:

Գաղափարը կայանում էր նրանում, որ հնարավորության սահմաններում[2] ամբողջ աշխարհից յուրաքանչյուր հայ կարողանա մասնակցել վիճակահանությանը: Դա պահանջում էր համակարգված ջանքեր հնարավորինս շատ հայի իրազեկելու համար՝ օգտագործելով բոլոր միջոցները՝ հեռուստացույցից, համացանցից և արտաքին գովազդից մինչև սոցիալական մեդիա, տեղեկագրեր, անձնական հանդիպումներ, քննարկումներ՝ ներգրավելով հայկական կառույցներ հնարավորին չափ շատ երկրներում:

Վիճակահանությամբ ընտրված մասնակիցներն արհեստավարժ սեղանավարների օգնությամբ և փորձագիտական մշակումների հիման վրա երեք օր քննարկեցին հնարավոր քաղաքականություններն (դիրքորոշումները) ու ծրագրերը, որոնք կարող են լուծել վերը նշված հարցերը:

Համաժողովի յուրաքանչյուր օր եզրափակվում էր դիրքորոշումների և ծրագրային առաջարկությունների քվեարկությամբ՝ սահմանելով վերջիններիս առաջնահերթությունները (քվեարկության գրանցումների ամբողջական ցանկը տես Բաժին 3-ում):

Մասնակիցներին առաջարկվել էր յուրաքանչյուր հարցի համար ընտրել մեկ տարբերակ՝ նշելով իրենց դիրքորոշումը:

Պատմական պատասխանատվության համատեքստում, մասնակիցները նշել են հետևյալ չորս հիմնական ուղղությունները՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը, Հայաստանի պետականության և Արցախի անվտանգության հարցը, հայկական ժառանգության պահպանումը և ճանաչելիության ապահովումը, ինչպես նաև հաջորդ սերունդներին հայ պահելու խնդիրը:

Մասնակիցների մոտ մեկ երրորդը (30,6%) նշել է, որ պետության, համայնքների, հայկական կազմակերպությունների և անհատների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերը մինչև օրս ոչ այդքան արդյունավետ են եղել և անհրաժեշտ են շտկումներ: Նույնքան մասնակիցներ (30,6%) գտնում են, որ չնայած նախկին ջանքերի արդյունավետությանը, այսօր համահայկական ջանքերը ավելի շատ պետք է ուղղել անվտանգային խնդիրների լուծմանը:

Ըստ մասնակիցների 92,7%-ի՝ Արցախի հիմնախնդիրը 10 մլն հայության խնդիրն է: Նրանց մեծամասնությունը (54,84%) նշել է նաև, որ աշխարհասփյուռ հայությունը պետք է միասնաբար ստանձնի Արցախի պատասխանատվությունը և չթողնի խնդիրը միայն պետության և Հայաստանի քաղաքացիների ու, առավել ևս, արցախցիների ուսերին. հայ ազգը չպետք է վախենա հաղթանակներից: Մասնակիցների ևս 29%-ը, համաձայն լինելով վերոհիշյալ պնդման հետ,

[2] Սփյուռքից մասնակիցների ընտրության հետ կապված տեխնիկական խնդիրների պատճառով դա հաջողվել է մասամբ: Մեթոդաբանության վերաբերյալ մանրամասները տես Բաժին 4.2-ում:

ավելացնում է, որ այն բարդ, բանակցային գործընթաց է և Հայաստանի ու Արցախի դիրքերի թուլացման պայմաններում արկածախնդրությունը վտանգավոր է:

Հայապահպանության հարցում մասնակիցների կողմից կարևորվել է հատկապես հայոց լեզուն ու դրա դերը. «Լեզուն իմանալը կարևոր է, բայց լեզուն միայն գործիք է, իսկ լեզվի իմացության պարտադրումը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Հարկավոր են շահագրգռող մեխանիզմներ, համապատասխան միջավայր, որպեսզի հայերեն սովորելը լինի շահավետ և հետաքրքիր: Միայն դրանից հետո մենք կարող ենք ակնկալել, որ կխրախուսենք աշխարհի տարբեր ծայրերից եկած հայ երիտասարդներին սովորել և ընդունել իրենց լեզուն ու մշակույթը»,- նշել է մասնակիցների 72,9%-ը:

Հայաստան-Սփյուռք միասնականության քվեարկության մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը (84%-ից ավելին) կարծում է, որ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում առկա է վստահության ճգնաժամ, բայց, այնուամենայնիվ, 57%-ից ավելին կարծում է, որ ճգնաժամը հաղթահարելի է. մենք ունենք համագործակցության նոր հարթակների կարիք և միասնականությունը կբազմապատկի աշխատանքների արդյունավետությունը:

53%-ը նշել է նաև, որ Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական օրակարգը պետք է լինի Հայաստանի հզորացումը՝ ակնկալիքով, որ հետո հզորացող Հայաստանը շատ ավելի հեշտ կնպաստի հայապահպանությանը Սփյուռքում:

Բնակչության աճի քվեարկության մասնակիցների 74,7%-ի կարծիքով ժողովրդագրական քաղաքականությունը պետք է հռչակել երկրում իրականացվող քաղաքականության գլխավոր ուղղություններից, որին պետք է սպասարկեն մյուս ոլորտների քաղաքականությունները: Մինչ այժմ ժողովրդագրական քաղաքականությունն ընկալվում էր որպես սոցիալական աջակցության գործիք: Մասնակիցների մեծամասնությունը (54,9%) կարծում է, որ բնակչության աճ ապահովելու նպատակով անհրաժեշտ է երեք ուղղությունների՝ ծնելիության աճի, արտագաղթի նվազեցման և ներգաղթի ավելացման միաժամանակյա իրականացում: Ներգաղթի պարագայում առաջնային թիրախ պետք է հանդիսանան արտագաղթած հայաստանցիները (54,6%): Միևնույն ժամանակ մասնակիցների 57,9%-ը կարծում է, որ ներգաղթը կարող է հանգեցնել սոցիալական լարվածության, եթե Հայաստանում պահպանվեն գործազրկության բարձր մակարդակն ու աղքատությունը և լուծված չլինեն տնտեսական զարգացման խնդիրները:

Քվեարկության ընթացքում Համաժողովի մասնակիցները սահմանել են ներկայացված 24 ծրագրային նախաձեռնությունների առաջնահերթությունները.

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական ժառանգության համապարփակ և միասնական տվյալների բազայի ձևավորում
2. Երիտասարդական փոխանակումների կոորդինացիոն խորհրդի ստեղծում
3. «Համահայկական համացանցային բանակ»-ի ստեղծում վիրտուալ տեղեկատվական պատերազմներում առավելության հասնելու համար
4. Պատմական ժառանգության արժեքների թվայնացման արշավի մեկնարկ

5. «Հայոց լեզուն՝ խաղերի միջոցով» ծրագրի մշակում սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզուն և մշակույթը խթանելու նպատակով
6. Ցեղասպանության ճանաչման գործընթացի առցանց կոորդինացիոն խորհրդի ստեղծում
7. Հայկական վիրտուալ համալսարանների ցանցի ձևավորում
8. Հայկական «Հակազրպարտչական լիգա» իրավապաշտպան մեխանիզմի ստեղծում
9. Այլ երկրների կրթական ծրագրերում Հայոց ցեղասպանության մասին նյութերի ներառման արշավի մեկնարկ
10. Աշխարհի հայերի «Արցախ՝ 10մլն» համաժողովի կազմակերպում
11. «Արցախ» համահայկական զարգացման հիմնադրամի ստեղծում

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մասնագիտական համահայկական Համաժողովների կազմակերպում
2. Գործարարների համագործակցային ցանցի ձևավորում
3. Հայաստանի՝ հայոց լեզվի ուսուցիչների՝ Սփյուռքի համայնքներ պարբերական գործուղումների հիմնադրամի/ինստիտուտի ստեղծում
4. «Քաղաքացիական ասամբլեա»-ների կազմակերպում Սփյուռքում
5. «Back to Armenia» համահայկական շարժման մեկնարկ
6. Համահայկական լոբբիստական ցանցի ձևավորում
7. «Հայաստան» ներդրումային ընկերության ստեղծում

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

1. Ներգաղթի կազմակերպման ու քարոզչության գործակալության ստեղծում
2. «Երեխաները՝ նախևառաջ» հանրային շարժման մեկնարկ
3. Վերարտադրողական առողջության ոլորտում հանրային առողջության և առողջ ապրելակերպի իրազեկում-նախաձեռնության մեկնարկ
4. Առցանց համահայկական ծանոթության հարթակի ստեղծում
5. Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների կառավարման աջակցության կառույցների հիմնում
6. ԱՄՆ Կոնգրեսի Սոցիալական ապահովության (Social Security) օրենքում լրացում կատարելու լոբբինգ

Ամբողջ աշխարհում կազմակերպվող խորհրդակցական գործընթացները, ինչպիսիք են

քաղաքացիական ասամբլեաները, միտված են կառավարման բարելավմանը համաշխարհային, ազգային և համայնքային մակարդակներում: Առաջին համահայկական Համաժողովն աննախադեպ էր հատկապես հետևյալ առումներով՝

- Փորձագիտական ազդեցիկ հանձնախմբեր. ձևավորվել են Համաժողովին քննարկվելիք նյութերը մշակելու համար: Հանձնախմբերի անդամներն իրենց ոլորտներում մեծ հեղինակություն ունեցող մասնագետներ են, ինչը բարձրացրել է Համաժողովի հեղինակությունն ու կշիռը:
- Սփյուռքի ընտրանք. աշխարհում առաջին անգամ տեղի է ունեցել քաղաքացիական ասամբլեա Սփյուռքի մասնակցությամբ:
- Համագործակցային ցանց. փորձ է արվել համախմբել ականավոր գործիչների և հեղինակավոր կազմակերպությունների, որոնք կարող են կյանքի կոչել Համաժողովի ընթացքում վերհանված առաջարկները:

Համաժողովի առաջին և վերջին օրերին անցկացվել են հարցումներ՝ գնահատելու գործընթացի ազդեցությունը մասնակիցների վրա:

Հարցման արդյունքները ցույց են տվել, որ մասնակիցները ընդհանուր առմամբ գոհ են եղել Համաժողովի տարբեր հարցերից: Բարձր են գնահատվել խմբերում քննարկման որակն ու ընդհանուր միջավայրը, և մասնակիցները կարծում են, որ նշանակալի ներդրում են ունեցել հավաքական առաջարկություններում: Այնուամենայնիվ, ներկայացվել են նաև բարելավման մի քանի առաջարկներ, հատկապես քննարկումներին հատկացվող ժամանակի, կազմակերպչական հարցերի և տրամադրվող նյութերի վերաբերյալ:

Համաժողովի մասնակիցները Հայաստանի, Սփյուռքի և Արցախի ապագայի համար կարևոր երեք փոխկապակցված նպատակների շուրջ իրենց քննարկումների ժամանակ ստանձնեցին պատմական պատասխանատվության իրենց բաժինը հայության և նրա մշակույթի պահպանման գործում: Նրանք առաջարկեցին նախաձեռնություններ, որոնք կնպաստեն շարունակվող հակամարտության և Հայոց ցեղասպանության մասին իրազեկմանը, ինչպես նաև Արցախի ինքնորոշման իրավունքի պաշտպանությանը:
Ընդգծվեց Հայաստանի և Սփյուռքի միասնականության կարևորությունը հայապահպանության



համատեքստում: Ամբողջ աշխարհում գործարարների համագործակցային ցանցի ձևավորումը լայն աջակցություն ստացավ՝ որպես այդ միասնականությունը ամրապնդող գործոն: Համաժողովի օրակարգում էր նաև Հայաստանում բնակչության նվազման ու ծերացման հիմնախնդիրը: Մասնակիցները համակարծիք էին ժողովրդագրական քաղաքականության առաջնահերթության հարցում և առաջարկեցին բնակչության աճը խթանող նախաձեռնություններ, ինչպիսիք են «Ներգաղթի կազմակերպման ու քարոզչության գործակալության» ստեղծումը և «Երեխաները՝ նախևառաջ» հանրային շարժումը: Բոլորը միակարծիք էին, որ արտագաղթը և սոցիալական լարվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է ապահովել տնտեսության զարգացում ու լուծել գործազրկության խնդիրը: Մասնակիցներն ընդգծեցին նաև բազմաթիվ կենսունակ նախաձեռնությունների միաժամանակ իրականացնելու կարևորությունը:

Համաժողովի ձևաչափով շարունակվելու են քաղաքացիական քննարկումները երկրի և ազգի կենսական մարտահրավերներին դիմակայելու լուծումներ փնտրելու ուղղությամբ: Զուգահեռաբար ջանքերը կենտրոնացած են լինելու ինստիտուցիոնալ գործողությունների իրականացման, Համագործակցային ցանցի ակտիվացման, ինչպես նաև կառավարման մեջ քաղաքացիական ներգրավվածության ավելացման վրա: Համաժողովը ձևավորեց համահայկական միասնականության յուրօրինակ նախադեպ, որն ապացուցեց նորարարական խորհրդատվական փորձի առավելությունը և բացահայտեց հայության հավաքական միտքն ու ներուժը՝ առկա մարտահրավերները հավաքականորեն լուծելու գործում:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Սփյուռք

Սերգեյ Ալավերդյան, Ռուսաստան

Մագդա Աղաբաբյան, Ծրի Լանկա

Ռուզան Ամիրջանյան, Բելգիա

Արմեն Անտինյան, Ռուսաստան

Մելինդա Անտոնյան, Թուրքիա

Զարիկ Ավայանս Իքիաղաջ, Իրան

Էդգար Ավետիսյան, Ռուսաստան

Անահիտ Ավետիսյան, Կանադա

Մարիետ Արաքիլի, ԱՄՆ

Վարսենիկ Արզումանյան, ԱՄՆ

Վահան Արզումանյան, Ռուսաստան

Օկսանա Արությունյան, Ուկրաինա*

Արամ Արքուն, ԱՄՆ

Վահան Բաբախանյան, Ռուսաստան

Ենոք Բաբաջանյան, Վրաստան

Նարե Բալասանյան, Ռուսաստան

Մարգարիտա Բաղդասարյան, ԱՄՆ

Սեբուհ Բաղդոյան, Ավստրիա

Գրիգոր Բեջանյան, Ռուսաստան

Քրիստինե Բիջոյան, Ռուսաստան*

Տաթևիկ Գալոյան, Ռուսաստան

Դանիէլ Գասպարյան, Ռուսաստան

Արիկ Գևորգյան, ԱՄՆ

Աննա Գևորգյան, Ռուսաստան

Հասմիկ Գիժլարյան, Ռուսաստան

Մանուել Գյուրջյան, ԱՄՆ

Մանվել Գրիգորյան, Ֆրանսիա

Նարինե Գրիգորյան, ԱՄՆ

Մերի Գրիգորյան, Ռուսաստան

Կարէն Գօշգարեան, Գերմանիա

Սուսաննա Դալլաքյան, Ռուսաստան

Մարինե Դանիելյան, ԱՄՆ

Դավիթ Դավթյան, Ֆրանսիա

Արի Կևորկ Դեմիրջիօղլու, Թուրքիա

Նազելի Դեմուրչյան, Վրաստան

Ռոզա Զոհրաբյան, Վրաստան

Ջորջս Թաշջյան, Լիբանան

Մարիա Թավրիզյան, Ռուսաստան

Արման Թումանյան, Ռուսաստան

Աշոտ Թունյան, Հունաստան

Եկատերինա Իսախանովա, Ռուսաստան

Օֆելիա Իսպիրյան, Վրաստան

Ռուզան Խաչատուրյան, Ծվեդիա

Խաչատուր Խերումյան, Ռուսաստան

Սևակ Խոդավերդեան, ԱՄՆ

Ֆիլիփ-Ռաֆֆի Կալֆայան, Ֆրանսիա

Լալա Կարապետյան, Ռուսաստան

Ռևիկ Կարապետյան, Վրաստան

Գայանե Կիրբաշյան, Ռուսաստան

Ցորիգ Հակոբյան, Ֆրանսիա

Ալեքս Հաճեան, Արգենտինա

Մարատ Հայրապետյան, Ռուսաստան*

Մխիթար Հարությունյան, Ռուսաստան

Գագիկ Հարությունյան, Ռուսաստան

Համլետ Հովհաննիսյան, Ուկրաինա

Վազգեն Հովհաննիսյան, Մոլդովա

Ռազմիկ Ղազարյան, Ռուսաստան

Նարինէ Ղարաշոր Ազիզեան, ԱՄՆ

Լուսինե Ճաղարյան, ԱՄՆ

Արմինե Մագումյան, Ռուսաստան

Հայկ Մանուկյան, Ռուսաստան

Էդուարդ Մանուկյան, Եգիպտոս

Անի Մանուկյան, Ֆրանսիա

Ռուդոլֆ Մարտիրոսյան, Ռուսաստան

Անի Մետծիակոբեան, Հորդանան

Մարիա Լուսիանա Մինասյան, Արգենտինա

Արսեն Մինասով, Իսպանիա

Էդմոնդ Միրզախանյան, Իրան

Ֆլորա Միրիջանյան, ԱՄՆ

Միեր Մխիթարյան, Ղազախստան

Աննա Մկրտիչյան, Վրաստան

Վարդուհի Մկրտչյան, ԱՄՆ

Լյուդմիլա Մկրտչյան, Ռուսաստան

Կարեն Մուրադյան, Բելառուս

Պետրոս Յորդանյան, Ռուսաստան

Աննա Նալբանդյան, Ռուսաստան

Յուլիա Նալբանդյան, Ռուսաստան

Կարեն Նահապետյան, Ռուսաստան

Նելլի Նավասարդյան, ԱՄՆ

Նարինե Ծահբազյան/Չեխանովիչ, Կանադա

Սուրեն Չոբանյան, ԱՄՆ

Ժիրայր Չոլաքեան, Ֆրանսիա

Աննա Պետրոսյան, Ռուսաստան

Մարինա Պետրոսյան, Ֆրանսիա

Նարեկ Պետրոսյան, Ֆրանսիա

Արթուր Պողոսյան, Ռուսաստան

Արմեն Պողոսյան, ԱՄՆ

Արտաշես Ռևազյան, Ռուսաստան

Տատյանա Սահակյան, Ռուսաստան

Մարիա Սողոյան, Ռուսաստան

Ապետ Վարդիկյան, Ռուսաստան*

Ֆլորա Վիեջերս, ԱՄՆ

Լուսինե Տեր-Դավթյան, Ռուսաստան

Լևոն Տեր-Պետրոսյան, ԱՄՆ

Ռուբեն Տոնոյան, ԱՄՆ

Սվետլանա Փաշայան, Բելառուս

Հուրի Փափազեան, Լիբանան

Մերի Փափազյան, ԱՄՆ

Նոյեմի Փիրոյան, Ֆրանսիա

Վարուժ Փողարյան, Կոլումբիա

Հայաստան

Մարսել Աբրահամյան, Երևան

Սերգեյ Աբրահամյան, Երևան

Արտավազդ Աբրահամյան, Երևան

Մերուժան Ադամյան, Երևան

Արարատ Ալիխանյան, Տավուշ

Տիգրան Աղայան, Կոտայք

Վահագն Ամիրխանյան, Երևան

Ծողիկ Ամիրխանյան, Լոռի

Յակոբ Այնթապլեան, Երևան

Նաիրուհի Անտոնյան, Կոտայք

Էդգար Ասատրյան, Արագածոտն

Լիաննա Ասոյան, Գեղարքունիք

Էրիկ Ավետիսյան, Տավուշ

Արմեն Արզումանյան, Սյունիք

Լիլիա Բեգլարյան, Արարատ

Մերի Բունիաթյան, Գեղարքունիք

Աննա Գաբրիելյան, Երևան*

Լիանա Գալստյան, Արմավիր

Արփիկ Գամոյան, Գեղարքունիք

Իրինա Գարգարյան, Երևան

Նինել Գևորգյան, Արմավիր

Մանուկ Գևորգյան, Երևան

Վարդանուշ Գոլչենկո, Շիրակ

Տիգրան Գրիգորյան, Լոռի

Մարկ Գրիգորյան, Երևան

Մայրանուշ Գրիգորյան, Կոտայք*

Ժաննա Դալյան, Արմավիր

Վլադիմիր Դիլանյան, Երևան

Աննա Եղիազարյան, Երևան

Աննա Զարգարյան, Երևան

Հայկ Զաքարյան, Շիրակ

Ակսել Թևոսյան, Երևան

Ամալյա Թոռունյան, Շիրակ

Ասյա Թորոսյան, Գեղարքունիք

Իգիթ Իգիթյան, Երևան

Լիանա Իսայան, Երևան

Հակոբ Իսպիրյան, Երևան

Մելիք Խաչատրյան, Արագածոտն

Գրիշա Խաչատրյան, Սյունիք

Թամար Խաչատրյան, Սյունիք

Արգամ Խոյեցյան, Լոռի

Անի Հակոբյան, Երևան

Սարգիս Հակոբյան, Վայոց Ձոր

Ծուշանիկ Հակոբյան, Երևան*

Դավիթ Հակոբյան, Երևան

Վարդիթեր Համբարձումյան, Գեղարքունիք

Սուսաննա Հայրապետյան, Երևան

Նարեկ Հայրիյան, Երևան

Հարություն Հարությունյան, Երևան

Ժաննա Հարությունյան, Արմավիր

Կարինե Հարությունյան, Շիրակ

Մարիա Հովումյան, Կոտայք

Արամ Ղազարյան, Արարատ

Ալինա Ղազարյան, Գեղարքունիք

Հրաչուհի Մաթոսյան, Երևան

Ահարոն Մակարյան, Լոռի

Արամ Մանուկյան, Գեղարքունիք

Նանե Մանուկյան, Արագածոտն

Դավիթ Մանուկյան, Արագածոտն

Ռոզա Մատինյան, Լոռի

Անահիտ Մարտիրոսյան, Արմավիր

Անահիտ Մելիքյան, Շիրակ*

Մարինե Մելոյան, Արարատ

Նինա Մինասյան, Երևան

Սուսան Մնացականյան, Երևան

Ժենյա Մովսեսյան, Լոռի

Վարդևար Մովսիսյան, Արմավիր*

Հասմիկ Նահապետյան, Արարատ*

Հեղինե Նավասարդյան, Երևան

Արմինե Նիազյան, Երևան

Վիլյամ Ծահինյան, Արարատ

Հասմիկ Չարխչյան, Արարատ*

Սառա Պետրոսյան, Կոտայք

Հովհաննես Պետրոսյան, Արմավիր*

Ռաֆիկ Ռուշանյան, Երևան

Ցաշա Սահակյան, Կոտայք

Նարինե Սարգսյան, Սյունիք

Սամվել Սարգսյան, Ծիրակ*

Հրաչ Սարգսյան, Արարատ

Լիլիթ Սարգսյան, Երևան

Հրաչյա Սարգսյան, Արմավիր*

Սուսաննա Սարիբեկյան, Ծիրակ

Ռաֆֆի Սեմերջյան, Երևան

Արտեմ Սիմոնյան, Երևան

Զեփյուռ Սիրադեղյան, Տավուշ

Արմինե Վաղրամյան, Տավուշ

Անուշ Վարդանյան, Արարատ*

Սևան Վարթերեսյան, Երևան

Աննա Տեր-Հովհաննիսյան, Երևան

Վահե Օսիպյան, Կոտայք

Արցախ

Լուսինե Այդինյան, Արցախ**

Անի Առաքելյան, Արցախ

Արարատ Առուստամյան, Արցախ**

Գայանե Գաբրիելյան, Արցախ**

Արման Դանիելյան, Արցախ**

Իրա Թամրազյան, Արցախ**

Քաջիկ Խաչատրյան, Արցախ**

Վահագն Հարությունյան, Արցախ

Անուշ Ղուշունց, Արցախ**

Արա Ներսիսյան, Արցախ**

* Չեն կարողացել մասնակցել կամ հրաժարվել են մասնակցությունից։

** Չեն կարողացել մասնակցել Արցախի շրջափակման պատճառով։

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԳԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1 15 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

2021 թ. «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը ներկայացրել է 15 նպատակ՝ որպես առաջիկա 20 տարիների ընթացքում Հայաստանի և համայն հայության բարգավաճումն ապահովելու առաջնահերթություններ (տե՛ս Պատկեր 2-ում): Նպատակների սահմանումը մեկնարկել է 2020թ., երբ նախաձեռնվել են «Կառուցելով ապագան» թեմայով քննարկումներ աշխարհի նշանավոր հայերի մասնակցությամբ: Արցախյան Երկրորդ պատերազմից հետո այդ քննարկումները վերափոխվեցին Հայաստանի և հայության անվտանգության վերաբերյալ խորհրդակցությունների:

Ելնելով այս քննարկումներից, հետագա ուսումնասիրություններից և առկա ու առցանց հանդիպումների շարքից՝ Նախաձեռնող խումբը սահմանել է 10 ընդհանուր նպատակ, որոնք միտված էին Հայաստանի համար ցանկալի ապագա նկարագրելուն: Ձգտելով այս նպատակների ճանաչմանն ու զանգվածային աջակցությանը՝ նախաձեռնությունը դրանք հաստատեց որպես «Հայկական աշխարհի կայուն զարգացման նպատակներ» (ԿՁՆ):

Նպատակները միտված են բոլոր հայերի մտածողությունը փոխելուն, որպեսզի նրանք կենտրոնանան համատեղ ապագայի վրա, այլ ոչ թե կառչեն ցավոտ անցյալից:

10 նպատակների սահմանումից հետո դրանք ներկայացվեցին մոտ 1 000 փորձագետների (ներառյալ կառավարության նախկին և ներկա ներկայացուցիչներ, Սփյուռքի և Եկեղեցու առաջնորդներ) առաջարկներ և դիտարկումներ ստանալու համար: Ավելի քան 300-ն արձագանքեցին կոնկրետ գաղափարներով, որոնք օգնեցին բարելավել նպատակները: Նրանց առաջարկների հիման վրա այդ 10 նպատակները վերջնական տեսքի բերվեցին՝ դառնալով 15 և ավելի լիարժեք արտացոլելով Հայաստանի ապագայի տարբեր տեսանկյունները:

Հաշվի առնելով 15 նպատակները՝ 2021թ. ապրիլի 29-ին կայքի շնորհանդեսով մեկնարկեց «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ»՝ կոչ անելով հայությանը դառնալ նախաձեռնող: 2023թ. մայիսի 1-ի դրությամբ արշավը հաջողությամբ հավաքեց ավելի քան 112 000 նախաձեռնող Հայաստանից և ամբողջ աշխարհից (տե՛ս Պատկեր 1-ում)՝ հետագա երկխոսությունը խթանելու համար:



Պատկեր 1. Նախաձեռնողների աշխարհագրությունը

ՏԵՍԼԱԿԱՆԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄ
1

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2

ՈՒԺԵՂ
ՍՓՅՈՒՌՔ
6

ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՁԱՆՑՈՒԹՅՈՒՆ
10


ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
11

ՈՂՋԱՄԻՏ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
12

ՊԱՏՄԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ
ԴԱՇԻՆՔՆԵՐ
7

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ


ԱՐԴԱՐ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՆՎԱՃԵՑՎԱԾ
ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
13

3

4



5

8

9

14

15

Պատկեր 2: «ՄՊՏԱՍ ՀԱՅԿԻՆՍԸ» նախաձեռնության սահմանած 15 կպատակները. (առաջին Համաժողովին քննարկվածներն ընդգծված են)

1.2 ԵՐԵՔ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

Հաշվի առնելով քննարկման գործընթացը, պարզ էր, որ բոլոր 15 նպատակներին միաժամանակ հասնելուն ձգտելը կփոշիացներ ջանքերը, ուստի առաջին Համաժողովի համար պետք էր ընտրել նպատակներից մի քանիսը: Դրանք ընտրելու համար նախաձեռնողների շրջանում անցկացվեց հարցում, որի ընթացքում նրանց առաջարկվեց որոշել առավել արդիական նպատակները: Առաջին եռյակում էին հետևյալ նպատակները՝ «Պատմական պատասխանատվություն», «Հայաստան-Սփյուռք միասնականություն» և «Բնակչության աճ»:

Առաջին Համաժողովի համար մշակված ձևաչափը փորձարկելու համար 2022 թ. մայիսի 22-ին Արցախում անցկացվեց **Ապագա Հայկականի Արցախյան ֆորումը՝ «Բնակչության աճը Արցախում» խորագրով**: Արցախյան ֆորումի նախապատրաստական աշխատանքների շրջանակում Հայաստանի ժողովրդագրության առաջատար փորձագետների ներառական խումբը մի շարք հանդիպումներ և քննարկումներ անցկացրեց՝ տարբեր սցենարների վրա հիմնված առաջարկությունների նախագծեր մշակելու և ձևակերպելու համար: Դրանք ներկայացվեցին Արցախյան ֆորումի մասնակիցների դիտարկմանը: Վերջիններն իրենց հերթին ընտրեցին այն առաջարկությունները, որոնց պետք է տրվի առաջնահերթություն:

Արցախյան ֆորումը միավորել էր 60-ից ավելի նախաձեռնողների, որոնք ներկայացնում էին արցախյան հասարակության ամբողջ բազմազանությունը: Նրանք հանդիպել էին մայիսին քննարկելու Արցախի ժողովրդագրական խնդիրները: Մասնակիցները կարծիք են հայտնել իրենց առջև ծառացած մարտահրավերների մասին և ուսումնասիրել երկարաժամկետ հեռանկարում խնդիրների հնարավոր կայուն լուծումները: Քննարկումներին ուշադրությամբ հետևում էին Արցախի կառավարության պաշտոնատար անձինք, ինչպես նաև ժողովրդագրության փորձագետներ:.

Ֆորումի մասնակիցներն ընդունել են առաջարկություններ գործողությունների համապարփակ փաթեթի տեսքով, որը «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը ներկայացրել է համապատասխան պետական մարմիններին, հայկական կազմակերպություններին, հաստատություններին, գործարար շրջանակներին հայրենիքում և Սփյուռքում՝ համատեղ համակարգված ջանքերով դրանք իրականացնելու նպատակով:







1.3 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Խորհրդակցական գործընթացները, ինչպիսիք են քաղաքացիական ասամբլեաները, վերջին տասնամյակների ընթացքում մեծ ժողովրդականություն են վայելում ամբողջ աշխարհում[3]: Նրանք համարվում են գործող կառավարման կառույցների համար խնդրահարույց հարցերի լուծմանն ուղղված քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիներին ներգրավելու ձև: Ներկայում առկա են հիմնավոր ապացույցներ[4], որ պատշաճ կերպով իրականացված խորհրդակցական գործընթացները (ա) ձևավորում են հավակնոտ և արդար քաղաքականություն, (բ) ակտիվացնում են քաղաքացիներին, (գ) հաղթահարում են բևեռացումը և (դ) ձևավորում են իրազեկ հանրային քննարկումներ: Եթե Covid-19 համավարակից կարելի է ինչ-որ դաս քաղել, ապա դա այն գաղափարն է, որ հասարակ մարդիկ շատ կարևոր են, նրանք փոխկապակցված մասնակիցներ են մեր առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերների հաղթահարման գործում՝ լինի դա սով, անհավասարություն, հարկադիր միգրացիա, համաճարակներ կամ անվտանգություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ապագա Հայկականի Համաժողովը մշակվել էր որպես հայության առջև ծառացած մարտահրավերների հավաքական լուծման տարբերակ:

Առաջին Համաժողովի հիմնական նպատակներն էին՝

- Գեներացնել գործնական առաջարկներ, որոնք առաջ կմղվեն տարբեր սուբյեկտների կողմից (Համագործակցային ցանց, ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամ, քաղաքական գործիչներ, քաղաքացիներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, բիզնեսներ և այլն),
- Հաջողված օրինակի միջոցով ցուցադրել քաղաքացիների առաջնորդությամբ իրականացվող խորհրդակցական այս նոր գործընթացը, որը թույլ է տալիս հայությանը միասնաբար փորձել իրենց խնդիրների լուծումներ գտնել,
- Տրամադրել ապացույցներ, որ առաջարկներն ունեն ակնհայտ դրական ազդեցություն,
- Քաղել դասեր, որոնք կօգնեն կատարելագործել գործընթացը հետագա աշխատանքների համար,
- Հարթակը դարձնել Հայաստանի կառավարման ենթակառուցվածքների մշտական մաս:

Մենք պետք է համակարգ ստեղծենք, որպեսզի հասկանանք, թե տարբեր երկրներում մեր հայրենակիցներն ինչ լուծումներ են առաջարկում տարբեր հարցերի շուրջ: Գուցե մենք արդեն ունենք այնպիսի լուծում, որը կարող է օգտակար լինել այլ երկրի հայ համայնքի դեպքում:

Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից

[3] OECD (2020) Innovative Citizen Participation and New Democratic Institutions: Catching the Deliberative Wave | OECD iLibrary.

[4] Cherry, C.; Capstick, S.; Demski, C.; Mellier, C.; Stone, L.; Verfuerth, C. Citizens' Climate Assemblies: Understanding public deliberation for climate policy ; Duvic-Paoli, Re-imagining the Making of Climate Law and Policy in Citizens' Assemblies | Transnational Environmental Law | Cambridge Core ; Andrews, N.; Elstub, S.; McVean, S.; Sandie, G. Scotland's Climate Assembly - process, impact and assembly member experience: research report - gov.scot ; Dean, R.; Hoffmann, F.; Geissel, B.; Jung, S.; Wipfler, B. Citizen Deliberation in Germany: Lessons from the 'Bürgerrat Demokratie'; Wells, R.; Howarth, C.; Brand-Correa, L. I. Are citizen juries and assemblies on climate change driving democratic climate policymaking? An exploration of two case studies in the UK | SpringerLink

Ապագա Հայկականի առաջին Համաժողովի աշխատանքները պլանավորվել և իրականացվել են երեք փուլով.

Փուլ 1 - Նախապատրաստում.

Ձևավորվել են երեք փորձագիտական հանձնախմբեր նպատակներից յուրաքանչյուրի զարգացման հնարավոր սցենարներ մշակելու համար: Հիմնվելով դրանց վրա՝ հանձնախմբերի անդամները Համաժողովի քննարկմանը ներկայացրել են առաջարկություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի բազմակողմանի փորձագիտական հիմնավորում:

Փուլ 2 – Համաժողով.

Ընտրված մասնակիցները Համաժողովի ընթացքում ստացել են փորձագիտական հանձնախմբերի կողմից պատրաստված զեկույցները, սցենարները և առաջարկությունները: Բոլոր նիստերն անցկացվել են արհեստավարժ սեղանավարների համակարգմամբ, և բոլոր չընտրված մասնակիցները հնարավորություն են ունեցել մեկնաբանություններ և առաջարկներ անել առցանց հարթակի միջոցով:

Յուրաքանչյուր նպատակի քննարկումից հետո մասնակիցները ձայների մեծամասնությամբ ընդունել են առաջարկություններ: Միասին դրանք կազմում են գործողությունների համապարփակ փաթեթ, որը «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը կներկայացնի Հայաստանի, Արցախի և Սփյուռքի պետական մարմիններին, հայկական կառույցներին ու կազմակերպություններին, գործարար շրջանակներին դրանք համատեղ ջանքերով իրագործելու համար:

3-րդ փուլ - Իրագործում և Համագործակցային ցանց.

Առաջին երկու փուլերին զուգահեռ «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը ձևավորել է Համագործակցային ցանց, որը բաղկացած է հայաստանյան հաստատություններից, մասնավոր հատվածի կազմակերպություններից և քաղաքացիական հասարակությունից, միջազգային գործընկերներից, բարեգործական ասոցիացիաներից և անհատներից, որոնք համատեղ ջանքերով կփորձեն կյանքի կոչել Համաժողովի մասնակիցների ընդունած առաջարկությունները:

1.4 ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովը նախագծված էր որպես սոցիալական նորարարության փորձ[5] «նորարական մարտահրավերի» հետևյալ ուղղորդված հարցով.

«Ինչպե՞ս կարող ենք ստեղծել քաղաքացիների կողմից առաջնորդվող խորհրդակցական նոր գործընթաց, որը թույլ կտա Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայությանը արագ բարձրացնել մինչև 2041թ. մեր առջև ծառացած մարտահրավերները հավաքականորեն լուծելու մեր կարողությունը:»

Այս հարցն ուղղորդեց փորձագիտական հանձնախմբերի նախապատրաստական աշխատանքները: Հանձնախմբերն իրենց հերթին ձևակերպեցին Համաժողովի մասնակիցների քննարկման համար համապարփակ հարցեր՝ քննարկվելիք երեք նպատակներից յուրաքանչյուրի համար.

«Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության, ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:»

«Ինչպե՞ս կարելի է ձևավորել ընդհանուր սկզբունքների և գործնական հենքի վրա հիմնված Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ:»

«Որո՞նք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ուղիները:»

[5] Տես Nesta-ի ուղեցույցը՝ մշակված Եվրոպայի համար.
https://media.nesta.org.uk/documents/nesta_ideo_guide_jan2017.pdf

1.5 «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.5.1 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Համաժողովի հաջողությունը կամ ձախողումը կախված է մինչև 2041թ. հայության առջև ծառացած մարտահրավերների շոշափելի լուծումներ առաջարկելու կարողությունից: Այլ կերպ ասած, այն կգնահատվի իր թողած ազդեցությամբ: Ազդեցության հնարավորությունները առավելագույնի հասցնելու համար մշակվել է փոփոխության տեսություն, որը հիմնված է նորարար մոտեցման և երեք համապարփակ հարցերի վրա՝ օգտագործելով Ասպենի ինստիտուտի տեսության զարգացման մոդելը:

Փոփոխության տեսությունը ներկայացված է Պատկեր 3-ում: Վերջնական արդյունքն է մինչև 2041թ. Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների լուծումը, ինչը հաստատվում է հետևյալ չորս միջանկյալ արդյունքներով և դրանց հետ կապված կանխատեսումներով:



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համաժողովի նախնական փուլում ազդեցիկ մարդկանց ներգրավման համար պետք է ձևավորենք փորձագիտական հանձնախմբերի հուսալի աշխատանքներ, որպեսզի նրանք կարողանան էական ազդեցություն ունենալ դրա վրա և դառնան դրա կրողները:

Որոշ հաստատություններ լուրջ կվերաբերվեն Համաժողովին:

Պետք է ներգրավենք իշխանության մի քանի ներկայացուցիչների առավելագույն արդյունքի հասնելու համար:

Հաստատությունները չեն գործի առաջարկությունների համաձայն, քանի դեռ չկա հասարակության լայն իրազեկում և ճնշում:

Քաղաքացիները կաջակցեն արդյունավետ առաջարկներին:

Քաղաքականության ազդեցության բաց կա. պետական քաղաքականությունը չի երաշխավորում ազդեցություն, ուստի մարդկանց ավելի մեծ խմբի ներգրավումը կարող է օգնել քաղաքականությունը վերածել գործի:

Քաղաքականության մշակման գործում առկա է Սփյուռքի ներգրավման ուղիների պակաս, ինչպես նաև առկա է Սփյուռքի գործունեության և ռեսուրսների մասնատվածություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախապես ձևավորել փորձագիտական հանձնախմբեր և ստանալ նրանց համաձայնությունն ու աջակցությունը հաստատությունների ներգրավման համար:

Աջակցություն Համաժողովի անդամներին մամուլի և տեղեկատվական-քարոզչական գործունեության խթանման գործում:

Իրազեկում և հաղորդակցություն, որն ապահովում է առանցքային ազդեցություն ունեցող անձանց տեղեկացվածությունը Համաժողովի և դրա առաջարկների վերաբերյալ:

ՁԼՄ-ների հետ աշխատանք. տեղեկացնել մամուլին Համաժողովի, դրա առաջարկների և իրենց երկրից կամ շրջանից Համաժողովի ցանկացած մասնակցի մասին:

Համագործակցային ցանցում մարդկանց հավաքագրում:

Համագործակցային ցանցի անդամների ներգրավումը Համաժողովի տարբեր փուլերում, օր.՝ փորձագիտական հանձնախմբերում:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՐՈՅՈՒՆՔՆԵՐ

Ազդեցության 4 եղանակ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օր.՝ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում պետական կառույցների, հայկական ավանդական հաստատությունների (հայկական եկեղեցիներ, Սփյուռքի համահայկական կազմակերպություններ) ձեռնարկած գործողություններ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օր.՝ Համագործակցային ցանցի անդամների կողմից ձեռնարկված գործողություններ, որոնք կարող են ներառել ավանդական հաստատություններին, պետական և քաղաքային գործակալություններին, բարեգործական և բիզնես կառույցներին, դոնոր և զարգացման կազմակերպություններին, քաղաքացիական հասարակությանը, ակադեմիական շրջանակներին և լրատվամիջոցներին:

Համաժողովին առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ամբողջությամբ ներգրավել Սփյուռքը։

Գործընթացի իրականացումը կբարձրացնի Համաժողովի մասնակիցների անձնական և (կամ) հավաքական արդյունավետությունը։ Համաժողովից «ներշնչված» այլ անձինք կկարողանան գործողությունների իրենց մոտիվացիան վերածել գործնական քայլերի։

Քաղաքացիներն ունեն էական իշխանություն և նրանց պետք է վերաբերվել որպես այդպիսիք։

Ամբողջ աշխարհում աճում է կառավարման բարելավման անհրաժեշտության գիտակցումը։

Հաստատությունները (օր.՝ կառավարությունները, բանկերը, քաղաքացիական հասարակությունը, կրոնական կազմակերպությունները) ցանկանում են ներգրավված լինել։

Աջակցություն սեղանավարներին՝ Համաժողովի մասնակիցների և նրանց հավաքական արդյունավետության բարձրացման գործում։

Համաժողովի մասնակիցների և նրանց հավաքական արդյունավետության բարձրացման նպատակով Համաժողովի գործընթացի մշակում։

Հանրային կառավարման բարեփոխումների անհրաժեշտության հարցի բարձրացում փորձագիտական հանձնախմբերի, Համագործակցային ցանցի և ՀԼՄ-ների հետ աշխատանքի միջոցով։

Հիմնական շահագրգիռ կողմերի հետ կապերի ապահովում կառավարման նորարարության անհրաժեշտությունը պարզաբանելու համար։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օր.՝ մարդիկ (հատկապես Համաժողովի հետ առնչվածները), որոնք ցանկանում են քայլեր ձեռնարկել։

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓ

Օր.՝ իրականություն դարձնելով Համաժողովը՝ մենք ցույց ենք տալիս, որ կան որոշումների կայացման այլընտրանքային ուղիներ, և որ դրանք կարող են օգնել մեզ լուծել Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները։


Մինչև 2041թ. մարտահրավերների հասցեագրում
Ինստիտուցիոնալ գործողություններ
Որոշ հաստատություններ լրջորեն կմոտենան Ապագա Հայկականի Համաժողովին
Համագործակցային ցանցի գործողություններ
Քաղաքացիների գործողություններ
Ապագա Հայկականի Համաժողով (Ճանապարհային քարտեզ)
Հաստատությունների վրա ճնշման ավելացում, որպեսզի սկսեն գործել առաջարկների հիման վրա
Հաստատությունների վրա ճնշման ավելացում, որպեսզի սկսեն գործել առաջարկների հիման վրա
Գալիք Համաժողովներ
- քաղաքացիներն են որոշում օրակարգը
- Համաժողովի գործող ձևաչափի փորձարկում
- նոր ինստիտուցիոնալ գործընկերություն
- նոր ռեսուրսներ և աջակցություն
Այլ հաստատություններ ցանկանում են ներգրավվել
Հաստատություններից և մարդկանցից գեներացված ռեսուրսներ և աջակցություն
Առաջարկությունների պաշտոնապես ներկայացում հաստատություններին
Հաստատությունները չեն գործի առաջարկությունների վրա, եթե չլինի հանրային լայն իրազեկվածություն և ճնշում
Համագործակցային ցանցի գործողություններ
Արտաքին կողմեր, որոնք հետաքրքրված են առաջարկություններով
Առաջարկություններ, որոնք առաջ կտանեն ազդեցիկ մարդիկ, սոցիալական շարժումները և քաղաքացիները
Ազդեցությունը առավելագույնին հասցնելու համար անհրաժեշտ է թիրախավորել տարբեր ոլորտների ազդեցիկ մարդկանց



Պատկեր 3. Ապագա Հայկականի Համաժողովի բարձր մակարդակի փոփոխության տեսության դիագրամը

1.5.2 ԵՐԵՔ ԿԱՐԵՎՈՐ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ապագա Հայկականի Համաժողովն իր ազդեցությունը մեծացնելու նպատակով արել է երեք կարևոր նորամուծություն, որոնք նախկինում հազվադեպ կամ երբեք չեն հանդիպել խորհրդակցական նախաձեռնության շրջանակում:

ԱԶԴԵՑԻԿ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐ

Ձևավորվել են փորձագիտական հանձնախմբեր, որոնց կազմում ընդգրկվել են ազդեցիկ գիտնականներ և մասնագետներ: Հանձնախմբերը ձևավորվել են նախապես և Համաժողովից մի քանի ամիս առաջ ինտենսիվորեն աշխատել են դրա բովանդակության ձևավորման ուղղությամբ: Հանձնախմբերի անդամներից շատերը հայտնի և ազդեցիկ անձնավորություններ էին: Համատեղ ջանքերով հանձնախմբերը Համաժողովին հաղորդեցին հեղինակություն և լեգիտիմություն, օգնեցին մամուլի լուսաբանման հարցում և նպաստեցին հանրային աջակցության ձևավորմանը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ԱՄԲՈՂՋ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Որքանով տեղյակ են կազմակերպիչները, սա քաղաքացիական ասամբլեայի ձևաչափով առաջին գործընթացն էր աշխարհում, որին մասնակցում էին նաև Սփյուռքի ներկայացուցիչներ: Դա պահանջում էր զգալի պլանավորում և նորարարություն, ինչպես նկարագրված է վերևում և Բաժին 2.2-ում: Նման ձևաչափի ընտրության նպատակն էր ապահովել, որ Համաժողովը կարողանա ներկայացնել աշխարհասփյուռ հայության իրապես համաձայնեցված միասնական ձայնը: Բայց կարևոր էր նաև զգալիորեն բարձրացնել Համաժողովի ճանաչելիությունը և ստեղծել համախոհների համաշխարհային համայնք: Դրա կարևորությունն ընդգծվեց Համաժողովի ընդունած առաջարկների գլոբալ բնույթի և դրանց իրականացման գործում Սփյուռքի հնարավոր դերի լույսի ներքո:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՑԱՆՑ

Ազդեցիկ անձանց և կազմակերպությունների խմբի ձևավորում, որոնք կարող են նպաստել Ապագա Հայկականի Համաժողովի առաջարկների իրականացմանը: Սա կարող է ներառել առաջարկների ուղղակի ֆինանսավորում կամ դրանց ինքնուրույն իրականացում, եթե դրանք գտնվում են ցանցի անդամի պատասխանատվության կամ հնարավորությունների տիրույթում:

1.5.3 ՀԻՆԳ ՈՒՇԱԳՐԱՎ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Առանձնացվել են հինգ առավել կարևոր բնութագրեր, որոնք հիմք են հանդիսացել ազդեցության ձևավորման համար:

ԲԱՐՁՐ ՈՐԱԿԻ ԹԱՓԱՆՑԻԿ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Լուսաբանումն ու լրատվամիջոցների հետ բարձրակարգ աշխատանքն ի սկզբանե Համաժողովի հիմքն էին: Դա ակնհայտ էր փորձագիտական հանձնախմբերի աշխատանքի, առցանց ներկայության, հավաքագրման, ինչպես նաև հենց Համաժողովի ժամանակ: Ընդհանուր առմամբ, դրա արդյունքը լրատվամիջոցների լուսաբանումն է, որի ծածկույթը մանրամասն նկարագրված է Ապագա Հայկականի Համաժողովի պաշտոնական կայքում[ա]:

ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ՍԵՂԱՆԱՎԱՐՆԵՐ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գլխավորած սեղանավարների խումբը Հայաստանում խորհրդակցական գործընթացներ անցկացնելու երկարամյա փորձ ունի:

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԳՐԱԳԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության խորհրդատուները ու անձնակազմը քաջատեղյակ են հայկական քաղաքական մշակույթին և մշակել են ազդեցության ռազմավարություն՝ հիմնվելով իրենց փորձի վրա: Հիմնվելով իրենց կապերի և նոու-հաուի վրա՝ նրանք մշակել են քաղաքային միջավայրի ազդեցության ռազմավարություն:

ԴԱՐՁՆԵԼ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՄՇՏԱԿԱՆ

Ի սկզբանե Ապագա Հայկականի Համաժողովը քաղաքացիական ենթակառուցվածքների մշտական տարր դարձնելու մտադրությունը ոգևորել է Համաժողովի հետ կապված շատ մարդկանց: Նրանք զգում էին, որ ստեղծում էին մի բան, որն անհրաժեշտ է հայերի առջև ծառացած հիմնական մարտահրավերները լուծելու համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կիրառված ձևաչափը «21-րդ դարի քաղաքային ժողով» և «քաղաքացիական ասամբլեա» մոդելների հիբրիդ էր, որում օգտագործված էին երկուսի ուժեղ կողմերը: Քաղաքացիական ասամբլեայից վերցվել է ընտրության մեթոդաբանությունը և կենտրոնացումը քննարկումների վրա, 21-րդ դարի քաղաքային ժողովներից՝ քաղաքական մեկ շարժման ձևավորումը:

[ա] www.futurearmenian.com/convention/final-report/

1.6 ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ, ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ

Ապագա Հայկականի Համաժողովը կազմակերպվել է **ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամի** կողմից: Այն համակարգում է «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը, որի համահիմնադիրներն են Նուբար Աֆեյանը, Արթուր Ալավերդյանը, Ռիչարդ Ազարնիան և Ռուբեն Վարդանյանը:

Ապագա Հայկականի Համաժողովը ձգտում է ձևավորել անկախ հարթակ, որին յուրաքանչյուր հայ ուրախ կլինի միանալ և զարգացնել Հայաստանի և հայության ապագայի վերաբերյալ հանրային խոսույթը: Այդ նպատակով այն նաև ձգտում է մոդելավորել թափանցիկ և անկախ կառավարման լավագույն փորձը: Կազմակերպչական ծախսերը, ինչպես նաև մասնակիցների ճանապարհածախսն ու գիշերակացի ծախսերը հոգացել է ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամը: Փորձագետների ներգրավումը հանձնախմբերում, այդ թվում հանձնախմբերի ղեկավարների աշխատանքը, եղել է անվարձահատույց: Նախաձեռնությունը կապված չէ քաղաքական որևէ խմբի կամ կազմակերպության հետ:

Մի շարք գործընկերներ աջակցել են Համաժողովի կազմակերպմանն իրենց փորձով, գործընկերային ցանցով և հետադարձ կապով միջոցառման նախապատրաստման և անցկացման բոլոր փուլերում:

Iswe Հիմնադրամ / OSCA. Ռազմավարության և կառավարման վերաբերյալ խորհրդատվություն, բարձր մակարդակի մեթոդաբանություն և գործընթացների մշակում, գործընթացների իրականացման մշտադիտարկում, հաշվետվություն:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ICHD). Մասնակիցների ընտրության մեթոդաբանություն և գործնական աջակցություն:

Breavis Research and Communications: Մասնակիցների վիճակահանության մեթոդաբանություն և գործնական աջակցություն:

Վարդենիսի ավագ դպրոց, Արմաթ լաբորատորիա և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (ԱՏԶՄ). Մասնակիցների ընտրության համակարգչային ծրագրի մշակում:

1.7 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՑԱՆՑ

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության փոփոխությունների տեսության առանցքային տարրը գործընկերային աճող ցանցի ձևավորումն է: Դա հայկական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, բիզնեսի և ՀԿ-ների խումբ է, որի անդամները համախմբվել են Համաժողովի առաջարկությունների իրագործման համար: Հավանական գործընկերներից ոմանք որպես դիտորդներ հետևել են քննարկումներին (տե՛ս Համաժողովի մշտադիտարկման ուղեցույցը Համաժողովի կայքի «Կանոններ և ընթացակարգեր» բաժնում): Հայաստանի կառավարության կամ առանձին պետական/համայնքային հաստատությունների դերը ցանցում քննարկման առարկա է պետական/համայնքային պաշտոնյաների և հենց ցանցի գործընկերների հետ: Ցանկացած կազմակերպություն, որը ցանկանում է միանալ ցանցին, կարող է կապ հաստատել Ապագա Հայկականի թիմի հետ:

Մենք ունենք բազմաթիվ խնդիրներ, որոնցով պետք է զբաղվի պետությունը, բայց փոխարենը դրանցով զբաղվում են անհատները, մարդկանց խմբերը և Սփյուռքը:

Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից

[b]www.futurearmenian.com/convention/rules-and-regulations/

2 ՀԱՍԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Խորհրդակցական մինի-խորհրդի ժամանակակից պրակտիկան այսօր դրսևորվում է բազմաթիվ ձևերով, ինչպիսիք են քաղաքացիների ժողովները[7], քաղաքացիական ասամբլեաները[8] և խորհրդատվական հարցախույզները9, ինչպես նաև ժողովրդավարական նորարարությունների այլ տարատեսակները, որոնք գործում են ամբողջ աշխարհում, ինչպիսիք են քաղաքացիական գագաթնաժողովները10 կամ 21-րդ դարի քաղաքային ժողովները[11]: Տերմինաբանությունը կարող է լինել բավականին յուրահատուկ, բայց ընդհանուր թեմաները սովորաբար վերաբերում են քննարկման հստակ հարցերին, արհեստավարժ կերպով համակարգված քննարկմանը, բոլոր մասնակիցներին ձայնի հավասար հնարավորությամբ ապահովելուն, ժողովրդագրական ներկայացվածությանը և վստահությանը, որ լավ տեղեկացված մարդիկ, ովքեր փորձագետներ չեն հանդիսանում, կարող են ընդհանուր եզրեր գտնել և կշռադատված հավաքական որոշումներ կայացնել: Ինչպես երևում է Աղ. 1-ից, Ապագա Հայկականի Համաժողովը խորհրդակցական նոր մոտեցում է, որը համատեղում է 21-րդ դարի քաղաքային ժողովի և քաղաքացիական ասամբլեայի մոդելների առանձնահատկությունները:

Աղյուսակ. 1. Ապագա Հայկականի Համաժողովի մեթոդաբանական բաղադրիչները

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ[12]	21-ՐԴ ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ[13]
Հստակ նպատակ:	Հաղորդակցություն որոշում կայացնողների հետ. մարդիկ, ովքեր պատասխանատու են այս կամ այն հարցի շուրջ գործողություններ ձեռնարկելու համար, պետք է ներգրավվեն հենց սկզբից և պատրաստ լինեն արձագանքել իրենց լսածին:
Բավականաչափ ժամանակ համապարփակ քննարկման համար (շաբաթների կամ ամիսների ընթացքում մի քանի նստաշրջաններ):	Մասնակիցների բազմազանություն. ժողովրդագրական և քաղաքական բազմազանությունը անհրաժեշտ է համայնքին օգնելու համար արտացոլել իր բոլոր անդամների գաղափարները, իսկ առաջնորդներին՝ համոզվելու, որ արդյունքները վավեր են:
50-250 մասնակից ընտրվում է վիճակահանության/ընտրանքի միջոցով՝ բնակչության ներկայացուցչականության սկզբունքի ապահովման համար:	Տեղեկացված մասնակցություն. չեզոք և մատչելի տեղեկատու նյութերի տրամադրումը հավասար պայմաններ է ապահովում բոլոր մասնակիցների համար:
Ներառական՝ մասնակիցների կարիքներին ու պարտականություններին սատարող:	Համակարգվող քննարկում. քննարկման յուրաքանչյուր սեղանի շուրջ արհեստավարժ սեղանավարները օգնում են մասնակիցներին գտնել դժվար փոխզիջումներ և լուծել վիճելի հարցեր:
Անկախություն կառույցների և ինստիտուտների ազդեցությունից:	Արագ հետադարձ կապ. կրկնվող և գերարդյունավետ քննարկումները հնարավոր են դառնում յուրաքանչյուր սեղանին համակարգիչների առկայության, հնչեցված գաղափարները խմբավորող թիմի ներգրավման, քննարկումների արդյունքներն ըստ առաջնահերթությունների դասակարգելու նպատակով մասնակիցների շրջանում ընթացիկ հարցախույզերի և օրվա աշխատանքի վերաբերյալ անմիջապես պատրաստվող զեկույցների շնորհիվ:
Գործընթացները բաց են ու թափանցիկ:	Գործողությունների վերաբերյալ ընդհանուր առաջնահերթություններ և հստակ առաջարկներ. մանրակրկիտ ծրագրված հանդիպումների շնորհիվ մասնակիցները գտնում են ընդհանուր աջակցության ոլորտներ և գործողությունների ընդհանուր առաջնահերթություններ:
Ուսուցողական քննարկումների խթանում:	Քաղաքացիների շարունակական ներգրավում. քաղաքացիները պետք է շարունակական դեր ունենան ընդհանուր առաջնահերթությունների իրականացման, առաջընթացի գնահատման և հետագա համագործակցության ոլորտների սահմանման գործում:
Տեղեկատվությունը և ուսումնական նյութերը տրամադրվում են ասամբլեայի աշխատանքների մեկնարկին, իսկ փորձագետների գնահատումները ներկայացվում են հետագա փուլերում՝ քննարկման ընթացքում:	
Զուգահեռ ընթացող քննարկումները համակարգվում են արհեստավարժ սեղանավարների կողմից մասնակիցների 5-8 հոգանոց խմբերով:	
Որոշումները կայացվում են հավաքական քննարկումների արդյունքում:	
Անկախ գնահատում:	

[7] Քաղաքացիների ժողովի նկարագրությունը. www.involve.org.uk/resources/methods/citizens-jury

[8] Քաղաքացիական ասամբլեայի նկարագրությունը.: www.involve.org.uk/resources/methods/citizens-assembly

[9] Խորհրդատվական հարցախույզների նկարագրությունը. www.participedia.net/method/147

[10] Քաղաքացիական գագաթնաժողովների նկարագրությունը. www.involve.org.uk/resources/methods/citizens-summits

[11] 21-րդ դարի քաղաքային ժողովների նկարագրությունը. www.participedia.net/method/145

[12] Քաղաքացիական գագաթնաժողովների նկարագրությունը. www.involve.org.uk/resources/knowledge-base/how-do-i-setup-citizens-assembly/standards-citizens-assemblies

[13] 21-րդ դարի քաղաքային ժողովների ստանդարտները. www.involve.org.uk/resources/knowledge-base/how-do-i-setup-citizens-assembly/standards-citizens-assemblies

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ապագա Հայկականի Համաժողովը միավորել և ադապտացրել է գործընթացի այս երկու ձևաչափերի տարրերը՝ մշակելու համար մի գործընթաց, որը կհամապատասխանի նախաձեռնության բյուջեին, հավակնություններին ու մասշտաբին, մասնակիցների ճանապարհածախսին և առհասարակ հայկական օրակարգին:

Դրա բնութագրերը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Հստակ նպատակ
Քննարկման սահմանափակ ժամանակ
Երեք ընդգրկուն թեմա
Վիճակահանությամբ ընտրված 200 մասնակիցներ, որոնք աշխարհասփյուռ հայության ներկայացուցիչներն են
Անկախություն կառավարական կառույցներից
Հիմքը՝ հավաքական համահայկականության ոգին
Թափանցիկ գործընթացներ
Ժամանակային սահմանափակումների շրջանակներում ուսուցողական քննարկումներ
Ազատ ոճի քննարկում՝ արհեստավարժ սեղանավարների մասնակցությամբ
Միջոցառման ընթացքում փորձագիտական հիմնավորում ստացած տեղեկատվական նյութերի տրամադրում
Որոշումներն ընդունվում են հավաքականորեն՝ փորձագիտական գնահատում անցած փաստաթղթերի հիման վրա
Անկախ գնահատում գործընթացի խորհրդատուների կողմից

Մեթոդաբանական տարբերություններից բացի կարևոր է նաև հաշվի առնել հասարակական և քաղաքական միջավայրը, որտեղ իրականացվում է խորհրդակցական գործընթացը, ինչպես նաև, թե ինչպես են կատարվելու դրա առաջարկությունները:

Մասնակիցների ընտրության հարցում Համաժողովի մոտեցումը, օրինակ, հիմնված է ներկայացուցչական ընտրանքի մոտեցման վրա, սակայն միտումնավոր չափից ավելի է ներկայացնում հայաստանցիներին սփյուռքի նկատմամբ և չափից ավելի է ներկայացնում արցախցիներին ինչպես հայաստանցիների, այնպես էլ Սփյուռքի նկատմամբ: Այս երկու որոշումներն էլ ընդունվել են Համաժողովի լեգիտիմությունը բարձրացնելու համար, ինչպես ներկայացվում է Բաժին 2.2.2-ում: Սփյուռքի ընդգրկումն ազգային խորհրդակցական գործընթացում նորություն էր[14]: Հայաստանում առկա մարտահրավերներն ու սփյուռքի մասնակիցների՝ Հայաստան գալու անհրաժեշտությունը որոշակիորեն սահմանափակում էին գործընթացի տևողությունը և ներառականությունը:

Ինչպես ներկայացվում է Բաժին 1.5-ում, Համաժողովը հիմնված է փոփոխության տեսության վրա, որը սահմանում է ազդեցության երեք հիմնական ուղիները՝ խրախուսելով հաստատությունների, քաղաքացիների և Համագործակցային ցանցի անդամների գործողությունները: Սա միտումնավոր փորձ է առավելագույնի հասցնել ազդեցության հնարավորությունները և նվազագույնի հասցնել փոփոխության մեկ եղանակի վրա ապավինելու ռիսկը, ինչպիսին են կառավարության գործողությունները:

[14] Զեկույցի հեղինակները տեղյակ են սփյուռքի համայնքների ներգրավմամբ սակավ խորհրդակցական գործընթացների մասին: Տես օրինակները՝ Բոսնիա և Հերցեգովինա. ամբողջական հոդվածը՝ Diaspora, deliberation and democracy: examining externally-sponsored initiatives for the development of local fora in Bosnia and Herzegovina and Israel: Diasporas and Deliberative Democracy

2.2 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

2.2.1 ՊՈՏԵՆՑԻԱԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Քանի որ քաղաքացիական ասամբլեաներ կազմակերպվում են բնակչության ամենաբազմազան կազմով շատ տարբեր երկրներում, դրանց մասնակիցների ընտրության մեթոդները շատ բազմազան են: Տեսականորեն, այդ մեթոդները պետք է ապահովեն ընտրության գործընթացի համապատասխանությունը պատահականության, ներկայացուցչականության և հավասարության սկզբունքներին: Գործնականում կան բազմաթիվ գործոններ, որոնք կարող են ազդել այդ սկզբունքների իրացման վրա[15]:

Քննարկումներին մասնակցելու համար ներկայացուցչական ընտրանքի մեթոդով և վիճակահանությամբ մասնակիցների ընտրությունը պահանջում է գրանցվողների՝ առնվազն վեցից տասն անգամ ավելի մեծ խմբի ձևավորում, քան կարող է լինել իրական ընտրանքի թիվը: Տեղացի մասնակիցների ընտրանքի հավաքագրումը ամբողջ գործընթացի ամենալավ կանոնակարգված արդյունքներից է, սակայն աշխարհով մեկ տարածված սփյուռքահայ համայնքի ներգրավումը կարելի է դիտարկել որպես այս գործընթացի նոր և լուրջ մարտահրավեր:

Համաժողովն ամբողջ աշխարհում տարածելու համար օգտագործվել է բազմավեկտոր ռազմավարություն, ներառյալ սոցիալական ցանցերը, առցանց տեսանյութերը, լրատվամիջոցները և տեղեկագրերը (նրանց համար, ովքեր արդեն բաժանորդագրվել էին նախաձեռնության հաղորդագրություններին)16: Այնուամենայնիվ, խորհրդակցական գործընթացներին կարևոր է ներգրավել նաև ավելի քիչ քաղաքականացված անձանց, ուստի առաջին համահայկական Համաժողովը և դրա գրանցման գործընթացը ավելի լայն լսարանին ներկայացնելու համար պահանջվել են նաև ավելի անմիջական մոտեցումներ: Այդ նպատակով Հայաստանի մի շարք մարզերում և Սփյուռքի համայնքներում կազմակերպվել են 20-ից ավելի առցանց և առկա հանդիպում-քննարկումներ:

Հայաստանում առկա ձևաչափով հանդիպումների և գրանցման արշավների մեծ մասն ուղղված էր սահմանափակ ինտերնետ հասանելիություն ունեցող անձանց և առցանց գրանցման հետ դժվարություններ ունեցողների ներգրավմանը: Օգտագործելով անմիջական զրույցների միջոցով տեղեկատվության տարածումը՝ արշավը նպատակ ուներ հասնել նոր լսարանի և ներգրավել հասարակության բոլոր շերտերին:

[15] Gąsiorowska (2023), Journal of Deliberative Democracy 19(1), Gąsiorowska | Sortition and its Principles: Evaluation of the Selection Processes of Citizens' Assemblies | Journal of Deliberative Democracy www.delibdemjournal.org/article/id/1310/

[16] Օր.՝ www.youtube.com/watch?v=j2rTmopMW4Y

Սփյուռքում հավաքագրման գործընթացում օգտագործվել է այն փաստը, որ անհատները սովորաբար ամուր կապեր ունեն իրենց հայ համայնքների հետ, որտեղ իրենք տարածում են նոր նախաձեռնությունների և հնարավորությունների մասին տեղեկատվություն տարածող ակտիվ ներկայացուցիչներ կան: Հավաքագրող թիմը կապ է հաստատել մի քանի ներկայացուցիչների հետ՝ խոսելու Համաժողովի համահայկական նշանակության մասին և նրանց խնդրելու Համաժողովը ներկայացնել իրենց համայնքի անդամներին և քաջալերել մասնակցությունը: Դա արդյունավետ մոտեցում էր այն անձանց ներգրավելու համար, ովքեր բաց են թողել սոցիալական ցանցերում իրականացված արշավները:

Համաժողովի ընթացքում իրականացված հարցումներից պարզ է դառնում, որ առավել արդյունավետ են եղել սոցիալական ցանցերում իրականացված արշավները, որոնց հաջորդում են նախաձեռնողներին ուղարկված հաղորդագրությունները և հեռարձակող լրատվամիջոցները (տե՛ս Պատկեր 4-ում): Դրական փաստ է, որ մասնակիցների ընդամենը 10%-ն էր նախկինում արդեն միացել նախաձեռնությանը: Դա ցույց է տալիս, որ հավաքագրման արշավը հաջողել է «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության նախկին ձեռնարկումներում չընդգրկված անձանց ներգրավելու գործում:



Պատկեր 4. Ուղիները, որոնց միջոցով մասնակիցներն առաջին անգամ լսել են «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության և Ապագա Հայկականի Համաժողովի մասին:

2.2.2 ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Քաղաքացիական ասամբլեաների մեթոդաբանության հիմքը, որը մասամբ Ապագա Հայկականի Համաժողովի գործընթացի ոգեշնչման աղբյուրն է, պահանջում է, որ ապահովվի մասնակիցների ժողովրդագրական ներկայացվածությունը՝ լինի դա գյուղ, տարածաշրջան կամ մի ամբողջ երկիր: Դա սովորաբար արվում է մի գործընթացի միջոցով, որը հայտնի է որպես «ընտրանք»: Այն քաղաքացիական վիճակահանության տեսակ է՝ շերտավորված ըստ համապատասխան ժողովրդագրական չափանիշների: Ապագա Հայկականի Համաժողովի դեպքում այս մեթոդաբանությունը պետք է լրամշակվեր, որպեսզի ընդգրկեր ոչ միայն Հայաստանում ապրող հայերին, այլև արցախցիներին[17] և աշխարհասփյուռ հայությանը:

Համաժողովի մասնակիցների՝ ներկայացուցչական ընտրանքի հիման վրա ընտրության ժողովրդագրական չափանիշներն էին՝

Սեռը

Տարիքը

Կրթության մակարդակը

Բնակության վայրը՝ հետևյալ դասակարգմամբ՝

- Հայաստան
  - գյուղական, քաղաքային (չհաշված Երևանը), Երևան
- Արցախ
  - գյուղական, քաղաքային (չհաշված Ստեփանակերտը), Ստեփանակերտ
- Սփյուռք
  - բնակության երկիր

Ըստ էության, սրանք ընտրանքի գործընթացների համար մշակված անվիճելի չափանիշներ են, բայց հայկական իրականությանը համապատասխանելու համար աշխարհագրական չափանիշը որոշակի փոփոխություններ էր պահանջում: Պաշտոնական տվյալների անորոշության պատճառով սփյուռքահայերի մասնաբաժինը Հայաստանում բնակվողների նկատմամբ գնահատվել է երկու անգամից մի փոքր ավելի, սակայն նրանց տրամադրվել է տեղերի միայն 50%-ը՝ Հայաստանից և Արցախից ներկայացվածությունն ուժեղացնելու, ինչպես նաև Սփյուռքի համայնքների ու Հայաստան+Արցախի միջև հավասարակշռություն ապահովելու համար: Բացի այդ, որոշում է կայացվել Արցախի մասնակիցների թիվը հաշվարկում երկու անգամ ավելացնել: Դա թափանցիկ, բայցևայնպես, քաղաքական որոշում էր, որն ընդունվել էր ինչպես արցախահայության պայքարն ընդգծելու, այնպես էլ նրանց ազդեցիկ ձայնով օժտելու համար՝ հաշվի առնելով Արցախի կարևորությունը Հայոց պետականության համար:

Ընտրության մեթոդաբանությունը մշակվել է Ապագա Հայկականի Համաժողովի անձնակազմից անկախ, և հիմնական ժողովրդագրական խմբերից յուրաքանչյուրը ներկայացնող մասնակիցների համամասնությունը մանրամասն ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 2-ում: Ընտրության գործընթացի հիմնավորման և տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության վերաբերյալ ավելի մանրամասն նյութեր ստանալու համար կարող եք այցելել Ապագա Հայկականի Համաժողովի պաշտոնական կայքէջը[9]:

Վերջին մարդահամարի տվյալներով Հայաստանի բնակչությունը կազմում է 2,9 մլն[18]: Հայական Սփյուռքի համար հստակ տվյալներ[19] չկան, սակայն մոտավոր հաշվարկներով այն 4-7 մլն է:

[17] Արցախը չճանաչված անկախ պետություն է Հարավային Կովկասում: Այն ձևավորվել է ԽՍՀՄ-ի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հիման վրա և իր անկախությունն է հռչակել Խորհրդային Միության Սահմանադրության համաձայն՝ դրա գոյության վերջին տարիներին: Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) բնակչությունը 120 000 է, ճնշող մեծամասնությունը էթնիկ հայեր են: Արցախը գերակշռող հայկական էթնիկ կազմ ունի առնվազն վերջին երկու հազար տարիների ընթացքում:

[18] Նոր մարդահամարը ցույց է տվել, որ Հայաստանի բնաչության թիվը 3 միլիոնից պակաս է:

[19] Հայեր - Վիքիպեդիա

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍՆԵՐԸ.

ԽՈՒՄԲ 1. ՍՓՅՈՒՌՔ

Մասնակիցների 50%-ը

ՍԵՌ

Տղամարդ - 49% **Կին** - 51%

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

18-30 - 22%
46-60 - 25%
31-45 - 27%
61+ - 26%

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կամ ցածր - 22%
Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական - 42%
ԲՈՒՀ և ավելի բարձր - 36%

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ

Ռուսաստան - 39%
ԱՄՆ - 20%
Ֆրանսիա - 9%
Վրաստան - 6%
Իրան - 2%
Թուրքիա - 2%
Եվրոպա (բաց. Ֆրանսիայի) - 6%
Նախկին ԽՍՀՄ (բաց. Ռուսաստանի և Վրաստանի) - 6%
Մերձավոր Արևելք (բաց. Թուրքիայի և Իրանի) - 4%
Լատինական Ամերիկա - 3%
Այլ - 3%

ԽՈՒՄԲ 2. ՀԱՅԱՍՏԱՆ

Մասնակիցների 45%-ը

ՍԵՌ

Տղամարդ - 47% **Կին** - 53%

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

18-30 - 22%
46-60 - 23%
31-45 - 31%
61+ - 24%

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կամ ցածր - 55%
Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական - 21%
ԲՈՒՀ և ավելի բարձր - 24%

ՇՐՋԱՆՆԵՐԸ:

Արարատ - 9%
Արմավիր - 9%
Արագածոտն - 4%
Գեղարքունիք - 8%
Կոտայք - 9%
Լոռի - 7%
Ծիրակ - 8%
Սյունիք - 4%
Տավուշ - 4%
Վայոց Ձոր - 1%
Երևան - 37%

որից՝ քաղաքային - 27%
որից՝ գյուղական - 36%

ԽՈՒՄԲ 3. ԱՐՑԱԽ

Մասնակիցների 5%-ը

ՍԵՌ

Տղամարդ - 49% **Կին** - 51%

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

18-30 - 25%
46-60 - 25%
31-45 - 25%
61+ - 25%

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կամ ցածր - 30%
Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական - 30%
ԲՈՒՀ և ավելի բարձր - 40%

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքային (բաց. Ստեփանակերտի) - 25%
Գյուղական - 25%
Ստեփանակերտ - 50%

Աղյուսակ 1. Ժողովրդագրական ընտրանքի չափանիշները և դրանց ներկայացվածության տոկոսները

2.2.3 ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Գրանցված 5786 մասնակիցներից 200-ն Համաժողովին մասնակցելու համար ընտրվել են վիճակահանությամբ[20]: Ընտրության վիճակահանության ալգորիթմը մշակվել և գործարկվել է Վարդենիսի ավագ դպրոցի Արմաթ լաբորատորիայի սաների կողմից: Աշխատանքներն իրականացվել են ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամի և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում:



Պատկեր 5. Համաժողովին գրանցվածների աշխարհագրությունը

[20] Մասնակիցների ընտրության մասին տեսանյութ. Վարդենիսի Արմաթի սաները կմշակեն վիճակահանության ծրագիրը. www.futurearmenian.com/news/moufuturearmenianuate/

Ալգորիթմը նպատակ ուներ տրամադրել մասնակիցների մի խումբ, որը կներկայացներ աշխարհասփյուռ հայությանը (ինչպես նկարագրված է վերևում)։ Այն սահմանեց ժողովրդագրական չափանիշները հետևյալ հերթականությամբ.

1. Մասնակիցների խումբ (Սփյուռք / Հայաստան / Արցախ)
2. Աշխարհագրություն (երկիր / տարածաշրջան)
3. Սեռ
4. Տարիքային խումբ
5. Կրթության մակարդակ

Գրանցվածների ցանկից ալգորիթմը կարողացավ ճշգրիտ ընտրել մասնակիցների ցանկալի բաշխումը յուրաքանչյուր խմբում և համապատասխանեցնել աշխարհագրության և սեռի կատեգորիաները 0,5 տոկոսային կետի ճշգրտությամբ (համապատասխանում է մեկ անձի)՝ ինչպես ընդհանուր առմամբ Համաժողովի, այնպես էլ մասնակիցների յուրաքանչյուր խմբի համար[21]։ Այլ կատեգորիաների համար ցանկալի ընդհանուր տոկոսային ցուցանիշներից շեղումը ներկայացված է Պատկեր 6-ում։



Պատկեր 6. Մասնակիցների ցանկալի բաշխումից շեղումն՝ ըստ տարիքային խմբի և կրթական մակարդակի նախապես սահմանված մասնաբաժիններից։ Կետագծերը ցույց են տալիս ±0,5 տոկոսային միավոր, ինչը հավասար է մեկ անձի։

[21] Հարկ է նշել, որ Լաչինի միջանցքի անսպասելի փակման պատճառով, Արցախում բնակվող մասնակիցները չեն կարողացել ներկա գտնվել։ Մասնակիցները, որոնք սովորաբար բնակվում են Արցախում, սակայն միջանցքի փակման պահին գտնվել են Հայաստանում, կարողացել են մասնակցել (տասից երկուսը)։

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 200 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԵՐՆ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ

ԽՈՒՄԲ 1. ՍՓՅՈՒՌՔ **100 մասնակիցներ**

Ռուսաստան - 39

ԱՄՆ - 20

Ֆրանսիա - 9

Վրաստան - 6

Իրան - 2

Թուրքիա - 2

Ավստրիա - 1
Բելգիա - 1
Գերմանիա - 1
Հունաստան - 1
Իսպանիա - 1
Շվեդիա - 1

Բելառուս - 2
Ղազախստան - 1
Մոլդովա – 1
Ուկրաինա - 2

Եգիպտոս - 1
Հորդանան - 1
Լիբանան – 2

Արգենտինա - 2
Կոլումբիա - 1

Կանադա - 2
Շրի Լանկա - 1

ԽՈՒՄԲ 2. ՀԱՅԱՍՏԱՆ **90 մասնակիցներ**

Արարատ - 8
Արմավիր - 8
Արագածոտն - 4
Գեղարքունիք - 7
Կոտայք - 7
Լոռի - 6
Շիրակ - 7
Սյունիք - 4
Տավուշ - 4
Վայոց Ձոր - 1

Երևան - 34

ԽՈՒՄԲ 3. ԱՐՑԱԽ **10 participants**

Քաղաքային (բաց. Ստեփանակերտի) - 3
Գյուղական - 2
Ստեփանակերտ - 5

Աղյուսակ 2. Համաժողովի 200 մասնակիցների երկրները և դրանց խմբերը

2.2.4 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Ներառականության համար խորհրդակցական գործընթացները պետք է ապահովեն հայրենակիցների մասնակցության հավասար հնարավորություններ՝ անկախ նրանց ժամանակային ծանրաբեռնվածությունից և ունեցած պարտավորություններից, ֆինանսական ռեսուրսներից: Այդ պատճառով Համաժողովի կազմակերպիչները փոխհատուցել են ոչ երևանաբնակ մասնակիցների տրանսպորտային և կեցության ծախսերը:

Բոլոր նյութերը, հարցումները և քվեաթերթիկները հասանելի էին երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Քննարկումների ընթացքում հայերենին կատարելապես չտիրապետողներին տրամադրվել են նաև թարգմանիչներ:

2.3 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2.3.1 ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԴԵՐԸ

Համաժողովի նախապատրաստման շրջանակում «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը հրավիրել է մի շարք առաջատար, իրենց ոլորտներում հեղինակավոր փորձագետների ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից: Նրանց խնդիրն էր Համաժողովի ընթացքում քննարկվելիք համապարփակ հարցերի ձևակերպումը[գ] (Համապարփակ հարցերի ձևակերպման ուղեցույցը տես Համաժողովի կայքի «Կանոններ և ընթացակարգեր» բաժնում) և ուսուցման փուլին աջակցելը՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ու նյութերի պատրաստմանը[դ] մասնակցելով (Փորձագիտական հանձնախմբերի պարտականությունները տես Համաժողովի կայքի «Կանոններ և ընթացակարգեր» բաժնում): Քաղաքացիական ասամբլեաներին ներկայացվող պահանջների համաձայն, այդ հանձնախմբերի աշխատանքը անհրաժեշտ էր մասնակիցներին քննարկվող նպատակների վերաբերյալ բալանսավորված և հիմնավորված փորձագիտական գիտելիքներ տրամադրելու համար: Այս դեպքում դա նախապես ընտրված երեք նպատակներն էին: Փորձագետներին առաջարկվել է մասնակցել համակարգված խմբային աշխատանքներին և հանդիպումներին՝ բաժանված առանձին երեք հանձնախմբերի, որոնք համապատասխանում են Համաժողովի երեք նպատակներին:

Փորձագիտական հանձնախմբերի հիմնական գործառույթներն էին.

- Ուղեցույցների հիման վրա հիմնական հարցերի սահմանում,
- Համաժողովի արդար, հավասարակշռված և համապարփակ աշխատանքին աջակցություն,
- Քննարկվող նպատակների վերաբերյալ փորձագիտական խորհրդատվության տրամադրում,
- Քննարկվող նպատակների վերաբերյալ օժանդակ փաստաթղթերի և գրականության տրամադրում,
- Համաժողովի ընթացքում ելույթ ունենալու համար բանախոսների ընտրության չափանիշների վերաբերյալ խորհրդատվություն,
- Փորձագիտական քննարկման յուրաքանչյուր փուլից հետո հետադարձ կապի և նյութերի տրամադրում,
- Վերջնական սցենարների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում,
- Մասնակցություն փորձնական Համաժողովի իրականացմանը:

2.3.2 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով յուրաքանչյուր փորձագիտական հանձնախմբի թեմատիկ բնութագրերը և քննարկման համար առաջադրված հիմնական խնդիրները՝ նախաձեռնությունը հանձնախմբերի կանոնավոր աշխատանքներին մասնակցելու համար հրավիրել է հարյուրավոր փորձագետների Հայաստանից և Սփյուռքից: Այդ նպատակով հրավերներ են ուղարկվել բազմաթիվ գիտնականների, տեսաբանների, փորձագետների, վերլուծաբանների և ակադեմիական ու սոցիալական ոլորտի այլ մասնագետների: Հրավերների ընդունումից հետո փորձագետներն ընդգրկվել են համապատասխան հանձնախմբում և հնարավորություն ստացել հանձնախմբերի աշխատանքներին մասնակցելու համար առաջարկել այլ փորձագետների:

Երեք հանձնախմբերը ձևավորվել են 2022 թվականի օգոստոսին: Դրանց աշխատանքները համակարգել են հայտնի և հարգարժան հայեր՝

- Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան (Պատմական պատասխանատվություն)
- Արամ Աբրահամյան (Հայաստան-Սփյուռք միասնականություն)
- Արմինե Հովհաննիսյան (Բնակչության աճ)

Յուրաքանչյուր ղեկավարի դերն էր համակարգել փորձագիտական քննարկումները և Համաժողովի ընթացքում հանդես գալ որպես բանախոս: Քննարկման ամբողջ ընթացքում բոլոր ղեկավարները անկողմնակալ

[գ] https://futurearmenian.com/convention/rules-and-regulations/

[դ] https://futurearmenian.com/convention/rules-and-regulations/

էին և չէին փորձում ազդել քննարկումների վրա՝ դրանք կենտրոնացնելով հիմնական հարցադրումների շուրջ: Քննարկման արդար և բաց բնույթը ապահովելու համար ղեկավարները յուրաքանչյուր փորձագետին խոսելու հավասար հնարավորություն են տվել և հանձնախմբի բոլոր փորձագետներին տրամադրել հավաստի և հավասարակշռված տեղեկատվություն առաջարկվող թեմայի կամ հարցի վերաբերյալ:

2.3.3 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Վեց ամսվա ընթացքում առկա, առցանց և հիբրիդային հանդիպումների ձևաչափերով երեք փորձագիտական հանձնախմբերի ավելի քան 100 ներկայացուցիչներ քննարկել և մշակել են նպատակների, ռազմավարական ուղղությունների, առաջարկությունների նախագծերի և ծրագրերի իրականացման հնարավոր սցենարներ՝ դրանցից յուրաքանչյուրի համար տրամադրելով համապատասխան փորձագիտական հիմնավորումներ: Երեք նպատակներից յուրաքանչյուրի համար փորձագետները նախանշեցին մի քանի «դիտանկյուններ», որոնք օգնեցին ամբողջ նպատակը բաժանել հատուկ հարցերի և խնդրահարույց ոլորտների: Մի քանի ամիս շարունակ Հանձնախմբի անդամները փաստաթղթավորում էին առկա իրավիճակը յուրաքանչյուր դիտանկյունից՝ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հավաքելով փաստական տվյալներ և ձևակերպելով հիմնական խնդիրները:

Խնդիրների շրջանակը սահմանելուց հետո հանձնախմբերը նախանշել են դրանց լուծման ուղիները՝ այդպիսով կազմելով քննարկման հարցերի «մենյու»-ն և գործնական առաջարկները, որոնք կուղղորդեն Համաժողովի վերջնական քննարկումները: Բազմաթիվ հակադիր կարծիքներ հարստացրել են քննարկումները, և դրանք բոլորը արձանագրվել են կազմակերպիչների կողմից այդ նյութերի նախնական տարբերակը ստեղծելու համար:

Ավելի քան երկու տասնյակ խորհրդակցություններից հետո նյութերի նախագծերը ներկայացվել են փորձագիտական հանձնախմբերի 2023 թ. փետրվարին կայացած ամփոփիչ հանդիպմանը: Հանդիպմանը երեք հանձնախմբերը քննարկում էին բոլոր նպատակները: Նրանք քննարկեցին կոնկրետ քաղաքականություններ և առաջարկեցին հնարավոր նախաձեռնություններ, ծրագրեր և լուծումներ յուրաքանչյուր դիտանկյանը համապատասխանող առաջարկությունների տեսքով: Հանդիպմանը հնչել էին 300-ից ավելի դիտարկումներ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել Համաժողովին ներկայացված վերջնական նյութերում:

Համաժողովի քննարկմանը ներկայացված դիտանկյունների վերջնական տարբերակները ներկայացված են Հավելված 2-ում:

Փորձագիտական հանձնախմբերի և նրանց անդամների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Հավելված 1-ը, ինչպես նաև Համաժողովի կայքէջը: Յուրաքանչյուր հանձնախմբի աշխատանքի մանրամասները նկարագրված են ստորև:

Փորձագիտական հանձնախմբերի և նրանց անդամների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Հավելված 1-ը, ինչպես նաև Համաժողովի կայքէջը: Յուրաքանչյուր հանձնախմբի աշխատանքի մանրամասները նկարագրված են ստորև:

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատմական պատասխանատվություն փորձագիտական հանձնախումբը հիմնականում կենտրոնացած էր հայ ժողովրդի պատմական պատասխանատվության գաղափարական և գործնական խնդիրների վրա: Հանձնախմբի առաջնային նպատակներից էր միջսերնդային պատասխանատվության ապահովման հնարավոր ուղիների սահմանումը: Սա ներառում էր ռազմավարությունների և գործողությունների շրջանակների մշակում, որոնք կարող են օգտագործվել հայկական ժառանգությունը, մշակույթը և պատմական գիտելիքները պահպանելու համար և օգնել, որ ներկա սերունդները հասկանան թե՛ բարդ պատմական իրադարձությունները, որոնք ձևավորել են իրենց հասարակությունը, և թե՛ ապագա սերունդների և իրադարձությունների վրա դրանց հնարավոր ազդեցությունը: Հանձնախումբն աշխատել է հիմնական կրթական, ինստիտուցիոնալ և նախագծահեն գործողությունները ձևակերպելու ուղղությամբ, որոնք կարող են նպաստել հայերի շրջանում պատմական պատասխանատվության ավելի լավ ըմբռնմանը, գտնել բազմաթիվ պատմական իրադարձությունների նկատմամբ պատասխանատվության և ավանդական վերաբերմունքի վերաիմաստավորման նոր ուղիներ և խթանել հաշվետվողականության և պատասխանատվության զգացումն անհատների և խմբերի շրջանում:

Վեց հանդիպումների ընթացքում (հինգ առցանց և մեկը առկա) հանձնախումբն անդրադարձել է բազմաթիվ թեմաների և քննարկել այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- համայն հայությանն ավելի նախաձեռնող դարձնելը և համահայկական մտածելակերպ ձևավորելը,
- պատմական պատասխանատվության համար պատասխանատու սուբյեկտի որոշումը և պարզաբանումը,
- սփյուռքահայերի և Հայաստանի հայերի միջև ընդհանրությունների ուրվագծումը և ի մի բերումը,
- Հայոց ցեղասպանության համար համայն հայության պատմական պատասխանատվությունը և ապագայում նման հանցագործությունները կանխելու հնարավոր մեխանիզմները,
- Հայոց ցեղասպանության իրավական, լոբբիստական, գիտական, կրթական, քաղաքական, արտաքին քաղաքական, հաղորդակցական և պատումային հարցերին առնչվող հեռանկարները,
- հայկական ժառանգության պահպանման ու ճանաչման, հայության ազգային ինքնությունը պահպանելու և այն հաջորդ սերունդներին փոխանցելու պատասխանատվության ապահովումը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստան-Սփյուռք միասնականության փորձագիտական հանձնախումբն անդրադարձել է Հայաստանի և սփյուռքահայ համայնքների միջև հարաբերությունների վրա ազդող մարտահրավերներին և խնդիրներին: Հանձնախմբի առաջնահերթ նպատակն էր բացահայտել այս խնդիրները և մշակել դրանց լուծման ռազմավարություն՝ նպատակ ունենալով խթանել կայուն համագործակցությունը և փոխօգնությունը Հայաստանի և Սփյուռքի միջև:

Այս նպատակին հասնելու համար հանձնախումբը դիտարկել է բազմաթիվ առկա հետազոտություններ և վերլուծություններ ավելի խորը պատկերացում կազմելու համար այն գործոնների մասին, որոնք նպաստում են Հայաստանի և Սփյուռքի միջև լարվածությանը և թյուրըմբռնմանը: Սա ներառում էր պատմական, քաղաքական և մշակութային այն գործոնների ուսումնասիրություն, որոնք կարող են ազդել երկու խմբերի միջև հարաբերությունների վրա, ինչպես նաև բացահայտել արդյունավետ հաղորդակցության և համագործակցության ոլորտում առկա գործնական մարտահրավերներն ու խոչընդոտները:

Այս խնդիրները բացահայտելուց հետո, հետագա հանդիպումների ընթացքում հանձնախումբն աշխատեց հստակ լուծումներ մշակելու ուղղությամբ, որոնք կարող են նպաստել Հայաստանի և Սփյուռքի համայնքների միջև ավելի համագործակցային և միմյանց աջակցող հարաբերությունների զարգացմանը: Այս լուծումները ներառում էին քաղաքականության փոփոխություններ, համագործակցության նոր մեխանիզմներ և ոլորտներ, ներդրումներ հաղորդակցության և իրազեկման ոլորտներում, ինչպես նաև նոր նախաձեռնությունների, համահայկական շարժումների և ծրագրերի մշակում, որոնք ուղղված են կոնկրետ մտահոգությունների և մարտահրավերների հաղթահարմանը:

Յոթ հանդիպումից հետո (երեք առցանց, երեք առկա և մեկ հիբրիդային) հանձնախմբին հաջողվեց անդրադառնալ բազմաթիվ կարևոր խնդիրների և հարցերի, ինչպիսիք են.

- Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ներկա վիճակն ու ապագայի հեռանկարները,
- Հայաստան-Սփյուռք հարաբերություններում միասնականության ապահովման հնարավորությունը և դրան հասնելու ուղիներն ու միջոցները,
- Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցության տարբերակները,
- Հայաստան-Սփյուռք հարաբերություններում փոխադարձ պատասխանատվությունն ու պարտականությունների հստակեցումը,
- Հայաստանի ԲՈՒՀ-երում սփյուռքահայերի համար ինտեգրված կրթության ապահովումը և կրթական ոլորտի համատեղ զարգացման հնարավորությունները,
- ակադեմիական շրջանակներում հնարավոր ցանցերի ստեղծումը,
- Հայաստանի և Սփյուռքի միջև առկա վստահության խնդիրների վերացումը և համագործակցության հնարավորությունների ընդլայնումը,
- Հայաստանի և Սփյուռքի միջև համագործակցության հաջող մոդելների ուսումնասիրումը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

Բնակչության աճ փորձագիտական հանձնախմբի աշխատանքը նվիրված էր Հայաստանի Հանրապետության առջև ծառացած ժողովրդագրական մարտահրավերների ուսումնասիրությանը և լուծմանը: Հանձնախմբի հիմնական նպատակն էր մշակել ռազմավարություններ և քաղաքականություն, որոնք կարող են օգնել Հայաստանի բնակչության աճին և փոքրացնել բնակչության նվազման բացասական ազդեցությունը:

Հանդիպումների ընթացքում հանձնախմբի բոլոր փորձագետները խորը քննարկումներ ու վերլուծություններ են իրականացրել Հայաստանում բնակչության աճի և միգրացիայի վիճակի վերաբերյալ: Սա ներառում էր այնպիսի գործոնների ուսումնասիրություն, ինչպիսիք են ծնելիության մակարդակը, մահացության մակարդակը, վերարտադրողական առողջության մակարդակը և միգրացիայի օրինաչափությունները՝ Հայաստանի բնակչության, ինչպես նաև աշխարհասփյուռ հայության առջև ծառացած մարտահրավերների համապարփակ պատկերացում կազմելու համար:

Հանձնախումբն աշխատել է այս մարտահրավերների հնարավոր լուծումները բացահայտելու ուղղությամբ: Սա ներառում էր բնակչության աճը խթանելուն ուղղված քաղաքականության և նախաձեռնությունների մշակումը, հանրային առողջության կարևորության մասին իրազեկվածության բարձրացումը և օտարերկրյա կառավարությունների լոբբինգը Սփյուռքում հայերի անվտանգությունն ու ժողովրդագրական կայունությունն ապահովելու համար: Հանձնախմբի առաջարկությունները ներառում էին նաև ընտանիքի աջակցության ծրագրեր, քաղաքականություններ և նախաձեռնություններ, որոնք խրախուսում են երիտասարդ ընտանիքներին ունենալ երեխաներ: Վերջապես, հանձնախումբն ուսումնասիրեց միգրացիայի բացասական հետևանքները (ինչպիսիք են ուղեղների արտահոսքը կամ հմուտ աշխատողների կորուստը) նվազեցնելու ուղիները, ինչպես նաև ավելի վերահսկելի միգրացիայի հնարավոր դրական արդյունքները:

Հանձնախումբն անցկացրել է վեց հանդիպում (երկուսը առցանց, երկուսն առկա և երկուսը՝ հիբրիդային), որոնցում փորձագետներն անդրադարձել են ժողովրդագրության վերաբերյալ այնպիսի խնդիրների և հարցերի, ինչպիսիք են.

- Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը, մոտ և հեռավոր ապագայում ներկա ժողովրդագրական պատկերը փոխելու հնարավոր սցենարները,
- պետական և հասարակական մակարդակներում ժողովրդագրության վերաբերյալ միասնական նպատակի ձևակերպման անհրաժեշտությունը,
- մարդկանց հայրենիք հայրենադարձելու և Հայաստանում պահելու հնարավորությունները,
- Սփյուռքում ծնված և մեծացած հայերի մեջ հայկական ինքնության ձևավորման և հայապահպանության կարևորությունը,
- ներգաղթը խթանելու և արտագաղթը նվազեցնելու համար անվտանգային խնդիրների լուծման անհրաժեշտությունը,
- Հայաստանից արտագաղթած հայերի վերադարձի մեխանիզմներն ու ծրագրերը, Սփյուռքի ներկայացուցիչների ներգաղթը դյուրացնելու հնարավորությունները, ինչպես նաև օտարերկրացիների ներգաղթը,
- կանանց և միայնակ մայրերի հանրային դերի մեծացմանը նպաստող ծրագրային և ռազմավարական առաջարկությունները,
- ժողովրդագրական խնդիրների լուծման համար պատասխանատու հաստատություններն ու կառույցները,
- ծնելիության մակարդակի, կյանքի տևողության, մահացության, բնակչության ծերացման, առողջապահության, ամուսնությունների և ամուսնալուծությունների, զբաղվածության, երիտասարդ ընտանիքների աջակցության անհրաժեշտության, կրթական հնարավորությունների ապահովման և բնակչության բնական աճի վերաբերյալ այլ խնդիրներ և հարցեր:

2.4 ՔՆՆԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.4.1 ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՋԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

ՍԵՂԱՆԱՎԱՐՆԵՐ

Քննարկման վարումը (կառավարումը) ցանկացած նման գործընթացի հաջողության բանալին է: Սեղանավարները հետևում են, որ քննարկումները մնան թեմայի շրջանակում և մնան ժամանակային սահմանաչափերում՝ միաժամանակ աջակցելով ուսուցմանը և ապահովելով, որ բոլոր մասնակիցների բազմազան մտքերը հավասարապես լսվեն: Սեղանավարները պետք է՝

- կենտրոնան գործընթացի վրա, այլ ոչ թե քննարկման առարկայի,
- հետևեն ժամանակային սահմանաչափերին,
- պահեն քննարկումը ձևակերպված հարցի շրջանակում,
- ապահովեն արդյունավետ հաղորդակցություն մասնակիցների միջև,
- հարգեն ինչպես խմբային, այնպես էլ անհատական հետաքրքրությունները,
- օգնեն մասնակիցներին զգալ, որ իրենց ձայնը կարևոր է,
- թույլ չտան դիտորդների միջամտությունը կամ այլ կերպ ազդեցությունը քննարկումների վրա,
- աջակցեն կազմակերպչական հարցերում, օրինակ, քվեարկության անցկացման ընթացքում:

Համաժողովի սեղանավարներից շատերը «21-րդ դարի քաղաքային ժողովներ»-ի կամ քաղաքացիական գագաթնաժողովների փորձառու մասնակիցներ էին: Նրանք անցել էին երկօրյա դասընթաց քաղաքացիական ասամբլեայի մեթոդաբանության, քննարկման (ի տարբերություն երկխոսության և բանավեճի) և փափուկ հմտությունների վերաբերյալ, ինչպիսիք են ակտիվ ունկնդրումը, արդյունավետ հաղորդակցությունը, ոչ վերբալ հաղորդակցությունը, հարցումը, եզրակացությունների աստիճանակարգումը և ինչպես վարվել կողմնակալ ընկալումների հետ: Բացի այդ, նրանց համապարփակ կերպով ներկայացվել են հարցերը և սցենարները՝ Համաժողովի քննարկումներին և ձևաչափին նախապատրաստելու համար:

ԳՐԱՌՈՂՆԵՐ

Քննարկման գործընթացի արդյունքները միայն քվեարկություններն ու առաջարկությունները չեն: Մասնակիցների կողմից արտահայտված յուրաքանչյուր միտք ներկայացնում էր հավաքական ըմբռնման մի մաս, ուստի դրանց ճշգրիտ գրառումը առաջնային նշանակություն ուներ: Այսպիսով, գրառողները կարևոր դեր ունեին մասնակիցների մտքերն ու կարծիքները հնարավորինս ճշգրիտ արձանագրելու գործում:

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ

Գրառողների իրականացրած արձանագրությունները բավականին ծավալուն են, քանի որ ներառում են 200 մասնակիցների կարծիքները, պահանջում են որոշակի կառավարում, որպեսզի հնարավոր լինի օգտագործել հետագայում: Ցանկացած քննարկման գործընթացում համակարգման գործառույթն իրականացվում է անձի կողմից, որը կարող է կոչվել «կառավարիչ», «խմբագիր» կամ այլ նմանատիպ ձևով: Որոշ մեթոդաբանություններ, ինչպիսիք են 21-րդ դարի քաղաքային ժողովները, պահանջում են արագ ստուգել այս նյութը և այն ցուցադրել էկրանին, որպեսզի բոլորը տեսնեն, իսկ մյուսներում, ինչպիսիք են քաղաքացիական ասամբլեաները, կարող են ավելի մանրամասն ընդհանրացնել մասնակիցների կոնսենսուսը և կարծիքների անհամապատասխանությունները նիստերի միջև հետագա քննարկման համար: Այս առումով Համաժողովն անցկացվում էր 21-րդ դարի քաղաքային հանդիպումների մոդելի հիման վրա, որի կառավարման թիմը ապահովում էր, որ հայտարարությունների և մեջբերումների շարունակական հոսքը տեսանելի լինի մեծ էկրանին բոլոր մասնակիցների համար:

> *Մենք պետք է շարունակենք կրթվել. կրթությունը մեզ հստակ ունակություններ կընձեռի, որպեսզի կարողանանք ճիշտ ու արագ արձագանքել փոխվող իրավիճակին և առաջ տանել մեր շահերը:*
>
> *Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից*

2.4.2 ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ապագա Հայկականի Համաժողովի քննարկումները տևել են երեք օր՝ յուրաքանչյուր նպատակին մեկական օր: Ժամանելուն պես մասնակիցները նստել են սեղանների շուրջ իրենց մինչև ինը հայրենակիցների հետ, և նրանց տրամադրվել են ուսումնասիրման տպագիր նյութեր՝ հիմնված փորձագիտական հանձնախմբերի կողմից մշակված տարբեր դիտանկյունների վրա (տես Բաժին 2.3.3-ում), ինչպես նաև քննարկվող թեմայի վերաբերյալ գործնական հարցերը նկարագրող այլ օժանդակ տվյալներ: Մասնակիցների տեղերը յուրաքանչյուր օր փոխվում էին՝ ապահովելով սեղանի շուրջ բազմազանություն, ըստ տարիքի, սեռի և բնակության երկրի: Յուրաքանչյուր օրվա ձևաչափը նույնն էր.

- Բացման խոսք և նախորդ օրվա քվեարկության արդյունքների ներկայացում (եթե առկա է),
- Ուսումնասիրման փուլ, որը բաղկացած էր համապատասխան փորձագիտական հանձնախմբի ղեկավարի 20 րոպեանոց բանավոր ներկայացումից, որին հաջորդում էր 20 րոպեանոց տեսանյութ՝ հիմնված մասնակիցների առջև դրված նյութերի վրա,
- Համակարգվող քննարկումներ, որոնք ընդհատվում էին ճաշի և սուրճի ընդմիջումներով,
- Քվեարկություն:

Քննարկումը վարում էին սեղանավարները, որոնք օգնում էին մասնակիցներին ներգրավված մնալ ներկայացված նյութի շրջանակներում՝ դրանք օգտագործելով որպես քննարկման հիմք: Քննարկումները չունեին ինչ-որ նախագծված կառուցվածք, բայց սեղանավարները պետք է մասնակիցներին ուղղորդեին յուրաքանչյուր դիտանկյան եռափուլ քննարկումներին.

Փուլ 1. ներկա իրականություն, նկատառումներ և խնդիրներ,

Փուլ 2. պոտենցիալ քաղաքականություն, ռազմավարական ուղղություն,

Փուլ 3. ցանկալի սցենարներ, գործնական նախաձեռնություններ և ծրագրեր:

Մասնակիցները խրախուսվում էին բացահայտել այն ընդհանուր արժեքները, որոնք թույլ կտան իրականացնել արդյունավետ քննարկումներ: Սեղանավարներն այս կերպ հնարավորություն էին ստանում արձանագրել յուրաքանչյուր սեղանի քննարկմանը բնորոշ տարակարծությունները և դրանք ուղղորդել դեպի ավելի կառուցողական և պրակտիկ հարցադրումներ՝ ի նպաստ առաջարկվող դիտանկյունների քննարկմանը:

21-րդ դարի քաղաքային ժողովների մեթոդաբանությանն ու արժեքներին համապատասխան, յուրաքանչյուր սեղանի վրա գրառողները գրանցում էին մասնակիցների մտքերը ցանցին միացված դյուրակիր համակարգչի միջոցով: Դրանք իրական ժամանակում համադրվում էին կառավարիչների թիմի կողմից, ովքեր դրանք տեղադրում էին մեծ էկրանին, որը տեսանելի էր ամբողջ դահլիճում: Համաժողովի երեք օրերի ընթացքում մասնակիցներից ընդհանուր առմամբ հավաքվել է 3647 մեկնաբանություն:

2.4.3 ԳԱԼՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Քննարկման գործընթացի ընդհանուր արդյունքը առաջարկություններն են, որոնք փոխանցվում են որոշում կայացնող մարմնին, ինչպիսիք են կառավարությունը, խորհրդարանը, տեղական իշխանությունը:

Համաժողովի սեղմ ժամկետների և հագեցած բովանդակության պատճառով փորձագիտական հանձնախմբերի կողմից նախապես պատրաստվել են քվեարկությանը դրվելիք դիրքորոշումներն ու նախաձեռնությունները: Յուրաքանչյուր օր յուրաքանչյուր սեղանից ընտրված մասնակիցները կարճ ժամանակով հանդիպում էին, որպեսզի վերանայեն այս նախագծերը՝ մտապահելով իրենց սեղանի22 քննարկումները: Նրանք միասին կարող էին առաջարկել փոփոխություններ քվեաթերթիկներում, որոնք Հաշվիչ/վերահսկիչ հանձնախմբի կողմից հաստատվելուց հետո կազմակերպչական թիմը օրվա վերջում կներկայացներ քվեարկության:

Համաժողովի մասնակիցների քվեարկությանն էին ներկայացվել երկու տեսակի հարցեր՝ ծրագրային նախաձեռնություններն ու որոշ դիրքորոշումներ, որոնք նախատեսված էին ավելի լայն իմաստով նպատակների վերաբերյալ մասնակիցների հավաքական տեսակետը որոշելու համար:

Համաժողովի սեղմ ժամկետների և հագեցած բովանդակության պատճառով փորձագիտական հանձնախմբերի կողմից նախապես պատրաստվել են քվեարկությանը դրվելիք դիրքորոշումներն ու նախաձեռնությունները: Յուրաքանչյուր օր յուրաքանչյուր սեղանից ընտրված մասնակիցները կարճ ժամանակով հանդիպում էին, որպեսզի վերանայեն այս նախագծերը՝ մտապահելով իրենց սեղանի22 քննարկումները: Նրանք միասին կարող էին առաջարկել փոփոխություններ քվեաթերթիկներում, որոնք Հաշվիչ/վերահսկիչ հանձնախմբի կողմից հաստատվելուց հետո կազմակերպչական թիմը օրվա վերջում կներկայացներ քվեարկության:

Քվեարկության արդյունքների ամբողջական արձանագրությունը տես Բաժին 3-ում:

[22] Հայտնի է որպես Հաշվիչ/վերահսկիչ հանձնախումբ: Մանրամասները տես Բաժին 3.1-ում:

2.5 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Համաժողովի մասնակիցների վրա մասնակցության ազդեցությունը գնահատելու նպատակով քննարկումների առաջին և վերջին օրը անցկացվել են հարցումներ: Դրանց նպատակն է եղել վեր հանել մասնակիցների տեսակետները Համաժողովի քննարկումների և ընդհանրապես հասարակական-քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, կարելի էր նկատել, որ տարբեր հայացքներ, հետաքրքրություններ և ժողովրդագրական բնորոշումներ ունեցող մարդիկ ընդհանուր վերաբերմունք և մտահոգություն ունեին Հայաստանի և, մասնավորապես, Համաժողովին քննարկվող նպատակների վերաբերյալ:

2.5.1 ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ի սկզբանե մասնակիցներին առաջարկվել է գնահատել իրենց հետաքրքրությունը, մտահոգությունները, ընկալման նկատմամբ վստահությունը և Համաժողովի յուրաքանչյուր թեմայի ընդհանուր արդիականությունը:

Ինչպես ներկայացված է 7-րդ, 8-րդ և 9-րդ Պատկերներում, մասնակիցները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել բոլոր նպատակների հանդեպ, մտահոգվել են դրանցով և զգացել են, որ դրանք կարող են քննարկվել աշխարհասփյուռ հայերի կողմից (գրեթե 90%-ը շատ կամ միանգամայն հետաքրքրված/մտահոգված է):



Պատկեր 7. Համաժողովին քննարկված նպատակների նկատմամբ մասնակիցների հետաքրքրվածությունը



Պատկեր 8. Համաժողովին քննարկված նպատակների վերաբերյալ մասնակիցների մտահոգությունները



Պատկեր 9. Մասնակիցների ընկալումը Համաժողովին քննարկված նպատակների արդիականության վերաբերյալ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Համաժողովի գործընթացից զատ (տե՛ս Պատկեր 9-ում), մասնակիցները միասին այն կարծիքին էին, որ Համաժողովը (1) կնպաստի համահայկական օրակարգի ձևավորմանը, (2) կնպաստի հայ ժողովրդի ջանքերը միավորող առաքելության ձևավորմանը և հայոց պետականության խնդիրների լուծման պատասխանատվության ստանձնելուն, և (3) կնպաստի անհատի հզորացմանը։ Նրանցից յուրաքանչյուրի համար մասնակիցների մոտ 85%-ը բաժանվել է «բավականին շատ» կամ «զգալի» ազդեցության ակնկալիքների միջև։ Նրանք ավելի թերահավատ էին, որ Համաժողովը կհաղթահարի բևեռացումը, բայց 95%-ը հայտնել է դրական կամ չեզոք տրամադրությունների մասին։



Պատկեր 10. Մասնակիցների ակնկալիքները Համաժողովի ազդեցությունից

> ***Նման միջոցառումները շատ լավ գաղափար են, օրինակ, նպաստում են Հայաստանի և Սփյուռքի միջև շարունակական շփմանը։***
>
> ***Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից***

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՀԵՐ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Համաժողովի մասնակիցները տարբերվում էին ոչ միայն իրենց ժողովրդագրությամբ, այլև իրենց քաղաքական հայացքներով (տե՛ս Պատկեր 11-ում). հարցվածների մոտ 40%-ը ուներ դեմոկրատական հայացքներ, 31%-ը՝ ազգայնական, 14%-ը՝ լիբերալներ, 13%-ը՝ պահպանողականներ և 8-ական %-ը՝ ազատականներ (լիբերալներ) և սոցիալիստներ: Սփյուռքի ներկայացուցիչների շրջանում հարցվածների 52%-ը դեմոկրատներ են, մինչդեռ Հայաստանում այդ թիվը կազմում է 30%, չնայած հարկ է նշել, որ Հայաստանում հարցվածների ավելի քան 20%-ը հրաժարվել է պատասխանել այդ հարցին:



Պատկեր 11. Մասնակիցների քաղաքական հայացքների բաշխումը

Ինչպես ներկայացված է Պատկեր 12-ում, հարցվածների գրեթե 80% հայտնել է, որ իրենք «շատ հետաքրքրված» կամ «բավական հետաքրքրված» են քաղաքականությամբ: Սփյուռքի մասնակիցների հետաքրքրությունը, ըստ երևույթին, մի փոքր ավելի բարձր է, քան Հայաստանում (84% ընդդեմ 73%-ի), ինչը, թերևս, զարմանալի չէ՝ հաշվի առնելով Համաժողովին մասնակցելու համար նրանց լրացուցիչ ջանքերը:



Պատկեր 12. Ինչպես են մասնակիցները գնահատել իրենց հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ մինչև Համաժողովը

Քաղաքական ակտիվության չափման մեկ այլ ցուցանիշ է այն հարցը, թե որքանով են մարդիկ ակտիվ քաղաքական և քաղաքացիական հասարակության հետ առնչվող գործունեության մեջ: Արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցները պարտադիր չէ, որ ակտիվ լինեն այս ոլորտներում, բայց զգալի թվով ներգրավված են Պատկեր 12-ում ներկայացված կետերից յուրաքանչյուրում: Հատկանշական է, որ այս արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների ավելի քան երեք քառորդը կամավոր են եղել կամ ցուցաբերել են անհատույց օգնություն (սա ցույց է տալիս համայնքային ոգու ուժեղ միտում) և որ նրանց ավելի քան մեկ երրորդը ուղղակիորեն շփվել է քաղաքական գործիչների հետ:



Պատկեր 13. Համաժողովին նախորդող տարվա ընթացքում մասնակիցների կողմից իրականացվող քաղաքական և քաղաքացիական գործունեությունը

Ինչ վերաբերում է կոնկրետ հայկական քաղաքականության վրա նրանց ազդեցությանը, ապա հարցվածների միայն 8%-ն է համարել, որ իրենց ձայնը լսելի է Հայաստանի կառավարության կողմից: Ընդ որում, ակնհայտ մեծամասնությունը դրա հետ չի համաձայնել (տե՛ս Պատկեր 14-ում): Մի փոքր ավելի քիչ, բայց, այնուամենայնիվ, մեծամասնությունը անհամաձայնություն է հայտնել «ոչ մի համակարգ կատարյալ չէ, բայց Հայաստանում քաղաքական համակարգը բավականին լավ է աշխատում» պնդման հետ:



Պատկեր 14. Մասնակիցների կարծիքը ՀՀ կառավարության և նրա վրա ունեցած ազդեցության մասին

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Ավելի անհատական մակարդակում մասնակիցներին խնդրեցին իրենց կարծիքը հայտնել խմբային քննարկումների տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են քննարկելու, բանավիճելու և սեփական տեսակետները ներկայացնելու հնարավորությունը կամ ունակությունը: Ինչպես ներկայացված է Պատկեր 14-ում, հարցվածների ճնշող մեծամասնությունը հայտնել է, որ իրեն դուր են եկել խորհրդակցական քննարկումները և իրենք ազատ են խմբում չհամաձայնվելու և ելույթ ունենալու հարցում, ինչպես նաև հայտարարում են քննարկումների լայնախոհության մասին:



Պատկեր 15. Մասնակիցների կարծիքը խմբային քննարկումներին մասնակցելու վերաբերյալքաղաքական և քաղաքացիական գործունեությունը

Անդրադառնալով այլ մարդկանց կարողություններին (տես Պատկեր 16-ում), հարցվածների կեսից ավելին դրական ակնկալիքներ է հայտնել իրենց հասակակիցների՝ քաղաքական ներդրում ունենալու ունակության վերաբերյալ, և ավելի քան երեք քառորդը վստահ է, որ մարդիկ կարող են փոխել իրենց տեսակետները, եթե նրանց ներկայացվեն հիմնավոր պատճառներ:



Պատկեր 16. Մասնակիցների կարծիքները խմբային քննարկումներին նպաստելու մյուսների կարողության վերաբերյալ

Ընդհանուր առմամբ, Համաժողովի սկզբում, մասնակիցները զգալիորեն հետաքրքրված էին քննարկվող թեմաներով և պատրաստ էին խոսել դրանց մասին: Նրանք ներկայացնում են քաղաքական համոզմունքների լայն շրջանակ, և նրանցից շատերը ակտիվորեն ներգրավված են եղել այլ քաղաքացիական և քաղաքական գործունեության մեջ: Նրանք քիչ էին վստահում Հայաստանի կառավարությանը և բավականին լավատես էին հայրենակիցների՝ քաղաքական կարևոր հարցերի լուծման գործում ռացիոնալ ներդրում ունենալու ունակության նկատմամբ:

2.5.2 ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎՐԱ

Որոշ հարցեր տրվել են Համաժողովի ինչպես առաջին, այնպես էլ վերջին օրերին: Այս բաժնում համեմատվում են այդ պատասխաններից մի քանիսը ցույց տալու համար, թե ինչ ազդեցություն է ունեցել այս գործընթացը մասնակիցների տեսակետների վրա: Պատասխանների մակարդակը 150-ից 170-ը 200-ում ներկայացնում է 3-4% սխալի սահման՝ ունենալով 95% վստահության մակարդակ:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1-ին և 3-րդ օրերի հարցումները միասին ցույց են տալիս առաջին երկու օրերին քննարկված նպատակների նկատմամբ («Հայաստան-Սփյուռք միասնականություն» և «Պատմական պատասխանատվություն») հարցվողների հավաքական հետաքրքրության մի փոքր նվազում, թեև բացարձակ թվերը մնում են շատ բարձր (տե՛ս Պատկեր 17-ում): Երրորդ օրվա նպատակի («Բնակչության աճ») նկատմամբ հետաքրքրությունը փոքր-ինչ ավելացել է, թեև 1-ին օրվա համեմատ ավելի քիչ մարդիկ էին մասնակցել: Թերևս այս արդյունքները մասամբ ցույց են տալիս, որ հետաքրքրասիրությունը որոշակիորեն բավարարվել է:



Պատկեր 17. Համաժողովի առաջին և վերջին օրերին քննարկումների մասը լինելու մասնակիցների հետաքրքրությունը

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Թեև հետաքրքրությունը կարող է մի փոքր թուլանալ, մասնակիցների վստահությունը թեմաների վերաբերյալ իրենց պատկերացումների նկատմամբ աճել է երեք օրերի ընթացքում, հատկապես ժողովրդագրական թեմայի հետ կապված: Ինչպես ներկայացված է Պատկեր 18-ում, «վստահ» և «շատ վստահ» ընդհանուր ցուցանիշներն աճել են 12%-ով՝ «Հայաստան-Սփյուռք միասնականություն», 9%-ով՝ «Պատմական պատասխանատվություն» և 23% - ով՝ «Բնակչության աճ» նպատակների վերաբերյալ:



Պատկեր 18. Որքանով են մասնակիցները վստահ, որ ընկալել են Համաժողովին քննարկված նպատակները (Համաժողովի առաջին և վերջին օրերին)

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վերջապես, կարելի է համեմատել Հայաստանի ապագայի նկատմամբ հարցվածների պատկերացումների փոփոխությունները (տե՛ս Պատկեր 19-ում)։ Հաշվի առնելով «համաձայն եմ»-ը և «լիովին համաձայն եմ»-ը միասին, աննշան դրական և բացասական փոփոխությունները ընկնում են պատասխանների տոկոսի սխալի սահմաններում, ուստի քիչ տեղեկատվություն կարելի է հաղորդել, բացի այն փաստից, որ մասնակիցների կապը Հայաստանի և նրա պատմության հետ մնում է ամուր (երկուսի համար էլ դրական պատասխանների առնվազն 90%-ը)։ Գրեթե բոլորը համաձայն են, որ սփյուռքահայերը պետք է ամուր կապեր պահպանեն Հայաստանի հետ։ Այն հարցը, թե արդյոք Հայաստանն ունի պայծառ ապագա, ցույց է տալիս չեզոքության ավելի բարձր աստիճան, քան Պատկեր 19-ում ներկայացված մյուս հարցերը, սակայն միջին վիճակագրական պատասխանողը դեռևս համաձայն է այս հայտարարության հետ։



Պատկեր 19. Որքանով են մասնակիցները համաձայն ապագայի և Հայաստանի հետ իրենց կապի վերաբերյալ մի քանի հայտարարությունների հետ (Համաժողովի առաջին և վերջին օրերին)

EXPERT


ՓՈՐՁԱԳԵՏ

3 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Յուրաքանչյուր օրվա ավարտին մասնակիցները քվեարկել են երկու տեսակի քվեաթերթիկով: Դրանցից մեկում նրանք ընտրել են դիրքորոշման կամ հայտարարության մեկ պատասխան, իսկ մյուսում նրանք ծրագրային նախաձեռնությունների ցանկից ընտրել են հստակ թվով առաջարկություններ, որոնք կիրականացվեն համագործակցային ցանցի կողմից: Բուն Համաժողովի սեղմ ժամկետների պատճառով այս նախաձեռնություններն ու հայտարարությունները նախապես պատրաստվել էին փորձագիտական հանձնախմբերի կողմից: Քվեարկությունից առաջ, Հաշվիչ/վերահսկիչ հանձնախումբը անհրաժեշտության դեպքում լրամշակում էր հարցերն ու ծրագրերը՝ հաշվի առնելով Համաժողովի քննարկումներին հնչած մտքերը:

3.1 ՀԱՇՎԻՉ/ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Համաժողովի առաջին օրը դիրքորոշումների և ծրագրերի քվեարկության կազմակերպման համար ձևավորվել է Հաշվիչ/վերահսկիչ հանձնախումբ: Յուրաքանչյուր սեղանից ընտրվել էր Հանձնախմբի մեկական անդամ՝ արդյունքում ձևավորելով 20 հոգանոց կազմ: Հանձնախումբը իր կազմից ընտրել է նախագահ (Արիկ Գևորգյան) և երկու փոխնախագահներ (Լյուդմիլա Մկրտչյան, Նարինե Գրիգորյան), ովքեր համակարգում էին յուրաքանչյուր օրվա քվեաթերթիկների հաշվարկը: Հանձնախումբը բաժանվել էր երեք խմբերի (7/6/7), որպեսզի Համաժողովի յուրաքանչյուր օր հաշվարկները իրականացնեին տարբեր անդամներ:

Հանձնախումբը

- Որոշում էր յուրաքանչյուր օրվա քվեարկությունը համակարգող և հաշվարկները իրականացնող խմբի կազմը,
- Հաստատում էր Համաժողովի յուրաքանչյուր օրվա քվեարկությանը դրվելիք հարցերը և ծրագրերի ընտրվելու շեմը,
- Որոշում էր Համաժողովի մասնակիցների կողմից առաջարկությունները քվեարկության դնելու կամ մերժելու հարցը (2 հարց մերժվել է, 5 առաջարկություն՝ ավելացվել),
- Հաստատում էր Խորհրդատվական և Ծրագրային հանձնախմբի անդամների ընտրության կարգը, թեկնածուների կողմից ներկայացվող տվյալները և նրանց ցանկը,
- Հաստատում էր յուրաքանչյուր օրվա քվեարկության արդյունքները և այլն:

Հանձնախմբի բոլոր որոշումները կայացվում էին բաց քվեարկության արդյունքում. դրա համար անհրաժեշտ էր ընդամենը ունենալ մեծամասնության (11 անդամի) համաձայնությունը: Յուրաքանչյուր օրվա քվեարկության արդյունքները համակարգողը ներկայացնում էր բոլորին:



3.2 ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնում ներկայացվում են դիրքորոշումների քվեարկության արդյունքները (տե՛ս քվեարկության ընթացակարգերը Համաժողովի կայքի «Կանոններ և ընթացակարգեր» բաժնում)։ Մասնակիցները յուրաքանչյուր հարցի դեպքում պետք է նշեին մեկական տարբերակ։ Այն պնդումները, որոնք ստացել են ամենաշատ ձայները ընդգծված են։ Մասնակիցների բոլոր դիտարկումների արձանագրությունները հասանելի են Համաժողովի կայքում։

3.2.1 ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՕՐ 1)

1.1. Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերը մինչ օրս պետության, համայնքների, հայկական կազմակերպությունների և անհատների կողմից՝	
Արդյունավետ են եղել, սակայն մոտեցել են իրենց առավելագույնին	3.41%
Արդյունավետ են եղել և նույն կերպ պետք է շարունակել (նույն տեմպով շարունակելու դեպքում նոր հաջողություններ կգրանցվեն)	8.84%
Արդյունավետ են եղել, սակայն այսօր չենք կարող խոսել Ցեղասպանության մասին նույն կերպ, ինչպես նախկինում	16.33%
Արդյունավետ են եղել, սակայն այսօր համահայկական ջանքերն ավելի շատ պետք է ուղղել անվտանգային խնդիրների լուծմանը	**30.61%**
Ոչ այնքան արդյունավետ են եղել, հնարավոր են շտկումներ	**30.61%**
Արդյունավետ չեն եղել, պետք է մոտեցումները կտրուկ փոխել	10.21%

1.2. Արցախի հիմնախնդիրը՝	
120 հազար արցախցիների խնդիրն է	2.65%
120 հազար արցախցիների և 3 մլն հայաստանցիների խնդիրն է	4.64%
10 մլն հայության խնդիրն է	**92.71%**

Հայոց ցեղասպանությունը պետք է դիտարկել որպես հայկական հարցի և Հայաստանի ու Արցախի խնդիրների անբակտելի մաս: Հայկական հարցը վերաբերում է ոչ միայն անցյալին, այլև մեր ներկային ու ապագային, որոնց վրա մենք պետք է ամեն օր աշխատենք:

Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից

[c] www.futurearmenian.com/convention/rules-and-regulations/

1.3. Ընտրեք ներքոհիշյալ դիտարկումներից մեկը՝	
Ամբողջ աշխարհի հայությունը պետք է միասնաբար հանձն առնի, որ ստանձնում է Արցախի պատասխանատվությունը և չթողնի խնդիրը միայն պետության և Հայաստանի քաղաքացիների ու, առավել ևս, արցախցիների ուսերին: Հայ ազգը չպետք է վախենա հաղթանակներից:	**54.84%**
Արցախի խնդիրը բարդ, բանակցային գործընթաց է: 2020թ. պատերազմից հետո Հայաստանի դիրքերը և Արցախի անվտանգությունը թուլացել են. այսօր խնդիրը կայունացել է ռուս խաղաղապահների և եվրոպացի դիտորդների շնորհիվ: Արկածախնդրությունը վտանգավոր է:	6.45%
Այս պնդումներն իրար չեն հակասում:	29.03%
Այլ դիտարկում *(տես Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	9.68%

1.4. Ժառանգության պահպանման հարցում մեր մոտեցումը՝	
Մեր պատմամշակութային ժառանգությունը պահպանելը և հաջորդ սերունդների փոխանցելը մեր պարտքն է, ինչի համար թե՛ պետությունը, թե՛ աշխարհասփյուռ հայությունը պետք է այնքան ռեսուրս ծախսեն, որքան անհրաժեշտ է, և արդյունավետորեն անեն այդ գործը:	**61.74%**
Մեր պատմամշակութային ժառանգությունը պետք է կարողանանք պահպանել բիզնես շահի մոդելով, այսինքն ոչ թե որպես բեռ և պատասխանատվություն, այլ որպես շահ բերող ժառանգություն, որն այդպես նաև կինքնապահպանվի և կզարգանա:	28.86%
Այլ դիտարկում *(տես Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	9.40%

1.5. Հայերենի և հայապահպանության հարցում՝	
Հայերենը պետք է դարձնել Սփյուռքի համայնքային կառույցների, եկեղեցու և Հայաստանի հետ ցանկացած հարաբերության պարտադիր պայման: Միայն այդպես հնարավոր կլինի աշխարհասփյուռ հայ երիտասարդներին դրդել հայերեն սովորելու:	**19.36%**
Լեզուն իմանալը կարևոր է, բայց լեզուն միայն գործիք է, իսկ լեզվի իմացության պարտադրումը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Հարկավոր են շահագրգռող մեխանիզմներ, համապատասխան միջավայր, որպեսզի հայերեն սովորելը լինի շահավետ և/կամ հետաքրքիր:	72.90%
Այլ դիտարկում *(տես Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	7.74%

3.2.2 ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՕՐ 2)

2.1. Հայաստան-Սփյուռք փոխգործակցության ջանքերը մինչ օրս.	
Բավարար են եղել, Սփյուռքը կարողացել է զբաղվել և՛ ինքնապահպանությամբ, և՛ Հայ դատի պաշտպանությամբ, և՛ Հայաստանին օժանդակելով: Ոչինչ փոխել պետք չէ	0.63%
Բավարար են եղել, սակայն ռազմավարական չեն եղել. չենք նկատել, թե ինչպես ենք դանդաղ կորցնում և՛ Սփյուռքը, և՛ Հայաստանը՝ փորձելով մեկի պահպանությունը հակադրել մյուսին	13.92%
Բավարար չեն եղել. կա վստահության ճգնաժամ, միասնականությունն իրականում միայն կոչերի մակարդակում է	27.86%
Վստահության ճգնաժամը հաղթահարելի է, համագործակցության նոր հարթակների կարիք ունենք, միասնականությունը կբազմապատկի արդյունքները	**56.96%**
Այլ դիտարկում *(տես Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	0.63%

2.2. Հայաստան-Սփյուռք գործակցության հիմնական օրակարգը պետք է լինի.	
Հայաստանի հզորացումը՝ ակնկալիքով, որ հետո հզորացող Հայաստանը շատ ավելի հեշտ կնպաստի հայապահպանությանը Սփյուռքում:	**53.16%**
Հայապահպանությունը Սփյուռքում և համայնքների խնդիրների լուծումը՝ ընդունելով, որ ուծացման վտանգը բավականին լրջացել է	20.89%
Իրար որքան հնարավոր է օգնելը՝ գիտակցելով, սակայն, որ ռեսուրսներն այս դեպքում կիսվում են երկու ուղղության վրա, հետևաբար՝ նվազում ամեն ուղղությամբ	20.25%
Այլ դիտարկում *(տես Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	5.70%

Սփյուռքը պետք է աշխատի Հայաստանը հզորացնելու ուղղությամբ, կենտրոնում պիտի լինի Հայաստանը: Պիտի Հայաստանը հզորանա և անվտանգ երկիր դառնա:

Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից

2.3. Ինչպե՞ս պետք է կառավարվի Հայաստան-Սփյուռք օրակարգի իրականացումը.	
Պետք է կառավարի Հայաստանը՝ իր պետական կառույցների միջոցով	5.03%
Պետք է կառավարվի Հայաստանից՝ սփյուռքահայերի մասնակցությամբ՝ սահմանադրական բարեփոխումներով Սփյուռքի համար նախատեսելով պետական կառավարմանը մասնակցելու մեխանիզմներ	**45.91%**
Պետք է կառավարվի նոր ստեղծվող համահայկական կառույցի միջոցով, որը կհամախմբի բոլոր գործող մեխանիզմները և կներդաշնակեցնի աշխատանքը	37.74%
Միասնական կառավարման կարիք չկա. ըստ խնդիրների ձևավորել համագործակցային նոր լուծումներ և հարթակներ՝ ընդունելով Հայաստանի և Սփյուռքի բազմազանությունը	**7.55%**
Այլ դիտարկում *(տե՛ս Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	3.77%

3.2.3 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ (ՕՐ 3)

3.1. Բնակչության աճ ապահովելու արդյունավետության տեսանկյունից ջանքերն առաջին հերթին ո՞ր ուղղությամբ պետք է ուղղել.	
Ծնելիության աճ	15.03%
Արտագաղթի նվազեցում	14.38%
Ներգաղթի ավելացում	8.50%
Բոլորը միաժամանակ	**54.90%**
Այլ դիտարկում *(տե՛ս Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	7.19%

3.2. Ճիշտ է առաջին հերթին.	
Արտագաղթած հայաստանցիների ներգաղթի կազմակերպումը	54.61%
Պատմական սփյուռքի ներկայացուցիչների ներգաղթի կազմակերպումը	19.74%
Օտարազգիների ներգաղթի կազմակերպումը	3.95%
Այլ դիտարկում (տե՛ս Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)	**21.70%**

3.3. Ընտրեք ներքոհիշյալ դիտարկումներից մեկը՝	
Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է հռչակել երկրում իրականացվող քաղաքականության գլխավոր ուղղություն, որին պետք է սպասարկեն մյուս ոլորտների քաղաքականությունները: Մինչև հիմա այն ընկալվում է որպես սոցիալական օժանդակության գործիք:	74.67%
Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է լինի ավելի փոքր քաղաքականությունների և ծրագրերի ամբողջություն, քանի որ համապարփակ և միասնական քաղաքականություն ունենալն ու իրականացնելը թանկ հաճույք է:	16.67%
Այլ դիտարկում *(տե՛ս Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	8.66%

Պետությունը պետք է կարևորի յուրաքանչյուր երեխայի ծնունդը, և խոսքը միանվագ վճարների մասին չէ: Պետության քաղաքականության առաջնահերթություններից մեկը պետք է լինի երեխաների ծնունդին նպաստելը, անկախ նրանից՝ ընտանիքը ապահովված է, թե ոչ:

Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից

3.4. Ընտրեք ներքոհիշյալ դիտարկումներից մեկը՝	
Ի հավելումն հայրենադարձության քաղաքականության՝ պետք է կազմակերպել նաև օտարազգիների ներգաղթ, այդպիսով կլուծենք բնակչության աճի խնդիրը:	25.66%
Սխալ է բոլոր ուժերն ուղղել ներգաղթ ապահովելու ուղղությամբ, երբ Հայաստանում ունենք գործազրկության բարձր մակարդակ և աղքատություն: Առանց տնտեսական զարգացման և գործազրկության խնդիրները լուծելու՝ ներգաղթը հանգեցնելու է սոցիալական լարվածության	**57.89%**
Այլ դիտարկում *(տե՛ս Հավելված 3. Դիրքորոշումների քվեարկությանը արձանագրված այլ դիտարկումներ)*	16.45%

3.3 ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժնում ներկայացված են բոլոր ծրագրային նախաձեռնությունների առաջարկությունները՝ ըստ աջակցության աստիճանի:

Յուրաքանչյուր մասնակցի առաջարկվել է քվեաթերթիկից ընտրել նախաձեռնություններ տարբերակների ցանկից: Հասանելի տարբերակների քանակը և նրանցից պահանջվող թիվը միշտ չէ, որ նույնն է եղել, հետևաբար արդյունքները հարմարեցվել են[23] ապահովելով ընտրության հավասար հնարավորություն: Այդ շտկումները հիմնված են եղել մասնակիցների ընտրած նախաձեռնությունների քանակի և առկա տարբերակների հարաբերակցության վրա: Հետևաբար, որոշ ծրագրերի աջակցության ցուցանիշները փոփոխվել են: Բոլոր նախաձեռնությունները, որոնք ստացել են ավելի քան 50% աջակցություն, ընդունվել են և առաջ կընթանան գործընկերային ցանցի միջոցով:

3.3.1 ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՕՐ 1)

1 **Մեկ միասնական Հայկական ժառանգության ցանկ**

Հայկական ժառանգության նմուշների փաստաթղթավորում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկի նման համակարգի ստեղծում:

72.19%
(71.79%)[24]

Կողմ կարծիքներ.

- *Ժառանգության մասին խոսելիս առաջին հերթին հասկանում ենք մեր պատմամշակութային ժառանգությունը: Գնում ենք, տեսնում, որ մեր վանքերի գմբեթին խոտ է աճում, հիմքը ամուր չէ: Երբ մանուկ ժամանակ պատմում էին մեր վանքերի մասին, մտածում էինք, որ դրանք ամենալավն են, բայց որ արտերկրում տեսնում ես, թե ոնց են պաշտպանում իրենց մշակութային կառույցները, ապշում ես:*
- *Որպեսզի մենք ապահով ապրենք այս աշխարհում, պետք է քաղաքակրթական ազդեցություն ունենանք աշխարհի վրա: Մեզ համար նույնքան կարևոր պիտի լինի թե՛ ժառանգությունը պահպանելը, թե՛ նորը ստեղծելն ու տարածելը:*
- *Ժառանգության պահպանումը միայն գեղեցիկ խոսքերով չէ, այլ պետք է ամեն մեկը գիտակցված գումար նվիրաբերի մեր ժառանգության պահպանմանը:*
- *Ամեն ինչ կախված է մեր նպատակներից: Ապագան կերտելու համար մենք պետք է հասկանանք, թե ինչ է իրենից ներկայացնում մեր ժառանգությունը, զարգացնենք այն, ստեղծենք նոր արժեհամակարգ և այդ նոր ժառանգությունը փոխանցենք գալիք սերունդներին:*

[23] Բացատրություն. Ընտրություն-տարբերակ հարաբերակցությունը հաշվարկվել է յուրաքանչյուր հարցի համար՝ բաժանելով տարբերակների թիվը, որոնք մասնակիցներին խնդրել են ընտրել: Յուրաքանչյուր տարբերակի համար հաշվարկվել է ստանդարտացման գործակից՝ արդյունքների միջինը բաժանելով յուրաքանչյուր տարբերակի հարաբերակցության վրա: Յուրաքանչյուր տարբերակի վարկանիշը բազմապատկվել է իր գործակցով, որպեսզի տրվի ճշգրտված ցուցանիշը:

[24] Փակագծում ներկայացվում է աջակցության սկզբնական աստիճանը՝ մինչ ճշգրտումները:

2 Երիտասարդական փոխանակումների կոորդինացիոն խորհուրդ

Կրթական փոխանակումների, ճամբարների, հանդիպումների, փոխայցելությունների ծրագրերի ավելացում և կոորդինացում:

70.90% (70.51%)

Կողմ կարծիքներ.

- Պետք է կազմակերպել փոխանակման ծրագրեր սփյուռքի և Հայաստանում բնակվող երիտասարդների միջև, որ ծանոթանան մեկը մյուսի մշակույթին, սովորույթներին, կյանքին:
- Բացի դպրոցներից, արտասահմանում պետք է տարբեր հավաքույթներ կազմակերպել, կենտրոններ ստեղծել, որտեղ բոլորը խոսեն հայերեն, երգեն հայերեն, պահպանեն հայկականը, փոխանցեն սերունդներին:
- Կամավորական ծրագրերը կարևոր են. մեկ անգամ Հայաստան այցելած երիտասարդը անպայման դրական առումով փոխում է վերաբերմունքը իր ինքնության նկատմամբ:
- Առաջարկում եմ Հայաստանի ու Սփյուռքի երեխաների պարտադիր փոխանակում անենք: 15-18 տարեկան երեխաները տարվա մեջ պարտադիր կերպով գնան սփյուռքի որևէ գաղթօջախում ապրելու որևէ ընտանիքի հոգածության ներքո: Մի քանի տարի ու կապը ստեղծված է:

Դեմ կարծիքներ.

- *Լույս հիմնադրամի 70-80 տոկոս շրջանավարտները հետ չեն եկել: Կրթության մեջ նմանատիպ ներդրումները ռիսկային են:*

3 «Համահայկական համացանցային բանակ»

Բոլոր ցանկացող հայերի ներգրավմամբ առավելության հասնել վիրտուալ տեղեկատվական պատերազմներում և բոլոր սոցցանցերում:

66.56% (75.64%)

Կողմ կարծիքներ.

- *Պետք է ստեղծել գիտակ համացանցային բանակ, որը ճիշտ մասնագետների միջոցով տեղեկատվություն կարող է փոխանցել: Իսկ հիմա մենք մտնում ենք համացանց, ինչ-որ բան տեսնում, նյարդայնանում, անկազմակերպ մի բան գրում:*
- *Հայկական մշակութային հարթակը կարելի է դարձնել սոցիալական ցանց:*
- *Տեղեկատվական պատերազմում պետք է գերազանցենք: Միայն նայեք պատերազմի օրերի սոցիալական հարթակների ակտիվությանը: Միշտ պետք է այդպես ակտիվ լինել:*
- *Անվտանգության մասին խոսել չենք կարող, քանի դեռ տեխնոլոգիական առումով մեր հիմքն ամերիկյան սերվերներն են: Պետք է մտածել հայկական տիրույթներ, սերվերներ ստեղծելու մասին: SS ոլորտում մենք աշխարհին չենք զիջում ու կարող ենք ստեղծել անգամ մեր սոցիալական ցանցերը:*

4 Պատմական ժառանգության արժեքների թվայնացման արշավ

59.30% (58.97%)

Բոլոր թանգարաններում մեր ունեցած արժեքների թվայնացման, պահպանման և տարածման մեծ ծրագիր:

Կողմ կարծիքներ.

- *Պետք է մեր արժեքներին նոր և ժամանակակից շունչ տալ, որպեսզի դրանք հետաքրքիր դառնան նոր սերնդի համար:*
- *Առցանց պլատֆորմում տարբեր երկրների հայերը պետք է ներկայացնեն իրենց երկրներում հայկական ներկայության և ժառանգության ռեսուրսները:*
- *Առաջարկում եմ երաժշտությունը, հայկական ժառանգության ցանկը թվայնացնել ու պահպանել վիրտուալ մի հարթակում:*
- *Նոր մոտեցումներ, նոր տեխնոլոգիաներ պետք է ներդրվեն մեր պատմամշակութային կառույցներում, որը կգայթակղի նոր սերնդին:*

Դեմ կարծիքներ.

- *Մենք ունենք մեծ թերություն. ժառանգության ներկայացման ժամանակակից մեթոդները ծանրաբեռնում են երիտասարդներին և անհարմարություն պատճառում:*

5 «Հայոց լեզուն՝ խաղերի միջոցով»

58.66% (58.33%)

Հայերենի և հայության մասին իրենց գիտելիքներով հաջողություններ բերող ժամանակակից համակարգչային խաղերի ստեղծման և տարածման խթանում:

Կողմ կարծիքներ.

- Բովանդակության պակաս կա, եթե նյութը հետաքրքիր մատուցվի, կտպավորվի ու երիտասարդների մոտ հետաքրքրություն կառաջանա:
- Կարող ենք հնարավորություն ստեղծել, որ երեխան թանգարան մտնելիս ստանա մի սարք, որի միջոցով, հետաքրքիր ձայներով, մուլտֆիլմերով, խաղերով կկարողանա հետաքրքրվել և ներգրավվել:
- Դասավանդման մեթոդների խնդիր ունենք հատկապես Սփյուռքում: Հին մեթոդները նոր սերնդի համար այլև չեն գործում և հետաքրքիր չեն:
- Խաղերի միջոցով հայերենը տարածել սփյուռքում հնարավոր է: Կարելի է դրամաշնորհային մեծ մրցույթ կազմակերպել, որի արդյունքում կշահի լավագույն խաղը առաջարկող ընկերությունը: Հայկական խաղեր ստեղծելը շատ կարևոր է, որպեսզի սփյուռքում գտնվող մեր երեխաները ցանկանան հայերեն սովորել:

Դեմ կարծիքներ.

- *Ապրում եմ Սփյուռքում, վարժ խոսում եմ տեղի լեզուներով: Ի՞նչ եք առաջարկում ինձ հայերեն սովորելու համար, ո՞րն է իմ շահը, ինչո՞ւ պիտի ինձ հայերենով ծանրաբեռնեմ:*

6 Ցեղասպանության ճանաչման գործընթացի առցանց կոորդինացիոն խորհուրդ

54.71% (62.18%)

Համակարգող հանձնախումբ, որը համալիր ռազմավարությամբ կներդաշնակեցնի աշխատանքները այդ ուղղությամբ:

Կողմ կարծիքներ.

- «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը պետք է վերականգնել ու գաղափարը տարածել Սփյուռքում և Հայաստանում, իսկ Ցեղասպանության 100-ամյակին նվիրված հանձնաժողովներն ամբողջ աշխարհում պետք է վերսկսեն իրենց աշխատանքները:
- Քանի որ մենք առաջին ցեղասպանություն վերապրած ազգն ենք, մենք պետք է պարտադրենք ամբողջ աշխարհին Հայոց ցեղասպանության ընդունումը, որպեսզի կանխարգելենք հետագա ցեղասպանությունները:
- Հարկավոր է ստեղծել ազգային մարմին, որը կկարողանա ամենօրյա ռեժիմով, պրոֆեսիոնալ անձնակազմով աշխատել Հայկական հարցի համաշխարհային տարածման ուղղությամբ:

Դեմ կարծիքներ.

- *Համաձայն չեմ, որ Ցեղասպանությունը և հատկապես դրա ճանաչումը պետք է որպես նպատակ դիտարկել: Մեր նպատակը արդարությունը պետք է լինի: Աշխարհում շատ ցեղասպանություններ են տեղի ունենում, և պետությունները ոչ միայն ճանաչում են դրանք, այլև ներողություն են խնդրում և վերականգնում են այդ ժողովուրդների հիշողությունը, արժանապատվությունը: Դատական գործընթացներ կարելի է սկսել, բայց քիչ շանսեր կան հաջողելու:*
- *Ցեղասպանության հարցը առաջնահերթ չէ, Հայաստանն այլ առաջնահերթություններ ունի: Կարիք չկա ամբողջ պետական համակարգն ուղղել այդ ուղղությամբ:*

7 Հայկական վիրտուալ համալսարանների ցանց

53.51% (53.21%)

Հայոց լեզվի և հայոց պատմության մասնագիտացմամբ առցանց կրթության մեծ ալիք աշխարհի հայության շրջանում:

Կողմ կարծիքներ.

- *Սփյուռքում պետք է ստեղծվեն շատ հայկական դպրոցներ, քանի որ երբ սովորեցնում են լեզուն, մշակույթը ևս փոխանցվում է:*
- *Դասավանդման մեթոդների խնդիր ունենք հատկապես Սփյուռքում: Հին մեթոդները նոր սերնդի համար այլև չեն գործում և հետաքրքիր չեն:*

- *Արևմտահայերենի ընտրովի դասընթացներ պետք է կազմակերպել, որը կնպաստի կոմունիկացիային և լեզվի պահպանմանը: Սա կարևոր է, և դա պետք է Հայաստանում համակարգել:*
- *Հայկական կրթօջախները պետք է կենտրոնաձիգ կառավարում ունենան, ու գլխավոր կառավարիչը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը, որը պետք է կառավարի սփյուռքում գործող բոլոր հայ կրթօջախները:*
- *Հայոց լեզվի դասընթացներ կարող են կազմակերպվել հեռավար: Կենտրոնը պետք է լինի Երևանը, որտեղից դասերը կանցկացվեն տարբեր երկրների համար: Մի քանի տարի անց արդյունքները տեսանելի կլինեն, միևնույն ժամանակ այս կերպ կփոխանցվեն նաև լեզուն և մշակույթը:*

8 Հայկական «Հակազրպարտչական լիգա» իրավապաշտպան մեխանիզմ

53.02% (60.26%)

Հայկական իրավաբանական կառույց՝ ժխտողականության դեմ պայքարն առաջնորդելու համար:

Կողմ կարծիքներ.

- *Պետք է ստեղծել հայ իրավաբանական խումբ, որը պետք է մշակի թղթածրար: Այն կպարունակի Հայոց ցեղասպանության պահանջատիրական փաստաթուղթը:*
- *Հարկավոր է ստեղծել ազգային մարմին, որը կկարողանա ամենօրյա ռեժիմով, պրոֆեսիոնալ անձնակազմով աշխատել գլոբալ Հայկական հարցի տարածման ուղղությամբ:*
- *Ցեղասպանությունը ժխտելը, հերքելը կամ ծաղրելը ամեն երկրում իր օրենքով պետք է պատժվի: Հակառակ դեպքում հարկավոր է նման խնդիրները լուծել համայնքային շրջանակներում, համայնքով կիրառել պատժիչ միջոցներ կամ սանկցիաներ:*
- *Մենք այնքան ենք ընկճվել, որ այսօր Արցախի եկեղեցիները արդեն ալբանական են դարձել, և չկա ոչ մի կառույց, որ հետևի, պատժամիջոցներ կիրառի:*

9 Այլ երկրների կրթական ծրագրերում Մեծ եղեռնի մասին նյութերի ներառման արշավ

53.02% (60.26%)

Տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության ուսումնասիրմանն ու դասավանդմանն ուղղված լոբբիստական ջանքերի ավելացում:

Կողմ կարծիքներ.

- *Սփյուռքի երեխաները իրենց տատիկ-պապիկներից են լսել ցեղասպանության մասին: Գնացեք Թուրքիա, շփվեք թուրք երիտասարդների հետ. նրանք զարգացած են, կիրթ:*

Նրանց մտածելակերպն այսօր այլ է, մերն էլ պիտի այլ լինի: Այսօր հայաստանցին ավելի քիչ է հասկանում և ընկալում ցեղասպանության գաղափարը, քան գաղթածները: Պետք է առաջ գնալ և զոհ չլինել:

- *Ֆրանսիայում Ցեղասպանությունը դասավանդվում է ոչ թե որպես զգացական երևույթ, այլ հստակ գիտական մոտեցումով՝ դրդապատճառները, ինչպես դա տեղի ունեցավ, ինչ եղավ հետո: Այսպիսի ուսուցումն է կարևոր առաջ տանել:*
- *Մեզ պետք է ոչ միայն զգացականի վրա աշխատել, այլև կրթական ու տեղեկատվական գործիքներով առավել դիտարկելի ու շարունակական գործընթաց ապահովել ճանաչման հարցում:*
- *Լոս Անջելեսում արդեն իսկ որոշ դպրոցներում ցեղասպանության մասին ուսումնական ծրագրեր են մշակվում և ներդրվում:*

Դեմ կարծիքներ.

- *Չեմ ուզենա, որ երիտասարդ սերունդը մեծանա զոհի հոգեբանությամբ, ուստի կրթությանը պետք է շատ զգույշ վերաբերվել:*

10 Աշխարհի հայերի «Արցախ՝ 10մլն» համաժողով

52.46% (59.62%)

Օրակարգում՝ գործուն մեխանիզմների կազմավորում, որոնք կդառնան Արցախ-աշխարհի հայություն կապն ինստիտուցիոնալացնող հանգույցներ:

Կողմ կարծիքներ.

- *Մեր հայկական աշխարհում Արցախը հիմա շատ խոցելի վիճակում է: Ես վստահ եմ, որ Արցախի հարցը 10 միլիոն հայի հարցն է:*
- *Արցախի անվտանգության միակ բանաձևն Արցախում ապրելն է: Եթե այնտեղ կես միլիոն արցախցի ունենայինք, իրավիճակն այլ կլիներ: Եթե ուզում ես ունենալ երկիր, այնտեղ պետք է ապրել ու դրա համար պետք է պայքարել:*
- *Որպեսզի հասնենք աշխարհի կողմից Արցախի ճանաչմանը, մեզ պետք է 10 տարվա ճանապարհային քարտեզ՝ հստակ գրված գործողությունների պլանով:*
- *Մեզ՝ հայերիս մոտ, այսպես է՝ մինչև դանակը ոսկորին չի հասնում, ոչինչ չենք անում: Կարծում եմ, արդեն այդ օրհասական պահն է հիմա. ինչպե՞ս համախմբվենք, ո՞ւմ շուրջ:*
- *Պետք չէ տարբերություն մտցնել Սփյուռքի, Հայաստանի և Արցախի միջև: Բոլորի հարցերը համընդհանուր են, և դրանց տարանջատումը միայն փակուղի է տանում:*

Դեմ կարծիքներ.

- *Արցախի անվտանգությունը միայն ու միայն ՀՀ օրակարգային խնդիրն է, ուրիշ ոչ մեկի:*
- *Ցեղասպանության հարցը Սփյուռքի համար շատ կարևոր է, սակայն Արցախի հարցը՝ ոչ այնքան: Միջոցառումներում ինքս սփյուռքում լսել եմ, որ ասում են՝ օյ ման, հանկարծ չկանգնեն ու խոսեն Արցախի մասին, լիքը հյուրեր ունենք: Սա շատ ցավալի է, բայց փաստ է:*

11 Զարգացման ծրագրերի «Արցախ» հիմնադրամ

50.20% (57.05%)

Տնտեսությունն ու անվտանգությունն առաջ տանող ծրագրերի ֆինանսավորում՝ աշխարհի հայերին մասնակից դարձնելով ազգային կենսական խնդրի լուծմանը:

Կողմ կարծիքներ.

- *Հայոց ցեղասպանությունը պետք է դիտարկել որպես Հայկական հարցի՝ Հայաստանի և Արցախի հարցերի անբաժանելի մաս: Հայկական հարցը միայն անցյալի մասին չէ, այլ նաև մեր ներկայի և ապագայի, որի շուրջ ամենօրյա աշխատանք է պետք տանել:*
- *Եթե մենք երկար ժամանակ ապրում ենք այլ երկրներում, խիստ բազմազան ենք դառնում, լրիվ այլ հարցերի շուրջ ենք կենտրոնանում, չկա մի միասնական գաղափարախոսություն: Եթե Սփյուռքում և Հայաստանում երիտասարդության շրջանում ստեղծվեն կենտրոններ, որոնք նրանց մեջ հետաքրքրություն կառաջացնեն, օրինակ, Արցախի ցավոտ հարցի նկատմամբ, միգուցե որոշ առաջնահերթություններ ձևավորվեն մեզ մոտ:*
- *Անհրաժեշտ է ունենալ մեկ կամ, ամենաշատը, երկու հիմնադրամ Արցախի համար, ավելի լավ է ունենալ մեկ մեծ հիմնադրամ, քան 10 մանր հիմնադրամներ:*

Դեմ կարծիքներ.

- *Ինչո՞վ է տարբերվելու Արցախի հիմնադրամը Համահայկական հիմնադրամից: Մինչև պետությունը չունենա Հայաստան-Արցախ անվտանգության վերաբերյալ միասնական տեսլական ու օրակարգ, որևէ նախաձեռնություն դառնալու է առանձին խմբի կամ ինչ-որ հայտնի կամ անհայտ անձի ինքնաարտահայտման ձև:*
- *Մենք Արցախը պահում ենք դրսի խողովակներից սնուցվելու հաշվին: Հիմնադրամներ ստեղծելու փոխարեն կարելի է այդ բոլոր գումարները ներդնել Արցախում կոնկրետ միջոցառումների վրա:*

12 «Հայկական ժառանգության դեսպաններ» շարժում

Գործուն մեխանիզմ, որը թույլ կտա բոլորիս ներգրավվել աշխարհում Հայաստանի, հայության և մեր հաջողությունների տարածման գործում:

46.41%
(46.15%)

Կողմ կարծիքներ.

- *Տարբեր երկրներում հայ երեխաները մեծ հաջողությունների են հասնում, պետք է ջանքեր գործադրել այս երեխաներին կրթելու և Հայաստանի դեսպաններ դարձնելու գործում:*
- *Ինձ շատ է դուր գալիս այն միտքը, որ ցանկացած հայ պետք է դառնա Հայաստանի PR դեսպանը՝ ոչ միայն Սփյուռքում, այլև Հայաստանում: Իմ քույրը ՌԴ-ում աշխատում է եկեղեցուն կից կառույցում, ուր երիտասարդները գալիս են, հայերեն երգեր երգում, մտքեր փոխանակում, հայկական մշակույթից խոսում: Սա մեր գլխավոր խաղաթղթերից կարող է դառնալ:*
- *Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ իրեն պետք է համարի Հայաստանի մշակութային դեսպանը:*

13 Հայկական ժառանգության հիմնադրամ

Այն պետք է հետևի բոլոր աճուրդներին և հայկական ժառանգության նմուշների առկայության դեպքում դրանք արագ գնի ու վերադարձնի Հայաստան:

45.76%
(45.51%)

Կողմ կարծիքներ.

- *Առաջարկում եմ ստեղծել տվյալների բազա՝ ներառելով Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունները: Նույն ոլորտի կազմակերպությունների անդամները հեշտությամբ կարող են գտնել իրար և համագործակցել: Գուցե ՀԲԸՄ-ը, որն արդեն աշխատում է այդ ուղղությամբ, ընդարձակի տարվող աշխատանքների մասշտաբը:*
- *Մշակութային պահմանման հարցում շատ լավ առաջարկ է մշակույթի պահպանման հիմնադրամը, գնել բոլոր մշակութային կարևոր գործերը և պահպանել: Դա պետական ֆունկցիա է, մասնավոր սեկտորում պահելը մի փոքր դժվար է:*

14 Ցեղասպանության թանգարանի՝ արտերկրյա 3 մասնաճյուղերի բացում

Աշխարհում Հայոց ցեղասպանությանը նվիրված նյութերի ներկայացման մասշտաբների ավելացում:

44.56%
(50.64%)

Կողմ կարծիքներ.

- *Հուշահամալիրների, թանգարանների բացումը կնպաստի, որ ավելի շատ թվով մարդիկ տեղյակ լինեն Հայոց ցեղասպանությունից ու հիշեն, թե ինչ է կատարվել:*

- *Ունենք ցեղասպանության թանգարան, որը շատ կարևոր դեր է տանում: Պետք է այդպիսի թանգարաններ շատ ստեղծենք, տարբեր վայրերում: Այդ թվում ամեն մեկս մեր ընտանիքում պետք է փոքր թանգարան ունենանք, որ հիշողությունը պահպանվի:*
- *Ես կողմ եմ առցանց թանգարանների ստեղծմանը. այնտեղ հայկական մշակույթը կներկայացվի որպես համաշխարհային մշակույթի մաս:*
- *Հաշվի առնելով Սփյուռքի բնակչության զգալի չափը և կայացած գբոսաշրջության ոլորտները, անհրաժեշտ է ստեղծել ցեղասպանության թանգարաններ նախևառաջ Ռուսաստանում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում:*

Դեմ կարծիքներ.

- *Արտերկրում մենք չենք կարող ունենալ թանգարաններ, քանի որ չունենք մասնագետներ, որոնք կարող են այդ ամենով զբաղվել: Մենք պետք է ամեն ինչ անենք, որ Հայաստանում ու Սփյուռքում զբաղվենք մշակութային դիվանագիտության զարգացմամբ ու հետո նոր խոսենք թանգարանների բացման մասին:*

15 **«Արմենիկա» ծրագիր**

«Իրանիկա» ծրագրի օրինակով հայագիտական որևէ կենտրոնի հիման վրա հայագիտական հետազոտությունների հարթակի ստեղծում:

42.54%
(42.31%)

Կողմ կարծիքներ.

- *Մենք չունենք նաև գիտական հարթակ, անգամ Պատմության թանգարանը ոչ մի բանին չի մասնակցում, ոչ էլ Լեզվի կոմիտեն: Առաջարկում եմ, որ ձևավորվի այնպիսի մի հարթակ, որը պետական հիմունքներով հետևողականորեն կհետևի մեզ վերաբերող պատմական բոլոր փաստերի խեղաթյուրմանը:*

3.3.2 ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՕՐ 2)

1 **Մասնագիտական համահայկական Համաժողովների կազմակերպում**

Ազգությամբ հայերի՝ ըստ մասնագիտության պարբերական Համաժողովների կազմակերպում, որոնք կներկայացնեն ոլորտային առաջարկություններ ու ծրագրեր:

86.35%
(45.75%)

Կողմ կարծիքներ.

- *Պետք է բժիշկների, ուսուցիչների, ինժեներների, երաժիշտների և մյուս մասնագետների միասնական համագործակցության ցանց ստեղծել: Եթե մեկն ուզում է իմանալ, թե ինչ ներդրում անի և ինչ բիզնեսի մեջ, կարող է այդ ցանցի միջոցով իմանալ:*

- *Անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական ցանցեր, լինի պլատֆորմ հայազգի տարբեր մասնագետների համար, որոնք կարող են համագործակցել, աջակցել միմյանց, փոխօգնության խմբեր ստեղծել տարբեր երկրներում սովորող հայ ուսանողների համար:*
- *Պետք է լինի համահայկական մասնագիտական ցանց, որտեղ գրանցվում են մասնագետներն ու մասնագետի կարիք ունեցողները: Մեկը մյուսին կգտնեն առանց պետական կամ դիվանագիտական խողովակների:*

Դեմ կարծիքներ.

- *Այս Համաժողովին հրավիրել են 40% ռուսաստանցի, բայց էքսպերտային հանձնախմբերում այդ համայնքից որևէ ներկայացուցիչ չի ընդգրկվել: Եթե մենք այսօր, այս գործով անգամ, չենք աջակցում ռուսաստանյան Սփյուռքին, ապա այն չի կայանա:*

2 Գործարարների համագործակցային ցանց

82.85% (82.39%)

Աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայ գործարարներին իրար գտնելու և համատեղ ծրագրեր անելու հնարավորության ստեղծում:

Supporting comments:

- Պետք է ապահովել ոչ միայն Հայաստան-Սփյուռք կապը, այլ Սփյուռք-Սփյուռք կապը, օրինակ ֆրանսահայերը պետք է ծանոթանան ռուսահայերի հետ:
- Պետք է օրգանական կապ ստեղծել ՀՀ-ի և Սփյուռքի միջև: Այս խնդիրները լուծելու համար պետք է լինեն մեխանիզմներ: Կարելի է ստեղծել թեկուզ խորհրդատվական մարմին, որտեղ կպատասխանեն Հայաստանում բիզնես սկսող սփյուռքահայերի բոլոր հարցերին:
- Մինչև Հայաստանից խթաններ չլինեն ուղղված Սփյուռքին, ոչինչ չի ստացվելու: Պետական մակարդակով խթաններ են պետք: Դրսում գործող բիզնեսներին, կրթական հաստատություններին ինչ-ինչ մեխանիզմներով խրախուսել է պետք, ուղղորդել, որ օրինակ, նրանց բիզնեսն ավելի զարգանա, ինչու չէ, ներգրավի ավելի շատ հայերի:
- Պետք է աշխատել և Սփյուռքում ապրող հայերի բիզնեսները բերել ՀՀ՝ կրճատելով հարկերը, ավելի դյուրին բիզնես միջավայր ստեղծելով:

Դեմ կարծիքներ.

- *Գործարարների ցանց ստեղծելը հիանալի գաղափար է, բայց գործող չէ, քանի որ փոխհամաձայնություն չկա:*

3 Հայաստանի՝ հայոց լեզվի ուսուցիչների՝ Սփյուռքի համայնքներ պարբերական գործուղումների հիմնադրամի/ինստիտուտի ստեղծում

67.04% (66.67%)

Համակարգ, որի միջոցով Հայաստանի ուսուցիչները հերթափոխով կգործուղվեն Սփյուռքի համայնքներ՝ հայագիտական կենտրոնների զարգացման կամ տեղի հայերի ուսուցումն իրականացնելու նպատակով:

Կողմ կարծիքներ.

- Հայաստանը պետք է դառնա Սփյուռքի ու արևմտահայերենի պահպանման երաշխավորը:
- Հայաստանից գնացած հայ երեխաների ծնողները հայկական դպրոցների փոխարեն ընտրում են օտարալեզու դպրոցները, քանի որ ուսուցումը արևմտահայերենով է, ինչը բավականին շփոթեցնում է երեխային և բարդացնում ուսուցման գործընթացը: Առաջարկում ենք մասնագետներ ուղարկվեն Հայաստանից:
- Ի՞նչ կարող է Հայաստանը Սփյուռքին տալ. իհարկե, գլխավորապես դպրոցներ, հեռավար դասընթացներ: Դրանց ղեկավարները կլինեն Սփյուռքից, կվերահսկեն ծրագրերը: Իսկ նյութերը պետք է սփյուռքահայերի կողմից ընտրվեն: Կարելի է նաև հեռավար համալսարաններ հիմնել, օրինակ, Լիբանանում, Աթենքում կան այդպիսիք: Կենտրոնը Հայաստանը կլինի, այնտեղի դասախոսները կարող են հաստատվել այստեղ, հեռավար կերպով վկայականներ տալ:
- Սփյուռքում հայերենի դասավանդման մասնագետների կարիք կա, բայց Լոս Անջելեսի հայկական դպրոցի աշակերտները շատ լավ արդյունքներ են գրանցում կրթության մեջ:
- Մենք Սփյուռքում կրթության մասնագետների կարիք ունենք, մեր դպրոցների ուսուցիչները տարիքով մարդիկ են. եթե գնան թոշակի, մեր երեխաները հայ ուսուցիչ չեն ունենա: Մեր գրքերն էլ հին են, մեզ օգնում է միայն Թումանյանի տուն-թանգարանը, բայց միայն Թումանյանի գրքերով:

Դեմ կարծիքներ.

- *Արդյո՞ք հայերենին տիրապետելը պարտադիր է: Կան շատ խելացի հայեր, որ միայն ռուսերեն են խոսում, բայց շատ կարևոր դեր կարող են խաղալ Հայաստանի համար:*

4 «Քաղաքացիական ասամբլեա»-ների կազմակերպում Սփյուռքում

65.38% (34.64%)

Ապագա Հայկականի Համաժողովի փորձի հիման վրա Սփյուռքի համայնքներում կազմակերպել քաղաքացիական ասամբլեաներ տեղի հայերի մասնակցությամբ միասնական որոշումների հանգելու նպատակադրմամբ:

Կողմ կարծիքներ.

- *Այս տիպի միջոցառումները շատ լավ գաղափար են, օրինակ, Հայաստան-Սփյուռք չընդհատվող կապի համար:*

5 «Back to Armenia» համահայկական շարժում

65.14% (64.78%)

Պետական մակարդակով մեծ ներգաղթի ռազմավարության որդեգրման դեպքում անհրաժեշտ հանրային աջակցության մեխանիզմի կայացում:

Կողմ կարծիքներ.

- Պետությունը պիտի կազմակերպի լայնածավալ ներգաղթ: Պետությունը պետք է զբաղվի սահմանամերձ տարածքները բնակեցնելով: Բնակչությունն այդ վայրերում ծերացող է:
- Առաջարկում եմ այնպիսի ծրագիր, որը կօգնի դրսում ապրող, սակայն վերադառնալ ցանկացող ընտանիքին հաստատվել Հայաստանում: Պայմանով, որ ժամանակի ընթացքում նա աստիճանաբար կվերադարձնի այդ օգնությունը՝ նպաստելով մյուս ընտանիքների վերադարձին:
- Ներգաղթ, թե հայրենադարձություն. տարբեր հասկացողություններ են, ես ավելի հակված եմ հայրենադարձության գաղափարին, որպես առաջին քայլ՝ պետք է գան երիտասարդ մասնագետները, այստեղ կան մասնավոր ընկերություններ, որ բարձր են վարձատրում:
- «Տաղանդների որս» անունով ծրագիր եմ առաջարկում, որի նպատակը կլինի կազմակերպել պայծառ ուղեղով երեխաների ներգաղթը Հայաստան, արտոնյալ ծրագրեր մշակել նրանց համար, որպեսզի նրանք հասունանան և դառնան այն ուժը, որը կաշխատի Հայաստանում և կունենա այդ գիտակցությունը, որ պետք է ծառայի ՀՀ-ին:

Դեմ կարծիքներ.

- *Մենք չենք կարող առաջիկա 5-10 տարիների ընթացքում կազմակերպել ներգաղթ, քանի որ մենք անվտանգային խնդիր ունենք: Ես ինքս ունեմ 16 տարեկան որդի, ինքը իմ միակ երեխան է, ես չեմ ուզում իմ երեխային զոհաբերեմ. վաղը նա պետք է ինձ խնամի:*
- *Անընդհատ խոսում ենք հայրենադարձության մասին, որ պետք է բերենք Սփյուռքի լավագույն մասնագետներին և վերաբնակեցնենք Հայաստանում: Հարց՝ իսկ Սփյուռքում ո՞վ պիտի մնա, չէ՞ որ Սփյուռքը, որպես ինստիտուտ, չպետք է թուլանա:*

6 Համահայկական լոբբիստական ցանց

64.51% (64.15%)

Հայկական լոբբիստական կառույցների կողմից իրականացվող մեծ աշխատանքի համալրում համահայկական միասնական ձևաչափով:

Կողմ կարծիքներ.

- Կարիք կա մի հարթակ ստեղծել, որտեղ կգրանցվի սփյուռքյան համայնքի առաջարկները դեսպանին և դեսպանությանը ներկայացնելու համար: Հնարավորինս ինստիտուցիոնալացնել դեսպան-համայնք փոխհարաբերությունները, դեսպանը պետք է հանդիսանա համայնքի միավորման կենտրոնը:
- Սփյուռքից ու Հայաստանից ամեն մեկս պետք է դառնանք Հայաստանի PR դեսպանն աշխարհով մեկ:
- Դրսում ապրելով՝ ես իմ առաքելությունն եմ համարում լավագույս ներկայացնել Հայաստանը, մենք ՀՀ-ի դեսպաններն ենք դրսում:
- Տարբեր երկրներում հայկական լոբբինգին նվիրված կազմակերպություն ունենալը շատ օգտակար կլինի: Կարևոր է Հայաստանի կողմից մշակել համապարփակ ռազմավարություն՝ որոշելու այն կոնկրետ ոլորտները, որտեղ պետք է կենտրոնացվեն այսպիսի լոբբիստական ջանքերը:

Դեմ կարծիքներ.

- *Համահայկական լոբբիստական ցանցը բոլոր երկրներում չի կարող աշխատել, օրինակ՝ Ռուսատանում դա արգելված է:*

7 «Հայաստան» ներդրումային ընկերություն

57.55% (57.23%)

ՀՀ տնտեսության զարգացման գործում յուրաքանչյուր հայի՝ բաժնետոմսերի գնման տեսքով մասնակցության հնարավորության ստեղծում:

Կողմ կարծիքներ.

- Պետք է ներդրումային նպատակային ծրագրեր անել Հայաստանում՝ գնահատելով առանձին համայնքների կարիքները:
- Սփյուռքի բիզնես շահերը պետք է համապատասխանեցնել Հայաստանի բիզնես շահերին և ներդրումային ծրագրեր բերել՝ ստեծելով տարբեր ներդրումային կառույցներ:
- Հայաստանին ուղիղ օգնություն պետք չէ, Հայաստանին պետք են ներդրումներ: Թող Սփյուռքը ոչ թե ուղղակի փող տա ու բողոքի, այլ ներդրում անի. և՛ ինքը կշահի, և՛ Հայաստանը:
- Պետք է ստեղծվի այնպիսի մի ֆոնդ, որը վստահություն կներշնչի, օր.՝ Իսրայելը դա ունի և շատ լավ աշխատում է:

Դեմ կարծիքներ.

- *Սփյուռքը Հայաստանում վերջին տարիներին շատ ներդրումներ է արել, բայց այդ ներդրումները լավ չեն լուսաբանվել:*
- *Չկա վստահություն Հայաստանի հանդեպ: Կոռուպցիան բարձր մակարդակի վրա է և դա մտահոգություններ է առաջացնում սփյուռքից ներդրումներ անելիս:*

8 Համահայկական ՏՏ ընկերություն

46.80% (46.54%)

Բաժնետիրական ընկերության մոդելով տարբեր ձևաչափերով մարդկանց մասնակցության հնարավորություն:

Կողմ կարծիքներ.

- Վերջին պատերազմը ցույց տվեց, որ սա արդեն տեխնոլոգիաների կռիվ է: Կարծում եմ, Սփյուռքի հետ ռազմարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված տեխնոլոգիական կենտրոնի ստեղծումը գոնե զգալիորեն կաջակցի մեր հզորացմանը:
- ՏՏ ոլորտում արդեն ձևավորված համագործակցություններ կան, և կարծում եմ, որ այդ առումով իրատեսական է ընդլայնել շփումները:
- ՏՏ ոլորտում Հայաստանի հայերն արդեն շատ առումներով համագործակցում են այլ երկրների հայերի հետ, առաջարկում եմ համախմբել այդ մարդկանց, ոլորտային խորհուրդներ ստեղծել և մեծ ցանց դարձնել:

Դեմ կարծիքներ.

- *Համաշխարհային ՏՏ ընկերություն ստեղծելը շատ անիրատեսական է, պետք է կարողանանք ռեալ գնահատել ամեն ինչ: Դա շատ վերացական և չիրականացող գաղափար է:*

9 Հայկական առցանց թանգարանի ստեղծում

39.21% (38.99%)

Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիման վրա առցանց թանգարանի ստեղծում:.

Կողմ կարծիքներ.

- *Յուրաքանչյուր համայնք ունի իր ուրույն մշակութային կենտրոնը, և պարտադիր չէ, որ դա հենց եկեղեցին լինի: Այստեղ կարևոր է համակարգումը:*
- *Հայաճանաչման գործում անհրաժեշտ է հայկական համայնքներում՝ փառատոնների և այլ միջոցառումների միջոցով ներկայացնել հայ մշակույթը, պարը, երգն ու երաժշտությանը ոչ միայն հայերին, այլ նաև օտարներին:*

- *Ես կողմ եմ առցանց թանգարանների ստեղծմանը. այնտեղ հայկական մշակույթը կներկայացվի որպես գլոբալ մշակույթի մաս:*
- *Թանգարան բացելու համար հաշվի պետք է առնել դրանից ածանցվող խնդիրները՝ ֆինանսական ռեսուրսներ, ներդրումներ, իրավական հարցեր, նյութերի պակաս և այլն: Մենք 21-րդ դարում ենք, ավելի պրակտիկ կլինի անել դա առցանց հարթակում:*

Դեմ կարծիքներ.

- *Առցանց թանգարաններ բացելու միտքն անհեթեթություն է: Չնայած բազմաթիվ համայնքներում կան և՛ առցանց, և՛ առկա թանգարաններ, նրանց գումարային տարեկան այցելությունների փաստացի թիվը հաճախ չնչին է:*

10 Սփյուռքի համայնքների հաջողված փորձի պորտալի ստեղծում

37.01% (19.61%)

Տարբեր ոլորտներում Սփյուռքի որևէ համայնքի հաջողված փորձի լուսաբանման և այլ համայնքներում տարածման մեխանիզմ, որը թույլ կտա լավագույն փորձը տարածել և ընդօրինակելի բոլորի համար:

Կողմ կարծիքներ.

- *Հրաշալի կլինի ակտիվացնել մի ցանց, որը հասանելի կլինի այլ երկրում ապրող հայերին: Ցանցից կարելի է տեղեկանալ, թե այդ երկրում ինչ հայ մասնագետներ կան, ում վրա կարելի է հույս դնել: Այդպիսով նա օտար երկրում կիմանա, որ կան հայ մասնագետներ, ովքեր պատրաստ են օգնել:*
- *Ստեղծենք Հայկական միասնական տեղեկատվական հարթակ, որպեսզի համայն հայությանը վստահելի տեղեկատվություն մատուցվի, բարձրաձայնվեն օրակարգային հարցեր և հաղորդակցվեն այդ թեմաներով:*

Դեմ կարծիքներ.

- *Հայկական սփյուռքի և Հայաստանի կապը ենթադրում է փորձի փոխանակում, և մեծ նշանակություն ունեն պարբերաբար Հայաստան այցելությունները:*

11 Միասնական ազգանուններ

12.01% (11.95%)

Հայաստանում կիրառվող ազգանունների «yan» վերջավորության և Սփյուռքում կիրառվող «ian» վերջավորության միասնականացման գործընթաց:

Կողմ կարծիքներ.

- *ԱՄՆ-ում, երբ օտարը տեսնում է, որ քո ազգանունը վերջանում է yan-ով, ասում է, որ քեզնից պետք է զգուշանալ, սակայն վստահում է ian-ով ազգանուն կրողներին: Նոր եկածներն ավելի ճարպիկ են ու հակված են խաբեության: Yan ազգանուն կրողները նոր են եկել:*

Դեմ կարծիքներ.

- *Արդյո՞ք ամեն մարդ արժանի է հայ կոչվել, պատվով կրելու հայի տիտղոսը միայն նրա համար, որ իր ազգանունն ավարտվում է յան-ով:*

3.3.3 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ (ՕՐ 3)

1 **Ներգաղթի կազմակերպման ու քարոզչության գործակալություն**

Ներգաղթի գործընթացի մասնագիտական կառավարման մարմին, որը նաև կկարողանա կանխատեսել մոտակա հնարավոր հոսքերը դեպի Հայաստան և պատշաճ կերպով պատրաստվել մարդկանց ներգաղթին:

74.94%
(79.49%)

Supporting comments:

- Բեյրութում հայերն այսօր շատ վատ վիճակում են. մենք կարող ենք արագ կազմակերպել հայերի ներգաղթն այն երկրներից, որտեղ իրավիճակը շատ վատ է, ոչ թե այն երկրներից, որտեղ ապահով են ապրում:
- Սփյուռքի ծնողներին կարելի է ասել, որ, օրինակ, Հայաստանում թմրանյութ չկա, կարող եք ձեր երեխաներին ապահով ուղարկել Հայաստան: Այսինքն, առկա ռեսուրսներով կարելի է այնպիսի իրավիճակ ստեղծել, որ նույնիսկ այն մարդիկ, որ թերահավատորեն են մոտենում Հայաստանին, մտածեն ներգաղթի մասին:
- Ես կողմ եմ կառավարելի ներգաղթին. պայմաններ ստեղծվեն, ընդունենք օտարազգի մարդկանց, օրինակ՝ Հնդկաստանից՝ 3 000-5 000 մարդ: Եթե կարողանանք կազմակերպել այդ համայնքներից մեր հայրենակիցների ներգաղթը, նրանց սիրով ընդունենք, բնակարաններ կառուցենք նրանց համար, ինտեգրենք նրանց, սովորենք միասին ապրել՝ սա մեր փրկությունը կլինի: Իսկ այլազգիների ներգաղթը պետք է խստորեն կառավարվի:
- Առանց պետական ծրագրի հնարավոր չէ ներգաղթ ապահովվել: Որքան էլ ուզենամ Հայաստան վերադառնալ, հասկանում եմ, որ բազմաթիվ խնդիրներ են ծառանալու իմ առջև: Իսկ եթե պետական ծրագիր լինի, ապա ես վստահ կլինեմ, որ կարող եմ հեշտությամբ բնակարան ու աշխատանք գտնել, ներդրում անել կամ իմ բիզնեսն այստեղ կազմակերպել:
- Ներգաղթի հանձնախումբը (կամ նախարարությունը) պետք է ապահովի լեզվի ուսուցում, մասնագիտական, հայաստանյան աշխատաշուկային համապատասխան վերապատրաստում, անվճար կամ ցածր վճարով դպրոց, մանկապարտեզ, սոցիալական անվտանգության երաշխիքներ, մատչելի բնակարաններ:

- Մեզ պետք են կառույցներ, որոնք հստակ կզբաղվեն ներգաղթով: Իսրայելում մինչև հիմա օդանավակայանից դիմավորում են մարդուն և պետական ծրագրով ապահովում նրան կրթությամբ և աշխատանքի հնարավորություններով:

Դեմ կարծիքներ.

- *Եթե իրատեսորեն նայենք, ով գնացել է, չի վերադառնալու: Ավելի շատ պետք է հասկանալ ինչ անել նրանց համար, ովքեր մնացել են: Ամենից առավել պետք է կենտրոնանալ բնակչության բնական աճի ապահովման վրա:*
- *Եթե իմ ամուսնուն թողնեմ, ինքը կցանկանա գալ ու ապրել Հայաստանում: Բայց երբ ես տեսնում եմ ԱՄՆ-ի հնարավորությունները, վստահ եմ, որ իմ երեխան ԱՄՆ-ում ավելի հեշտությամբ առաջ կգնա:*
- *Ոչ ոք չի ուզում գալ պատերազմող երկիր, անգամ եթե պատերազմող երկիրը նրանց հայրենիքն է, նրանք նախընտրում են մնալ, այլ ոչ թե հայրենադարձվել:*

2 «Երեխաները՝ նախևառաջ» նախաձեռնություն

66.47% (70.51%)

Երեխաների զարգացմանը, ուսմանը միտված՝ գործող բազմաթիվ ծրագրերի փոխգործակցության հարթակ, որը էապես կավելացնի դրանց ընդգրկունությունը:

Կողմ կարծիքներ.

- Պետությունը պետք է կարևորի յուրաքանչյուր երեխայի ծնունդը, և խոսքը միանվագ վճարների մասին չէ: Պետության քաղաքականության առաջնահերթություններից մեկը պետք է լինի երեխաների ծնունդին նպաստելը, անկախ նրանից՝ ընտանիքը ապահովված է, թե ոչ: Ընտանիքներին տրամադրվող նպաստն էլ չպետք է կոչվի «աղքատության նպաստ»:
- Եթե ուզում ենք զարգանալ, խթանել երեխա ունենալը, պետությունը պետք է պաշտպանի երեխային՝ անկախ նրանից, թե ովքեր են նրա ծնողները:
- Մարզերում երեխաների համար կրթական հաստատություններ պետք է լինեն, օր.՝ Թումոյի նման կենտրոններ:
- Երեխայի ապահովագրությունը շատ կարևոր է ժողովրդագրական խնդրի լուծման տեսանկյունից:
- Կուտակային ֆոնդեր արժի ստեղծել երեխաների համար, որ ապագա կրթության հարցը լուծվի, և սա կարող է խթան դառնալ ծնողի համար:

Դեմ կարծիքներ.

- *Յուրաքանչյուր երեխային պետության կողմից գումար տրամադրելը մարդկային աճին նպաստելու ընդամենը ժամանակավոր լուծում է: Այն չի կարող նպաստել բնակչության որակական աճին, եթե այլ պայմանները բարելավված չլինեն, քանի որ երեխաները մեծանալու են և անբարենպաստ պայմանների պատճառով հեռանան Հայաստանից:*

3 Հանրային առողջության, առողջ ապրելակերպի իրազեկում-նախաձեռնություն

64.66% (68.59%)

ISարբեր խողովակներով և հարթակներով հանրային առողջության և առողջ ապրելակերպի վարման իրազեկման միջոցառումների և մարքեթինգային արշավների իրականացում:

Կողմ կարծիքներ.

- *Սոցիալ-տնեսական հարցը պետք է կարգավորվի պետական մակարդակով, մեր երկրում առողջապահությունը շատ թանկ արժե: Մեր երկրում մեկ հիվանդը մեծ խնդիր է 100 առողջի համար:*
- *Այստեղ արտաամուսնական ծնունդներն ընդունված չեն, երիտասարդներն էլ 30 տարեկանից հետո են ձգտում ամուսնանալ, տարիքի հետ էլ առաջանում են առողջական շատ խնդիրներ, ինչը բարդացնում է երեխա ունենալը: Այստեղից էլ գալիս է խնդիրը:*
- *Շատ կարևոր է նաև առողջապահական համակարգի որակի հարցը, անպտղության բարձր ցուցանիշը: Ցածր է առողջ ապրելակերպով ապրողների թիվը, անպտղության վրա ազդում են վատ սովորությունները:*
- *Ցավոք սրտի, առողջապահության հարցերով Հայաստանի բնակչությունն անգրագետ է: Ամենաազդեցիկ միջոցը հեռուստատեսությունն է, պետք է լինի մի պետական ալիք, որն առողջապահության թեմաների վերաբերյալ հանրային իրազեկմամբ կզբաղվի:*
- *Ոչ միայն հայ աղջկան պետք է կրթել, թե դու պետք է երեխա ունենաս և վերջ, այլև տղային էլ է պետք դաստիարակել, որ նորմալ ընտանիք ստեղծի:*

4 Առցանց համահայկական ծանոթության հարթակ

53.18% (56.41%)

Գրագետ կառավարվող, հայտերի հանգամանորեն ստուգման և միայն հայմասնակիցների գրանցման արդյունքում ծանոթանալու և ընտանիք կազմելու հարցերով հետաքրքրված հայ երիտասարդների շփումների հեշտացում:

Կողմ կարծիքներ.

- *Առաջարկում եմ մի ծրագիր մշակել, որը կօգնի սփյուռքի տարբեր համայնքների միջև ծանոթություններ ստեղծելուն, ինչն էլ իր հերթին կնպաստի ամուսնությունների աճին:*
- *Ֆրանսիայի օրինակով կարող եմ ասել, երբ համայնքում կամ ծանոթների շրջանակում հայ զուգընկեր չեն կարողանում գտնել, և արդեն ամուսնանալու տարիքն է, հաճախ գալիս են Հայաստան, ու շատ հաջողված զույգեր են ձևավորվում:*
- *Կարելի է Հայաստանում հաճախակի երիտասարդական ֆորումներ կազմակերպել, որը կխթանի, որ տարբեր երկրներից հայ երիտասարդները հավաքվեն մեկ վայրում: Միասին անցկացրած ժամանակը միգուցե նպաստի, որ մասնակիցները ընտանիք կազմեն:*
- *Կարելի է անգամ հատուկ ֆորումներ կազմակերպել, որ մարդիկ հավաքվեն հենց ամուսնության նպատակով: Տարբեր երկրներից գան Հայաստան՝ հայ կողակից գտնելու:*

5 Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների կառավարման աջակցության կառույցներ

53.18% (56.41%)

Մարզերում և Երևանում ընտանեկան վեճերի, ամուսնալուծության եզրին կանգնած ընտանիքներին մասնագիտական աջակցություն, խորհրդատվություն տրամադրող կենտրոնների (այդ թվում՝ գործող) ցանցի ստեղծում:

Կողմ կարծիքներ.

- *Այսօր փոքրամասնություն են այն մարդիկ, որոնք ցանկանում են շատ երեխաներ ունենալ: Այսօր մարդիկ չեն ամուսնանում, քանի որ գործ չունեն, կան երիտասարդներ, որոնց ծնողներն են աջակցում: Կարծում եմ առավել լուրջ խնդիր է ամուսնությունը պահպանելը. այսօր իմ մանկապարտեզում երեսուն տոկոսը միայնակ մայրեր են:*
- *Ամուսնալուծությունների թիվը շատ-շատ է աճել. այսօր երիտասարդները հնարավորինս հեշտ են ուզում լուծել այդ հարցը, ուղղակի ամուսնալուծվում են և չեն էլ փորձում այլ լուծումներ գտնել:*
- *Ընտանիքի աջակցման կենտրոններ պետք է հիմնել, որոնք կօգնեն կրճատել ամուսնալուծությունների թիվը:*
- *Պատճառներից մեկը, որ ես չեմ ամուսնացել հայ տղամարդու հետ, այն է, որ հայ տղամարդու համար բոլոր կենցաղային հարցերը միայն կնոջ համար են, դրանք միայն կնոջ պարտականություններն են:*

6 ԱՄՆ Կոնգրեսի Սոցիալական ապահովության (Social Security) օրենքում լրացում կատարելու լոբբինգ

51.37% (54.49%)

Հայ թոշակառուների համար հնարավորության ստացում ԱՄՆ-ից բացակայելու պայմաններում ստանալ իրենց կենսաթոշակը, ինչը կխթանի հայրենադարձությունը:

Կողմ կարծիքներ.

- *Թոշակառուները ԱՄՆ-ից կարող են գալ այստեղ ու ստանալ իրենց թոշակները: Իրենց երեխաներն ու թոռներն էլ կգան Հայաստան ու կծանոթանան իրենց հայրենիքի հետ:*
- *Ըստ իմ տեղեկությունների, հիմնական պայմանները, որոնք կնպաստեն սփյուռքահայերի վերադարձին, կենսաթոշակի վճարումն ու առողջապահության ապահովագրությունն են: Իսկ երիտասարդների մասով՝ ԲՈՒՀ-երի ուսման վճարների նվազեցումը և բնակարանային ֆոնդի հասանելիությունը:*
- *Շատ մարդիկ կան, որոնք ողջ կյանքն ապրել են դրսում, թոշակի անցնելուց հետո վերադարձել են, սակայն նրանց երեխաները չեն վերադառնում:*
- *Եվրոպացի թոշակառուների համար Հայաստանն իրենց երազած երկիրն է՝ համով ուտեստներով, լավ գինիով, ջերմ մարդկանցով, բնությամբ, հաճելի միջավայրով:*
- *Ընդամենը մի քանի պատճառ կա, որ կստիպի սփյուռքահայերին վերադառնալու Հայաստան՝ բիզնես գաղափարը, ամուսնանալը, ծերությունը վայելելը, կրթություն ստանալը: Ընդամենը մի քանի ոլորտ է, եկեք այս բոլոր ուղղություններով ուղղակի ճիշտ աշխատանք տանենք:*

7 «Առնվազն 4 երեխա» հանրային շարժում

Քարոզչական մեծ ալիքի ձևավորման և ուղղորդման հարցերում ուժերի համատեղման մեխանիզմ։

48.95% (51.92%)

Կողմ կարծիքներ.

- *Սոցիալապես անապահով ընտանիքներն ավելի շատ երեխա են ունենում, քան ապահովվածները. երեխա ունենալու համար շատ փող պետք չի:*
- *Ի սկզբանե ուզեցել ենք չորս և ավելի երեխա ունենալ, անվտանգությունը խնդիր չէ ինձ համար: Մեր խնդիրը կնոջս կարիերան է և առողջությունը, այդ պատճառով սահմանափակվել ենք երկու երեխայով:*
- *Կարելի է հարկերի նվազման քաղաքականություն ունենալ, այսինքն՝ ինչքան շատ երեխա ունես, այնքան նվազում է հարկերի բեռը: Սա պրակտիկա է, որը օգտագործվում է Ամերիկայում և Ֆրանսիայում:*
- *Ներկա խայտառակ ժողովրդագրական վիճակը գալիս է սխալ կառավարումից: Պետք է խրախուսվեն գյուղում ապրող բազմազավակ ընտանիքները, ոչ թե պարգևավճարներ բաժանվեն:*
- *Սոցիալական արտոնությունների փաթեթներ առաջարկենք: Օր.՝ ունես 4 երեխա, նրանցից մեկին տրվում է հնարավորություն անվճար սովորել լավագույն ԲՈՒՀ-ում:*

Դեմ կարծիքներ.

- *Ամբողջ աշխարհում էլ մարդիկ ավելի քիչ են երեխաներ ունենում, մենք չենք կարող դա կանգնեցնել, կարող ենք միայն օգնել մի քիչ ավելի դանդաղի պրոցեսը:*
- *Երեխա չեն ունենում կամ ուշ են ունենում, որովհետև մտածում են երկրից գնալու ու այնտեղ երեխա ունենալու մասին: Ձգտում են այդ գործընթացը հետաձգել, որ գնան, փաստաթղթերը կարգավորեն, նոր երեխա ունենան:*
- *Արցախյան վերջին պատերազմի ժամանակ գնացել էինք հանրակացարան, որտեղ Արցախից եկած ընտանիքներ էին՝ 5 երեխա ունեցող: Գալիս էի, պատմում շրջապատիս, ասում էի, տեսեք ինչ բարդ պայմաններում են ապրում, ասում էին՝ է, թող էդքան երեխա չբերեին:*

8 Բարձրակարգ գեղարվեստական ֆիլմ՝ նվիրված միայնակ մոր կերպարին

Առանց ամուսնու երեխա ունենալու որոշում կայացրած կնոջ մասին պատմող ազդեցիկ ֆիլմ, որը նաև շատ ուսուցողական կլինի։

29.01% (30.77%)

Կողմ կարծիքներ.

- *Միայնակ կանայք պետք է իրավունք ունենան երեխա ունենալու, ու հասարակությունը չպետք է նրանց քարկոծի դրա համար:*
- *Փոխանակ սեր ցույց տանք այն աղջկան, որ առանց ամուսնու երեխա է մեծացնում, անբարոյական ենք որակում նրան: Դա անցած դար է, պետք է հասկանալ, որ կյանքն արդեն ուրիշ է:*

- *Հասարակությունն իրավունք չունի միայնակ մորը պիտակավորելու, պետք է քարոզել, որ պիտակավորումը կիրառվի ոչ թե երեխա ունենալու դեպքում, այլ այդ երեխային սխալ դաստիարակելու պարագայում:*
- *Միայնակ մայրերին խթանող ակտիվ ծրագրեր է հարկավոր ներդնել: Խոսքը միայն ֆինանսական աջակցության մասին չէ: Անհրաժեշտ է աշխատել հասարակության վերաբերմունքի վրա: Օր.՝ գտնել հաջողված միայնակ կանանց և նրանց մասին մեդիայի նյութեր ստեղծել, կինոներ նկարել՝ հաջողությունների, ձեռքբերումների ու ընտանիքում երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների մասին:*
- *Մայրությունը գովազդող քարոզարշավ է պետք, որպեսզի մայր դարձած ու հաջողակ բիզնես-կանայք օրինակ դառնան: Կանայք պետք է հասկանան, որ դա հնարավոր է, մեկը չի բացառում մյուսը:*

Դեմ կարծիքներ.

- *Այնուամենայնիվ, պետական քաղաքականության հիմքում պիտի լինի լիարժեք՝ առնվազն հոր և մոր կազմով ընտանիքների խթանումը: Միակ ծնողով ընտանիքում երեխայի զարգացումը ոչ միայն ֆինանսական խնդիր է, այլև ճիշտ զարգացման ու դաստիարակության:*

9 «Արտագաղթելն ամոթ է» հանրային շարժում

22.36% (23.72%)

Քարոզչական ամենատարբեր գործիքների կիրառմամբ արտագաղթելու հակում պարունակող հանրային մթնոլորտի, մարդկանց վարքագծի փոփոխություն:

Կողմ կարծիքներ.

- Կարծում եմ՝ սփյուռքում ապրողներն արդեն ունեն իրենց հարմարավետության գոտին, և դա փոխելն ու իրենց հետ բերելը շատ դժվար է: Ավելի հեշտ ու տեղին կլինի խոպան գնացողներին հետ պահենք ու այստեղ զարգացնենք իրենց պոտենցիալը: Օտարերկրացիների ներգաղթը նույնպես ողջունելի է:

Դեմ կարծիքներ.

- *Պետք է «ամոթ է արտագաղթել» լոզունգը փոխարինել «հպարտություն է մնալը» լոզունգով... Այսպիսի պռոպագանդան ավելի հնչեղ ու ազդեցիկ կլինի:*
- *«Արտագաղթն ամոթ է» լոզունգը ավելի ամոթ է, մենք պետք է երեխային այնպես կրթենք, որ իր արյան մեջ լինի այդ գիտակցությունը:*
- *Ամոթ է, երբ հասուն տղամարդն իր ընտանիքը չի կարողանում պահել: Արտագաղթելն ամոթ չէ:*

CONVENTION
OF THE FUTURE
ARMENIA
Defining
our future
collectively
OBSERV
B

4 ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈԳԻՆ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Հայաստանի և հայության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու համար Ապագա Հայկականի Համաժողովը նպատակ ուներ վերակենդանացնել հանրային բանավեճը, ակտիվացնել քաղաքացիներին և հաղթահարել առկա բևեռացումը: Ըստ այդմ, Համաժողովը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

Միասնականություն. Հայաստանի և հայության առջև ծառացած մարտահրավերները հնարավոր է լուծել միմիայն աշխարհասփյուռ հայության միասնականության միջոցով: Համաժողովը հանդիսանում է համահայկական երկխոսության հարթակ՝ մեկ հարկի տակ միավորելով փորձագիտական համայնքի ու հասարակության ամենատարբեր խմբերի ներուժը՝ նպաստելով ինչպես փորձագիտական, այնպես էլ հանրային ակտիվ քննարկումներին:

Ներառականություն. Համաժողովի մասնակցության գրանցումը բաց էր Հայաստանից, Արցախից և Սփյուռքից բոլոր ցանկացողների համար: Չունենալով չափահաս քաղաքացիների մասնակցության որևէ սահմանափակում՝ Համաժողովն իր շուրջն է համախմբել աշխարհասփյուռ հայության համամասնորեն արտահայտված սեռատարիքային, կրթական և աշխարհագրական բոլոր շերտերն ընդգրկող խմբերին: Համաժողովին գրանցված, սակայն վիճակահանության փուլը չհաղթահարած յուրաքանչյուր հետաքրքրված անձ հնարավորություն է ունեցել իր ձայնը լսելի դարձնել նախատեսված այլ ձևաչափերով:

Թափանցիկություն. Համաժողովի ամբողջ ընթացքը՝ ներառյալ փորձագիտական հանձնախմբերի աշխատանքը, մասնակիցների ընտրության վիճակահանությունը, հանրային քննարկումներն ու գործընկերային ցանցերի ձևավորման գործընթացը, բաց է և հրապարակային: Բոլոր շահագրգիռ կողմերն այդ ամենին հետևելու հնարավորություն ունեն ինչպես մեր պաշտոնական կայքէջում, այնպես էլ սոցիալական հարթակներում ու լրատվական աղբյուրներում:

Հանրային արդյունք. Համաժողովի շրջանակում ընդունված բոլոր առաջարկություններն ու ծրագրերը հանդիսանում են հանրային սեփականություն և հասանելի են պետական ու մասնավոր ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ դրանց հնարավոր տարբերակները մշակելու համար: Որպես ուղիղ ժողովրդավարության ինքնատիպ գործիք՝ Համաժողովը հանրության բոլոր շերտերի ջանքերի մեկտեղման հարթակ է:

Նոր մոտեցում, նոր արդյունքներ. Մենք միասին ձևավորում ենք քաղաքացիական մասնակցության նոր մշակույթ, որի առանցքը երկխոսությունն է և հավաքական պատասխանատվության գիտակցումը: Հայկական իրականության մեջ նմանը չունեցող Համաժողովն իր մոտեցումներով պետք է նպաստի պետության ու հասարակության համար կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ խոսույթի ձևավորմանը և խնդիրների հաղթահարման ուղիների մշակմանը:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱԿԵՐՏԸ՝ ՄԵԿ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Համաժողովի մասնակիցներն աշխարհի տարբեր ծայրերից ու Հայաստանի բոլոր մարզերից դահլիճ էին բերել իրենց համայնքների «համն ու հոտը», մշակույթը: Որպես մեկ ամբողջություն՝ նրանք դարձել էին համահայկական իրականության բավականին ներկայացուցչական խումբ՝ մեկ վայրում:

- «Ես **ստամբուլահայ** եմ և համարում եմ, որ ես Սփյուռք չեմ, որովհետև ապրում եմ իմ պատմական հողերում, իսկ Սփյուռքն այն է, որ ապրում է հեռու»
- «Ես **Գորիսից** եմ, քեռիս զոհվել է, եղբայրս կռվել է, ինձ համար առաջնայինը Հայաստանի անվտանգությունն է»:
- «Մենք ունեինք 23 դպրոց **Լիբանանում**, իսկ այսօր՝ շատ ավելի քիչ»:
- «Ես ապրում եմ **Ֆրեզնոյում**, բայց ամեն օր երազում եմ հայրենիք վերադառնալ, սա ինձ համար ամենացավոտ հարցն է»:
- «ՌԴ **Կրասնոդար** քաղաքում 4 առաձին հայկական համայնք ունենք»:
- «Ես ծնվել եմ **Ֆրանսիայում** և ֆրանսիացիների մոտ ես ոչ մեկին ոչինչ ապացուցելու բան չունեմ որպես հայ»:
- «**Վոլգոգրադում** հայ համայնքին հիմնական միավորող բանն ազգային տոներն են, ինչը շատ քիչ է հայ մնալու և երիտասարդներին միավորելու համար»:

- «Հինգերորդ սերունդ **արգենտինահայ** եմ և տակավին ինձ հայ եմ զգում, թեև Արգենտինայում կան այլ ազգեր, որոնք երրորդ սերնդից հետո այլևս ձուլված են, հայերս՝ բացառություն ենք»:
- «**Կալուգայի** մարզում 180 հազար հայ է ապրում, բայց համայնք չունենք, հայկական դպրոց չկա. Քեսաբում հայերը մի քանի հարյուր են՝ իրենց դպրոցներն ունեն»:
- «Սփյուռքում հայերենի դասավանդման մասնագետների կարիք կա, բայց **Լոս Անջելեսի** հայկական դպրոցի աշակերտները շատ լավ արդյունքներ են գրանցում կրթության մեջ»:
- «Ես **Վանաձորից** եմ, դեռ մանկությունից շփումներ ենք ունեցել մեր հայրենադարձ ազգակիցների հետ. բոլորն արտակարգ մասնագետներ էին, որոնք մեզ թարմություն բերեցին»:
- «Ծնվելով **Իրանում** և կրելով իրանական մշակույթը՝ ես, միևնույն է, հոգով ինձ հայ եմ զգում և հոգեպես կապված եմ Հայաստանին»:
- «**Շվեդիայում** սփյուռքը կազմակերպված չէ, սակայն մեր օրը սկսում է Հայաստանից լուրերով»:
- «Հայաստանն իմ հոգին է, **Ջավախքը**՝ իմ մարմինը»:

ՕԴՈՒՄ ԹԵԱԾՈՂ ԲԱՌԸ՝ ՆՊԱՏԱԿ

Մասնակիցները գրեթե լիարժեք համաձայնության էին եկել նպատակադրումների կարևորության հարցում: Նրանք կարող էին չհամաձայնվել միմյանց հետ տարբեր հարցերում, բուռն բանավիճել, բայց մի հարցում բոլորն իրար հետ համաձայն էին՝ հայերը պիտի կարողանան հստակ նպատակներ դնել և գնալ դրանց ուղղությամբ:

- Հայերին պետք է միավորի ոչ թե լեզուն կամ հողը, դրանք միջոց են, այլ **նպատակը**:
- Հայերս շատ ենք սիրում տարաձայնություններ, բայց մեր **մեծ նպատակի** համար բոլորս պետք է համախմբվենք:
- Ամեն ինչ կախված է **մեր նպատակներից**: Ապագան ստեղծելու համար մեզ պետք է հասկանալ, թե մեր ժառանգությունը որն է, զարգացնել մեր ժառանգությունը, ստեղծել նոր արժեհամակարգ ու այդ նոր ժառանգությունն «արժեհամակարգով» փոխանցել եկող սերունդներին:
- Ցեղասպանության ճանաչումը նպատակ չէ, դա ուղի է, որը պետք է անցնենք: Մենք պետք է հստակ ձևակերպենք՝ **որոնք են մեր նպատակները**:
- Ամբողջ կյանքում լսել եմ միասնականություն, բայց մեծանում ենք ու հասկանում, որ դա ընդամենը խոսքեր են: Մենք պետք է ունենանք **միասնական նպատակ**, որ այդ բառն իմաստ ստանա: Դա կարող է լինել Արցախը:
- Իսրայելի օրինակով պետք է **նպատակ սահմանել**, որ Հայաստանի բնակչության աճի շնորհիվ Հայաստանի հայերի և սփյուռքի հայերի թիվը գրեթե հավասար լինի:
- **Նպատակներուն առաջինը** պետությունն է: Հայը պիտի ուզե, որ կարգին պետություն ունենա: Երբ պետությունը համահայկական ըլլա, բոլորը կուզենան դրա մեջ լինեն:
- Տարիներ շարունակ հայերի **համախմբման նպատակը** եղել է Ցեղասպանության ճանաչումը, եթե այսօր Հայ դատն առաջնային խնդիր չէ, ապա պետք է մտածել մեկ այլ «դատի» մասին, որը կհամախմբի մեկ նպատակի շուրջ հայերին:
- Այս նախաձեռնության շրջանակում մշակվել են արդեն հստակ առաջարկներ, մենք պիտի սկսենք դրանք իրականացնել: Առաջին անգամ մեր առջև **ձևակերպված նպատակներ** ունենք, որոնք ձևավորվել են փորձագետների մասնակցությամբ, պետք է առաջ գնալ, սա լավ սկիզբ է:

ԲԱՆԱՎԵՃԸ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐՈՒՄ

«Ճշմարտությունը ծնվում է բանավեճում» պնդումը խիստ իրական էր թվում համաժողովի սրահում: Շատ ու շատ հնչած մտքեր հակառակ դիտարկմանն էին արժանանում, երբեմն էկրանների միջոցով բանավեճն ընթանում էր ոչ թե մեկ սեղանի շուրջ, այլ քննարկման սեղանների միջև: Բայց բոլոր անհամաձայնությունները ոչ թե ընդհատում էին մտածելու ընթացքը, այլ, ընդհակառակը, ստիպում մասնակիցներին գտնել նոր՝ բոլորի համար ընդունելի լուծումներ:

- **Պետք է կազմակերպվի Սփյուռքի ներգաղթ** Հայաստան, քանի որ հիմա նպաստավոր ժամանակ է այդ գործի համար:
- **Ես համամիտ չեմ ներգաղթի հետ,** շատ սփյուռքահայեր ավելի օգտակար են այլ երկրներում:
- **Պետք է ստեղծել մի համակարգ,** որ Սփյուռքում յուրաքանչյուր համայնք իր ներկայացուցիչն ունենա Հայաստանի կառավարությունում և կարողանա տարբեր ոլորներում իր օգնությունը ցուցաբերել:
- **Կարևոր չէ,** որ Սփյուռքից մարդիկ լինեն կառավարման համակարգում, կարևոր է, որ ուղղակի սփյուռքի ձայնը լսելի լինի՝ մի գործող հանձնաժողով ստեղծվի, որտեղ կհավաքվի սփյուռքի առաջարկությունները և կքննարկվի կառավարությունում:
- Ցանկացած սփյուռքահայ պարտավոր է որպես հայ **տուրք վճարի**:
- **Ես համաձայն եմ,** որ բոլոր հայերը տուրք վճարեն, բայց դա չպետք է կոնկրետ թվով սահմանել:
- Պարտադրել գումար, այն էլ կոնկրետ գումար, կարծում եմ՝ **աբսուրդ է**:
- Մայրությունը միշտ պետք է խրախուսվի. եթե մինչև ինչ-որ մի տարիք չի ստացվել ընտանիք կազմել, կարծում եմ **պետք է երեխա ունենալ առանց ամուսնանալու**:
- Եթե կինն առանց ամուսնության զավակ է ունենում, **դա անբարոյականություն է**: Ավելի լավ է չբազմանանք, բայց լինենք բարոյական:
- Եթե **ունենանք Սփյուռքի խորհրդարան** և մարդիկ ունեն մեկը, որը իրենց կներկայացնի՝ սփյուռքը կդառնա ավելի հայաստանակենտրոն:
- **Չեմ կարծում,** որ եթե լինի Սփյուռքի առանձին պառլամենտ այդ պառլամենտի որոշումներին **լուրջ մոտեցող կամ լսող կլինի**, դա ավելի շատ ֆիկտիվ դեր կունենա:
- Հայաստանի և Սփյուռքի երիտասարդները կարող են ամուսնանալ, բայց միայն **Հայաստանում ապրելու պայմանով:**
- **Էական չէ, թե որտեղ կապրի** Հայաստանի ու Սփյուռքի հայերի կազմած զույգը: Եթե այստեղից մի հայ պակասում է, այլ երկրի հայ համայնքում է ավելանում:
- Հարկավոր է Հայաստանից դուրս գտնել մարդկանց, ովքեր կաջակցեն տեղեկատվության տարածմանը: Հուշահամալիրների, **թանգարանների բացումը կնպաստի,** որ առավել շատ թվով մարդիկ տեղյակ լինեն ու հիշեն, թե ինչ է կատարվել:
- **Անիմաստ է թանգարանների բացումը:** Ռուսաստանում, որտեղ հայ ամենամեծ համայնքն է, կա հրաշալի թանգարան, բայց տարեկան ինչքա՞ն այցելություն ունի:

ՀԵՆՎԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎՐԱ

Աշխարհի տարբեր կողմերից ժամանած հայերն իրենց հետ բերել էին նաև գիտելիքներ այս կամ այն խնդրի լուծման հարցում տարբեր երկրների փորձի վերաբերյալ: Ամենաշատ հիշատակված փորձը 3 օրերի ընթացքում Իսրայելինն էր՝ խնդիրների լայն շրջանակի համար՝ ցեղասպանության ճանաչման հարցից մինչև ներգաղթի կազմակերպում:

- **ԱՄՆ-ում կա** թայմշեյր հասկացություն, նման մի բան կարելի է ներդնել Հայաստանում եւ մեր երիտասարդներին բերել Հայաստան:
- Մեզ պետք է խորապես ուսումնասիրել **իսրայելական** և **իռլանդական փորձը՝** տեսնելու, թե ինչպես են իրենք աշխատում իրենց սփյուռքի հետ:
- Հրեաները **Հոլոքոստի թանգարանում** համերգներ են կազմակերպում: Երբ ամերիկացիները գնում են համերգ, անուղղակիորեն առնչվում են Հոլոքոստին, տեղեկանում, ծանոթանում: Այսինքն, մշակույթի միջոցով անուղղակիորեն Հոլոքոստը հանրայնացնում են:
- Մեզ պետք են կառույցներ, որոնք հստակ կաշխատեն ներգաղթը կազմակերպելով: **Իսրայելում** դեռ օդանավակայանից դիմավորում են մարդկանց և պետական ծրագրով ապահովում այդ մարդուն կրթության և աշխատանքի հնարավորություններով:
- **Թուրքիայում** երեխաների համար մինչև 7 տարեկան ամեն ինչ անվճար է՝ տրանսպորտ, դպրոցներ և այլ, մյուս կողմից եթե երեխայի տատիկը խնամում է թոռնիկին, պետությունը գումար է տրամադրում՝ թոշակ է տալիս տատիկին: Կարելի է նմանատիպ ծրագիր իրականացնել, որ երեխան ընտանիքի և տատիկ-պապիկների համար «բեռ» չհանդիսանա:
- **Մոլդովան** համեմատաբար նոր Սփյուռք ունի, բայց կարողացել է մեծ դոնորներ ներգրավել ու ամրապնդել Սփյուռքի հետ իր կապը: Այդ օրինակը կարող է օգնել ՀՀ-ին:
- Պետք է Սևանում մի ճամբար կազմակերպել՝ **Արտեկի նման**, որ Սփյուռքից ծնողը կարողանա իր երեխային ուղարկել ամռանը: Թող այնտեղ ապրի, օրգանական շփում ապահովի հայրենիքի հետ:
- 1818թ. **Սինգապուրում** բուսաբանական այգու համար կանոնադրություն է գրվել, որն այսքան տարիների ընթացքում չի փոխվել: Իրենք առաջ են գնացել դրանով ու ոչ մի բան չեն փոխել: Մեր լոբբիստական ընկերությունները նույնպես պետք է հստակ կանոնադրություն մշակեն, որը պետք է գա Հայաստանից:

ՍԱՀՄԱՆԵՆՔ
ՄԵՐ ԱՊԱԳԱՆ
ՄԻԱՍԻՆ

ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԻՄՔՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միասնականություն. այս բառը շեշտվում էր գրեթե անընդհատ: Բոլոր նպատակներին հասնելը, բոլոր դրված խնդիրների լուծման ճանապարհը մասնակիցները տեսնում էին հենց միասնական լինելու միջոցով, իսկ միասնականության բացակայությունը համարվում էր հիմնական խոչընդոտներից մեկն ամեն ինչում:

- Մենք որպես ազգ միասնական չենք, ու աշխարհին **միասնական չենք** ներկայանում:
- Ուժեղանալ նշանակում է **միասնական դիրքից հանդես գալ**՝ վերականգնել վստահությունը մեր հասարակության և պետության միջև, Սփյուռքի ու պետության միջև:
- Ես Սփյուռքի մեջ չեմ տեսել **միասնականություն**, Հայաստանի մեջ չեմ տեսել միասնականություն:
- **Միասնականությունը պետք է խարսխել** մի քանի կետերի վրա՝ ազգ, հայրենիք, ժողովուրդ, կրոն:
- Միասնական հայրենիք ունենալու համար պետք է **միասնական գաղափարի** շուրջ համախմբվենք:

- Մենք պետք է ընդհանուր հայտարարի գանք, **լինենք ՄԻԱՍՆԱԿԱՆ**: Ամեն ինչի սկիզբը միասնականությունն է:
- Իմ կարծիքով **միասնականությունը** հանդուրժողականությունն է:
- Հայ ազգի **միասնականություն** կարող է լինել միայն անվտանգության խնդրի շուրջ: Սա է այն կետը, որի շուրջ հայերը կարող են միավորվել:
- **Միասնականությունը** կեղծ կատեգորիա է, միասնականություն լինել չի կարող բոլոր հայերի մեջ՝ միայն այն պատճառով, որ բոլորը հայ են: Միասնականություն կարող է լինել միայն գաղափարների շուրջ, գործերի շուրջ:
- **Միասնական** պետք է լինել: Ինչքան էլ որ տարբեր լինենք, տարակարծիք լինենք, պետք է միասնական լինենք:

ԻՐԱԿԱՆԱՆԱԼԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՏԱՐԱՓ

Ախտորոշում-բուժում շղթան 3-օրյա քննարկումներում արդյունավետ աշխատեց: Մասնակիցները ոչ միայն կարողացան համակողմանի վերլուծել առկա խնդիրները, սահմանել նպատակներ, այլև հանդես եկան 100-ավոր առաջարկներով, որոնք կարող են տանել դրված նպատակների հասանելիությանը: Առաջարկները հատկապես արժանահիշատակ են նրանով, որ դրանց մեծ մասն իսկապես հնարավոր է առանց աստղաբաշխական ռեսուրսների իրականացնել: Ահա մասնակիցների կողմից հնչեցված մի քանի առաջարկ, սակայն քննարկման ամփոփումներում ինչ-որ բան անել ցանկացողները նման մտքեր կարող են գտնել շատ և շատ:



ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ

- **Առաջարկում եմ,** որ հայկական դպրոցները սովորեցնեն ոչ միայն արևմտահայերեն, այլև՝ արևելահայերեն:
- **Առաջարկում եմ** ունենանք ժառանգության օր: Երբ մենք կհագնենք մեր ազգային հագուստը, այդ օրը սոցիալական ցանցերում կվերբեռնենք մեր նկարները՝ տարազով ու աշխարհին կհղենք հայկականության մեսիջը:
- **Առաջարկում եմ** մշակել այնպիսի ծրագիր կամ դասագիրք, որ հարմար կլինի նրանց, ովքեր զրոյից են սկսելու հայերեն սովորել՝ անկախ տարիքից:
- **Առաջարկում եմ** երիտասարդ ընտանիքներին պետական ծրագրով սովորեցնել առցանց մասնագիտություններ և տեղափոխել գյուղեր՝ ապրելու:
- **Առաջարկում եմ** նման համաժողովներ կազմակերպել ոչ միայն Հայաստանում, այլ նաև սփյուռքում, որտեղ քննարկումներ և երկխոսություններ կծավալվել սփյուռքահայերի և հայաստանցիների միջև:
- **Ես առաջարկում եմ** մեր մշակույթի մասին փոքրիկ գրքույկ ստեղծել, բաժանել դեսպանատներին, այդպես գոնե տարածվի: Այնպես անենք, որ մեր երեխաները հպարտանան, որ իրենք հայ են, այդ փոքրիկ գրքույկը պետք է հպարտության առիթ լինի բոլոր երեխաների համար:
- **Առաջարկում եմ** «Արմենիավիդենիե» երգի մրցույթ կազմակերպենք, որտեղ կմասնակցեն հայեր բոլոր երկրներից, իսկ հաղթող երկրում կանցկացվի հաջորդ երգի մրցույթը:
- **Առաջարկում եմ** «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության համար քրաուդֆանդինգ կազմակերպել, մարդիկ կհավատան ու գումար կտրամադրեն, և այդ հարթակի միջոցով ստացված գումարները կարելի է ծառայեցնել անվտանգության ծրագրերի իրականացմանը:
- **Ես առաջարկում եմ** առանձին պանսիոնատներ ստեղծել աղջիկների և տղաների համար, որտեղ նրանց կպատրաստեն ապագայում ամուր ընտանիք կազմելուն, կսովորեցնեն ինչպես լինել լավ մայր և լավ հայր:

5 ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորքային ինքնագնահատումը ցանկացած քննարկման գործընթացի կարևոր մաս է: Գործընթացի վերաբերյալ մասնակիցների կարծիքը հավաքագրելու համար հարցումներ են անցկացվել Համաժողովի առաջին և վերջին օրերին:

Հարցումներին մասնակցելը կամավոր էր և հարցաթերթիկները տրամադրվել են մասնակիցներին սեղանավարների միջոցով՝ իրենց սեղանների շուրջ լրացնելու համար:

Հարցաթերթիկներում եղել են մի շարք բաց և փակ հարցեր, որոնք ստուգում էին մասնակիցների գիտելիքները և վերաբերմունքը Համաժողովի քննարկումների վերաբերյալ, նրանց քաղաքական կարծիքն ու շահերը:

Յուրաքանչյուր մասնակից ուներ իր ծածկագիրը, որը նա ավելացնում էր յուրաքանչյուր լրացված հարցաթերթիկին, ինչը թույլ էր տալիս պատասխանները կապել մասնակիցների ժողովրդագրական և հարակից ցուցանիշների հետ: 1-ին օրվա հարցմանը ստացվել է 165 պատասխան, իսկ 3-րդ օրվա հարցմանը՝ 158:

5.2 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ըստ հարցման արդյունքների՝ մասնակիցների բավարարվածությունը Համաժողովից հիմնականում բարձր է, ինչի մասին վկայում են ինչպես ստորև ներկայացված քանակական գնահատականները, այնպես էլ հավաքված մեկնաբանությունները: Ըստ հարցվածների մեծամասնության՝ իրենք նշանակալի ներդրում են ունեցել Համաժողովի արդյունքում ընդունված առաջարկություններում: Մասնակիցները, սակայն, ներկայացրել են նաև բարելավման մի քանի առաջարկներ, հատկապես քննարկումներին հատկացվող ժամանակի (ընդհանուր առմամբ ավելի շատ ժամանակ է պահանջվում, բայց որոշ առանձին նստաշրջաններ չափազանց երկար էին), կազմակերպչական հարցերի և տրամադրվող նյութերի վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԸ, ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԸ

Թերևս ցանկացած քննարկման գործընթացի ամենակարևոր կողմը հենց քննարկման որակն է: Սա կարելի է չափել տարբեր ձևերով, ինչպես ներկայացված է Պատկեր 20-ում: Համաժողովի մասնակիցները, ովքեր պատասխանել են այս հարցերին, ճնշող մեծամասնությամբ գոհ էին սեղանավարների հարգալից և անկողմնակալ վերաբերմունքից (98%-ը «համաձայն է»): Բարձր է գնահատվել նաև իրենց և իրենց հասակակիցների՝ կարծիքը բավարար չափով արտահայտելու ունակությունը (համապատասխանաբար 97%-ը և 95%-ը միանգամայն համաձայն են): Շատ քիչ հարցվածներ (5%) նշել են, որ Համաժողովին կարծիքների բազմազանությունը բավականաչափ լայն ներկայացված չէր:

Որոշ ոլորտներ, որոնք բարելավում են պահանջում, նույնպես ակնհայտ են: Օր.՝ մասնակիցների 17%-ը նշել է, որ որոշ մասնակիցներ հակված են գերիշխել քննարկումների ընթացքում, իսկ 12%-ը հայտնել է, որ որոշակի ճնշում է զգում համաձայնվելու ուրիշների փաստարկների հարցում: Ընդհանուր առմամբ, հարցման արդյունքները ցույց են տալիս, որ քննարկումը շատ օգտակար էր:



Պատկեր 20. Քննարկումների որակի չափման որոշ ցուցանիշներ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինչպես ներկայացված է Պատկեր 21-ում, դիտանկյունների և տեղեկատու նյութերը ճանաչվել են արժանահավատ ու հավասարակշռված (88% համաձայնություն), և դրանց ընկալման մակարդակը բարձր է եղել: Այնուամենայնիվ, կարծես թե առկա է բարելավման որոշակի հնարավորություն, որպեսզի փոխըմբռնումը հնարավորինս բարձր լինի: Օր.՝ Պատկեր 22-ը ցույց է տալիս, որ ապագայում ձևավորվելիք նյութերը կարող են մի փոքր ավելի համակարգված տեղեկատվություն տրամադրել: Կազմակերպվելիք գործընթացների համար ավելի երկար ժամկետը էլ կնպաստի վերոնշյալ հարցերի լուծմանը:



Պատկեր 21. Մասնակիցների՝ նյութերի ընկալման աստիճանը գնահատող որոշ ցուցանիշներ



Պատկեր 22. Մասնակիցների կարծիքը մատուցվող տեղեկատվության վերաբերյալ

Քննարկման ժամանակը այն հարցն է, որի դեպքում անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն մանրամասն քննարկումներ անցկացնելու և ամբողջ նյութի դիտարկման միջև՝ ապահովելով մասնակիցների հետաքրքրվածությունը և ներգրավվածությունը: Հարցումներից տեսանելի է, որ մեծամասնությունը կարծում է (83%), որ նիստերը լավ տեմպով են ընթացել, միայն 73%-ն էր համաձայն կամ լիովին համաձայն, որ ընդհանուր առմամբ քննարկումների համար բավական ժամանակ է եղել (տե՛ս Պատկեր 23-ում):



Պատկեր 23. Մասնակիցների կարծիքը Համաժողովի ժամկետների և տեմպի վերաբերյալ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Խորհրդակցական գործընթացները մասնակիցներին հնարավորություն են տալիս զգալ, որ իրենք իրենց ներդրումն են ունեցել քաղաքական որոշումների կայացման գործում, ինչը գերազանցում էր նրանց սպասելիքները: Ինչպես ներկայացված է Պատկեր 24-ում, հարցվածների մեծամասնությունը (58%) կարծում է, որ իրենք ազդել են վերջնական առաջարկությունների վրա, իսկ ավելի զգալի 84%-ը համաձայն է կամ լիովին համաձայն է, որ առաջարկությունները համապատասխանում են իրենց ակնկալիքներին:

> *Մենք ունեինք կամավոր թարգմանիչներ: Այնուամենայնիվ, բեմում ընդհանուր ելույթների համար լավ կլինի ականջակալներ ունենալ՝ թարգմանիչների աշխատանքը հեշտացնելու նպատակով:*
>
> *Մասնակցի կարծիք՝ արձանագրված գրառողի կողմից*



Պատկեր 24. Մասնակիցների ընկալումները առաջարկությունների վերաբերյալ

Ինչպես ներկայացված է Պատկեր 25-ում, հարցվածները ավելի քիչ են զգում, որ իրենք ազդեցություն ունեն քննարկումների վրա: Այնուամենայնիվ, այն փաստը, որ հարցվածների մոտ կեսը զգում է, որ իրենք «շատ» կամ «մեծ» ազդեցություն ունեն քննարկումների վրա, վկայում է խորհրդատվական գործընթացների միջոցով հզորացման զգացողության մասին:



Պատկեր 25. Մասնակիցների ընկալումները Համաժողովի քննարկումների վրա իրենց ազդեցության մասին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մասնակիցների ոգևորությունը հաստատվում է 3-րդ օրը հարցվածների 95%-ի համաձայնությամբ, որ խորհրդակցական գործընթացները որոշումների կայացման գործընթացում մարդկանց ներգրավելու արդյունավետ միջոց են: Նույն համամասնությունը նաև համաձայնեց (նրանց մեծ մասը «շատ»), որ Համաժողովը արժեքավոր փորձ էր անձամբ իրենց համար (տե՛ս Պատկեր 26-ում): Ավելին, ոչ մի հարցված չի գնահատել Համաժողովը որպես ոչ լավը, իսկ կեսից ավելին այն հնարավորինս բարձր է գնահատել (տե՛ս Պատկեր 27-ում):



Պատկեր 26. Մասնակիցների ընկալումները խորհրդակցական գործընթացների արդյունավետության և դրանց արժեքի վերաբերյալ



Պատկեր 27. Մասնակիցների գնահատումը Համաժողովի փորձի վերաբերյալ

Հարցումը ներառում էր նաև մի քանի բաց հարցեր, որտեղ մասնակիցները կարող էին արտահայտել իրենց մտքերը այն մասին, թե ինչն է իրենց ամենից շատ կամ ամենաքիչը դուր գալիս, և ներկայացնել բարելավման առաջարկներ: Այս մեկնաբանությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցներն **ավելի բարձր են գնահատել** միջոցառման հետևյալ մասերը.

1. մասնակիցների բազմազանությունը, քննարկումների մթնոլորտը և հաղորդակցման փորձը (ընդհանուր պատասխանների 48%-ը կամ 76 մեկնաբանություն),
2. միջոցառման կազմակերպումը, ընդհանուր ձևաչափը (ընդհանուր պատասխանների 37%-ը կամ 59 մեկնաբանություն),
3. քննարկման թեմաները, արտահայտված գաղափարները և առաջարկները (ընդհանուր պատասխանների 13%-ը կամ 20 մեկնաբանություն):

Համաժողովի մասնակիցները **ամենաքիչ ձայները** տվել էին նշված հարցերին՝

1. քննարկման կարճ տևողությունը, այսինքն՝ թեմաների խորությունն ընդդեմ քննարկումներին հատկացված ժամանակի (11% կամ 17 մեկնաբանություն)
2. կազմակերպչական հարցեր (8% կամ 12 մեկնաբանություն),
3. քննարկմանը մասնակցելու այլ մասնակիցների իրավասությունը (7% կամ 11 մեկնաբանություն),
4. բովանդակության որակը (6% կամ 9 մեկնաբանություն),
5. 34 այլ մեկնաբանություններ վերաբերել են կառավարության չընդգրկվելուն, լեզվական արգելքին և այլ թեմաների:

Մասնակիցները նաև առաջարկել են բարելավման մի քանի ոլորտներ: Առավել հաճախ հանդիպող առաջարկներն էին՝

1. կազմակերպչական բարելավումներ (11% կամ 18 մեկնաբանություն),
2. բովանդակության հետ կապված բարելավումներ (9% կամ 14 մեկնաբանություն),
3. սեղանների համակարգման հարցեր (9% կամ 14 մեկնաբանություն),
4. մասնակիցների հավաքագրման հետ կապված բարելավումներ (9% կամ 14 մեկնաբանություն),
5. այլ մեկնաբանություններ, որոնք վերաբերում են ժամանակի կառավարմանը, հաջորդ Համաժողովներին և գործնական քայլերին:

Մասնակիցները մի քանի ընդհանուր կարծիքներ են հայտնել նաև հետևյալ հարցերի վերաբերյալ.

Հիմնականում դրական մեկնաբանություններ կազմակերպչական հարցերի վերաբերյալ, առաջարկներ սեղանների համակարգման, ժամանակացույցի վերաբերյալ և այլն:	89 մեկնաբանություն (57%)
Գործնական հաջորդ քայլերի և հաստատված նախագծերի իրականացման կարևորությունը:	29 մեկնաբանություն (18%)
Ակնկալիքներ հաջորդ Համաժողովներից և/կամ առաջարկվող տարածաշրջանային/սփյուռքյան համաժողովներից:	24 մեկնաբանություն (15%)
Կառավարության ներգրավվածության կարևորության և Համագործակցային ցանցի կազմի վերաբերյալ տարբեր գաղափարներ:	3-9 մեկնաբանություն (2-6%)

5.3 ԱՐՁԱԳԱՆՔ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ

ԱՆԻ **ԱՌԱՔԵԼՅԱՆ**
ԱՐՑԱԽ

Ես երիտասարդ եմ, ես հայրենատեր եմ, և մեր քննարկման թեմաներն այդ շրջանակում են: Որպես տնտեսագետ՝ պատրաստ եմ իմ դերն ունենալ Համաժողովի ընթացքում կայացված որոշումների իրականացման գործում: Քննարկումները բավականին ինտերակտիվ են և փաստը, որ այսքան խելացի մարդ է հավաքվել մեկ հարկի տակ, իր մեջ արդեն պարունակում է ապագայի մեծ պոտենցիալ:

ԻՐԻՆԱ **ԳԱՐԳԱՐՅԱՆ**
ՀԱՅԱՍՏԱՆ

Երբ լսեցի Համաժողովի մասին և թե քանի երկրից են մասնակցելու ու ինչ հարցերի շուրջ է քննարկում լինելու, ես ուրախացել էի, որ մեկ սեղանի շուրջ հնարավոր կլինի նստել այս մարդկանց հետ ու լսել Հայաստան-Արցախ-Սփյուռք ձայնը:

ԱՐԻԿ **ԳԵՎՈՐԳՅԱՆ**
ԱՄՆ

Թերահավատ էի թե՛ ֆորմատի, թե՛ ծրագրման աշխատանքների նկատմամբ, բայց լիովին կարծիքս փոխվեց, երբ սկսվեց առաջին օրը: Առաջին իսկ քայլից տեսանք, թե որքան կազմակերպված է ամեն ինչ: Դժվար գործ է ճգնաժամի այս օրերին հայրենիքում 200 հոգու հավաքելն ու նրանց կարծիքը հարցնելը՝ «Ի՞նչ ես մտածում, իմ հայրենակից»: Եվ այդ հայրենակիցը պարտադիր չէ, որ լինի մասնագետ: Բազմիցս ասել եմ, որ սիրում եմ այս ֆորմատը, որովհետև մենք լսում ենք այն մարդկանց, որոնք խրամատներում հասկանում են իրենց ժողովրդի զարկերակը՝ իրենց տարբեր ոլորտներում:

ԴԱՎԻԹ **ԴԱՎԹՅԱՆ**
ՖՐԱՆՍԻԱ

Համաժողովն ունի հզոր արժեք և ես ինձ տեսնում եմ որպես Համաժողովի դեսպան իմ համայնքում, որպեսզի այստեղ ընթացող զրույցը շարունակվի այնտեղ: Այս Համաժողովը շատ յուրահատուկ հնարավորություն է: Այստեղ տարբեր երկրներից ժամանած մարդիկ համախմբված են և ունեն նպատակ՝ զարգացնել մեր ազգը:

ԺԱՆՆԱ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
ՀԱՅԱՍՏԱՆ

Այս երեք օրերի ընթացքում շատ փորձ ու գիտելիք եմ ձեռք բերել: Ես խոսելու և կարծիքս հայտնելու առումով բարդույթներ ունեի, բայց այստեղ մի միջավայր էր, որը տրամադրում էր ինքնաարտահայտվել և մարդկանց հետ հարաբերություններ կառուցել: Շատ գաղափարներ ի հայտ եկան, որոնք ես մտադիր եմ կիրառել: Համաժողովից հետո այստեղ ձեռք բերած գիտելիքներով կիսվելու եմ իմ գործընկերների հետ:

ԱՐՄԻՆԵ **ՄԱՂՈՒՄՅԱՆ**
ՌՈՒՍԱՍՏԱՆ

Նախքան սա ոչ ոք չէր ձևավորել Հայաստանի, Սփյուռքի առջև ծառացած 15 խնդիրները, իսկ հիմա գոնե պատկերացում ունենք, թե ինչ պետք է լուծենք, ինչ պետք է քննարկենք:

Ես կարող եմ պատմել իմ ընկերներին, բարեկամներին, որ կան տարբեր ասպեկտներ, տարբեր դիտանկյուններ և մենք կարող ենք միասին աշխատել: Հույս ունեմ, որ պարբերաբար տեղի կունենան նման Համաժողովներ, որ կգան այլ հայեր ևս ու այս ձևով մենք կտարածենք միավորվելու գաղափարը:

ՄԱՐԻ **ՓԱՓԱԶՅԱՆ**
ԱՄՆ

Ինձ համար ամենահետաքրքիրն այն է, որ ամբողջ աշխարհից հայեր են եկել, որոնք անտարբեր չեն: Մենք հրաշալի բանավեճեր ենք ծավալում, միմյանց հետ չենք համաձայնում, բայց փորձում են լսել միմյանց: Հայերը սովորաբար ավելի շատ խոսում են, քան լսում, բայց այստեղ մարդիկ աշխույժ ու շատ ներգրավված են:

5.4 ԱՐՁԱԳԱՆՔ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՐԵՐԻՑ ԵՎ ԴԻՏՈՐԴՆԵՐԻՑ

ԼԱՐԻՍԱ **ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**
ՀՀ ՆԱԽԿԻՆ ՄԻՊ

Ծատ հետաքրքիր էր, մասնակիցները ոչ միայն տարբեր երկրներից էին, այլև տարբեր մայրցամաքներից: Ես շատ գոհ եմ մասնակիցների քննարկումներից, նրանց մակարդակից և իմացությունից:

ԷՆԹՈՆԻ **ԲԱՐՍԱՄՅԱՆ**
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ

Այս միջոցառումը մարդկանց թույլ է տալիս խոսել իրար հետ: Նուբար Աֆեյանը մի միտք հայտնեց, որն ինձ շատ տպավորեց. սա կարևոր է հինգ, վեց, յոթ տարեկան երեխաների համար, որովհետև, եթե մենք պատրաստում ենք հարթակն այսօր, ապա վաղը նրանք կունենան Հայաստանում իրար հետ խոսելու մոդել:

ՀՐԱՆՈՒՇ **ՀԱԿՈԲՅԱՆ**
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ

Համաժողովն ունեցավ պատմական, քաղաքական, ազգային, բարոյական, հայրենասիրական, ոգևորող և հուսադրող նշանակություն Արցախում ապրող մեր հերոս ժողովրդի, աշխարհատարած հայության համար: Խորին շնորհակալություններս մեր հզոր զավակներին՝ «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության հիմնադիրներին: Վստահ եմ, որ ձեր կանխատեսումները, ձեր տեսլականը հայության համախմբմամբ իրականություն կդարձնեք և կհաղթահարեք բոլոր խոչընդոտները:

ՆԱԹԱՆ ԱՐՔ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Տվյալ նախաձեռնությունը մենք ողջունում ենք, որովհետև ամբողջ հայությանը համատեղելն ու մեկ օրակարգի շուրջ միավորելը դյուրին գործ չէ: Դրա համար պետք է քայլ առ քայլ բարձրանալ ու հասնել դրան: Քայլերից մեկը նման Նախաձեռնությունն է, որը բավականին արձագանք է ստացել հայության շրջանում՝ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, թե՛ Սփյուռքում:

ԷԴԵԼ **ՀՈՎՆԱՆՅԱՆ**
Հ. ՀՈՎՆԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ

Սա եզակի, նոր ձևաչափով միջոցառում է: Այստեղ պարզապես հազարավոր մարդիկ չեն հավաքվել, որ պատմեն, թե ինչ են արել: Քննարկման նյութը բաժանվել է թեմաների, ենթարկվել խորը վերլուծության՝ ներգրավելով թե սփյուռքահայերի, թե տեղացիների, որոնք շատ տարբեր տեսակետներ ունեն: Ինձ համար հետաքրքիր է: Իմ նպատակը տեսնելն է, թե կարո՞ղ են հայերը եզրակացությունների հասնել:

ՎԱՉԳԵՆ **ՅԱԿՈՒԲՅԱՆ**
ՀԲԸՄ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ծատ տարբեր տեսակետներ կան: Եվ այսպիսի հարթակները պետք է հնարավորություն ստեղծեն որոշ առաջնահերթություններ վերհանելու համար, որպեսզի կարողանանք աշխատել դրանց վրա: Իմ կարծիքով, «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» հարթակը լավ, առաջին քայլն է այդ ուղղությամբ:

ԵՐՎԱՆԴ **ՋՈՐՅԱՆ**
«SYNOPSYS ARMENIA» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

What I liked most was the difference in opinion. When you live in the same community, the opinions are often the same. This Convention managed to gather people with different opinions. And when you put them side by side, you get solutions.

6 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ապագա Հայկականի Համաժողովի 200 մասնակիցները 2023թ. մարտին երեք օր շարունակ քննարկեցին «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնության՝ Հայաստանի, Սփյուռքի և Արցախի ապագայի համար կարևոր նշանակություն ունեցող երեք նպատակները: Դրանք ընդհանուր թվով 15 նպատակներից ընտրվել են փորձագետների և ավելի քան 112 000 նախաձեռնողների կողմից ամբողջ աշխարհից:

Երեք փորձագիտական հանձնախմբերի կողմից պատրաստված նյութերի աջակցությամբ մասնակիցները մշակեցին ծրագրային առաջարկությունների ցանկը, որոնք պետք է իրականացնի բարեգործական կազմակերպությունների, բիզնեսի և այլ կազմակերպությունների Համագործակցային ցանցը և, հնարավոր է, պետական հաստատությունները: Զեկույցը պարունակում է այդ առաջարկությունների մանրամասները, ինչպես նաև մասնակիցների կարծիքները մի շարք դիրքորոշումների վերաբերյալ: Հավաքականորեն դրանք կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության, ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:

Համաժողովի մասնակիցների մեծամասնությունը մեծ ներդրում է ունեցել հայ ազգի և նրա մշակույթի պահպանման գործում, ընդ որում՝ 62%-ը գտնում է, որ ամբողջ աշխարհի հայությունը պարտավոր է պահպանել իրենց մշակույթն ու ժառանգությունը (դիրքորոշում 1.4): Նրանք առաջարկել են մի շարք նախաձեռնություններ՝ խթանելու ներկա հակամարտության և պատմական նարատիվների մասին իրազեկմանը, մասնավորապես Հայոց ցեղասպանության հարցում: Հստակ աջակցություն է եղել նաև Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությանը (93%-ը համաձայնել է, որ դա աշխարհասփյուռ հայության հարցն է (դիրքորոշում 1.2)): Մի շարք ծրագրային առաջարկություններ էլ ստացել են ավելի քան 70% աջակցություն, ինչպես, օրինակ, «Համահայկական համացանցային բանակ»-ի ստեղծումը, «Մեկ միասնական հայկական ժառանգության ցանկ»-ը և «Երիտասարդական փոխանակումների կոորդինացիոն խորհուրդ»-ը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս կարելի է ձևավորել ընդհանուր սկզբունքների և գործնական հենքի վրա հիմնված Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ:

Համաժողովի հիմքում ընկած էր այն տեսակետը, որ հայ լինելը չի սահմանափակվում միայն Հայաստանում բնակվողներով: Ըստ մասնակիցների ավելի քան 50%-ի՝ սփյուռքահայերը նույնպես ունեն իրենց բաժին պատասխանատվությունը՝ աջակցելու իրենց հայրենիքին և նպաստելու նրա ժառանգության և մշակույթի պահպանմանը: Միևնույն ժամանակ, առկա էր կարծիք, որ հայությունը Հայաստանում պետք է աջակցի Սփյուռքի ներդրումներին, և որ հայապահպանությունը փոխադարձաբար ամրապնդվի: Մասնակիցների 53%-ը կողմ է արտահայտվել «Հայաստանի հզորացումը՝ ակնկալիքով, որ հետո հզորացող Հայաստանը շատ ավելի հեշտ կնպաստի հայապահպանությանը Սփյուռքում» դիրքորոշմանը, իսկ 56,96%-ը համաձայնել է, որ «մեզ անհրաժեշտ են համագործակցության նոր հարթակներ: Վստահության ճգնաժամը հաղթահարելի է, և միասնականությունը կբազմապատկի արդյունքները» մտքին:

Այս նպատակի ամենաշատ աջակցությունն ստացած առաջարկը՝ 82%, ամբողջ աշխարհում գործարարների համագործակցային ցանցի ստեղծումն է:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

Որո՞նք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ուղիները:

Հայաստանի բնակչությունը և՛ նվազում է, և՛ ծերանում: Մասնակիցների 75%-ը համաձայնել է, որ «Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է հռչակվի երկրում իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունը, և այն պետք է սպասարկվի այլ ոլորտների քաղաքականությամբ» (դիրքորոշում 3.3): Հետևաբար, դրան աջակցելու համար առաջարկվել են տարբեր նախաձեռնություններ, օրինակ՝ 79,49%-ն իր նախապատվությունը տվել է «Ներգաղթի կազմակերպության և քարոզչության գործակալությանը» և 70,51%-ը՝ «Երեխաները՝ նախևառաջ» նախաձեռնությանը՝ երաշխավորելով, որ երեխաներ ունենալն ավելի հեշտ է, և երբ նրանք ծնվեն, պատշաճ աջակցություն կստանան:

Կար նաև գիտակցում, որ արտագաղթը նվազեցնելու համար Հայաստանը պետք է դառնա ապրելու համար ավելի գրավիչ երկիր, մասնակիցների 57,89%-ը համաձայն է, որ «սխալ է բոլոր ջանքերն ուղղել դեպի ներգաղթ, մինչդեռ Հայաստանում ունենք գործազրկության և աղքատության բարձր մակարդակ: Առանց տնտեսական զարգացման և գործազրկության խնդիրները լուծելու, ներգաղթը կհանգեցնի սոցիալական լարվածության» (դիրքորոշում 3.4): Մասնակիցների կեսից ավելին (55%) համաձայնել է, որ բոլոր կենսունակ նախաձեռնությունները պետք է իրականացվեն միաժամանակ (դիրքորոշում 3.1):

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Նորարարության հաջողման սկզբնական հարցադրումը ուղղորդում է Համաժողովի արդյունքների ամփոփմանն ու հաջորդ քայլերին.

«Ինչպե՞ս կարող ենք ստեղծել քաղաքացիների կողմից առաջնորդվող խորհրդակցական նոր գործընթաց, որը թույլ կտա Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայությանը արագ բարձրացնել մինչև 2041թ. մեր առջև ծառացած մարտահրավերները հավաքականորեն լուծելու մեր կարողությունը»:

Ապագա Հայկականի Համաժողովն արդեն համախմբել է մասնակցության ցանկություն հայտնած ավելի քան 112 000 մարդկանց, փորձագիտական հանձնախմբերի աշխատանքներում ներգրավված անհատների և կազմակերպությունների, Համաժողովի 200 մասնակիցների և ամբողջ աշխարհի բազմաթիվ հայերի, ովքեր ոգեշնչվել են նախաձեռնությունից: Ըստ էության, Համաժողովը մարդկանց և կազմակերպությունների համաշխարհային ցանց է, որն աշխատում է «արագ բարձրացնել մինչև 2041թ. մեր առջև ծառացած մարտահրավերները հավաքականորեն լուծելու մեր կարողությունը»:

Հաշվի առնելով ծրագրի հավակնությունները և սոցիալ-տնտեսական միջավայրի անկայունությունը՝ այն փաստը, որ այս ցանցն ընդհանրապես ձևավորվել է, արդեն նշանակալի իրադարձություն է: Ավելացնենք դրան նաև հայկական սփյուռքի ընտրանքի և մասնակցության նոր մոդելը, Համաժողովի փորձագիտական օժանդակությունը, մասնագիտական հաղորդակցությունը և այնպիսի տարրերի շրջանակում, ինչպիսին է փոփոխության տեսությունը, մենք այժմ ունենք ամուր հիմքեր, որոնց վրա կարող ենք հիմնվել մեր հետագա քայլերում:

Կատարված է նոր «քաղաքացիների կողմից ղեկավարվող խորհրդակցական գործընթաց»-ի ստեղծման առաջին քայլը: Այժմ գոյություն ունի կառավարման նոր պալատ, որը կազմված է աշխարհասփյուռ հայության ներկայացուցչական խմբից:

Այժմ մեր մարտահրավերն այն է, թե ինչպես այն կարող է «արագացնել մինչև 2041թ. մեր առջև ծառացած մարտահրավերները հավաքականորեն լուծելու մեր կարողությունը»: Ինչպես նշված է Բաժին 1.5.1-ում, Համաժողովի հաջողությունը կախված է դա իրագործելու կարողությունից: Այս նպատակին հասնելու համար Համաժողովը առանձնացրել է չորս արդյունք.

- Ինստիտուցիոնալ գործողություններ,
- Համագործակցային ցանցի գործողություններ,
- Քաղաքացիների գործողություններ,
- Կառավարման նոր ձևաչափ:

[25] Armenia Population Growth Rate 1950-2023 | MacroTrends

Վերջինն արդեն հաջողվել է, թեև ապագայում կիրառվելիս, անկասկած, ճշգրտման կարիք կլինի՝ հիմնված մյուս երեք գործողությունների արդյունքների հաջողության վրա, որտեղ այժմ պետք է ներդնել մեր ջանքերը: Ապագա Հայկականի Համաժողովի հիմնական նորամուծությունը՝ Համագործակցային ցանցի ձևավորումը, իրական հույս է ներշնչում, որ առաջիկա ամիսների և տարիների ընթացքում կգրանցվեն շոշափելի արդյունքներ:

Ապագա Հայկականի առաջին Համաժողովը նշանավորվում է որպես պատմական իրադարձություն Հայաստանի կառավարության և աշխարհասփյուռ հայության միջև վերջինիս հարաբերությունների համար: Այն ձևավորել է ընդօրինակելի հարթակ, որի միջոցով համահայկական գիտելիքն ու իմաստությունը կարելի է միավորել և ավելացնել համընդհանուր շահերի համար՝ հիմք ընդունելով թե՛ անհատական, թե՛ ազգային-հավաքական մշակութային առանձնահատկությունները և ծառացած մարտահրավերները: Ի լրումն, որպես հանրային կառավարման նոր մասնիկ, այն հենվում է այսօրվա խորհրդակցական պրակտիկայի վրա և ցույց է տալիս աշխարհին, թե ինչպես կարող են դրանք արդիականացվել՝ օրինականություն և համապատասխան ազդեցություն ապահովելու համար: Ավելին, այն իրականացվել է անկախ պետական ինստիտուտներից՝ չնայած մասնակցության աշխարհագրական սահմանափակումներին և շարունակվող հակամարտությանը: Այս Համաժողովը Հայաստանը դրել է մասնակցային ժողովրդավարության քարտեզի վրա, որի միջոցով ժողովրդի ամենատարբեր շերտերը սկսում են օգտագործել իրենց հավաքական միտքն ու ուժը՝ միասին դիմակայելու իրենց առջև ծառացած մարտահրավերներին:



ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան

Պատմական պատասխանատվություն փորձագիտական հանձնախմբի ղեկավար

Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ, Սուրբ Աթոռում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ

Վարուժան Ալթեպարմաքեան

արևմտյան հայոց թեմի նվիրատվության հիմնադրամի ատենապետ, բժիշկ, Ֆրեզնոյի բժշկական կենտրոնի բժշկական գծով նախկին տնօրեն

Կարօ Արմենեան

ՀՅԴ բյուրոյի նախկին անդամ, տնտեսագետ, միջազգային ֆինանսների գծով ֆինանսիստ



Շահեն Ավագյան

ՀՀ ԱԳՆ նախկին գլխավոր քարտուղար, ՀՀ նախագահի նախկին խորհրդական

Աշոտ Բլեյան

Մանկավարժ, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնադիր, ԱԺ նախկին պատգամավոր

Հայկ Դեմոյան

պատմաբան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր

Խաչիկ Տէր Ղուկասեան

Նացիոնալ դե Լանուս համալսարանի միջազգային հարաբերությունների տեսության ամբիոնի վարիչ, Մայամիի համալսարանի միջազգային հարաբերությունների դոկտոր

Ռուբեն Գալիչյան

լոնդոնաբնակ անկախ գիտնական և հետազոտող, քարտեզագետ, նավթագազային և նավթաքիմիական արդյունաբերության ոլորտում խորհրդատու

Ռուբեն Կարապետյան

Եգիպտոսում և Իտալիայում ՀՀ նախկին դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալեքսանդր Մանասյան

հայ փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դասախոս և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Հարություն Մարության

ազգագրագետ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր

Խաչիկ Մուրադյան

Կոլումբիայի համալսարանում Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի ուսումնասիրությունների (MESAAS) դասախոս, դոկտոր և Կոնգրեսի գրադարանի Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի հայ և վրացական բաժնի մասնագետ

Ռուբեն Սաֆրաստյան

արևելագետ-թուրքագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Օսկար Թաթոսյան

Հայ Օգնության Ֆոնդի խորհրդի անդամ, Չիկագոյում ՀՀ պատվավոր հյուպատոս

Արա Սանճեան

պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ և Միչիգան-Դիրբորնի համալսարանի Հայկական հետազոտական կենտրոնի տնօրեն

Խաչիկ Թէօլէօլեան

հայ սփյուռքագետ, գրաքննադատ և հրապարակախոս

Խաչատուր Ստեփանյան

պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Վահե Վարդանյան

լոնդոնաբնակ հիմնադիր, Global Family Office Community (GFOC)-ի տնօրեն, Global Next Gen համայնքի համահիմնադիր

Եղիա Թաշճեան

տարածաշրջանային վերլուծաբան և հետազոտող, Բեյրութի Ամերիկյան համալսարանի Հասարակական քաղաքականության և միջազգային հարաբերությունների Իսամ Ֆարես ինստիտուտի դոցենտ, Գիտության և տեխնոլոգիաների ամերիկյան համալսարանում (AUST) միջազգային հարաբերությունների դասախոս

Աշոտ Ոսկանյան

հայ փիլիսոփա, դիվանագետ, Ավստրիայում ՀՀ նախկին դեսպան, ԵԱՀԿ-ում ՀՀ նախկին մշտական ներկայացուցիչ, ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ

Արամ Աբրահամյան
Հայաստան-Սփյուռք միասնականություն փորձագիտական հանձնախմբի ղեկավար

հայ լրագրող և հրապարակախոս, «Առավոտ» օրաթերթի հիմնադիր խմբագիր

Լևոն Աֆեյան

հայազգի արդյունաբերական ձեռնարկատեր Կանադայում, պատվավոր հյուպատոս Քվեբեկ նահանգում

Հակոբ Ասատրյան

լրագրող, Պրահայի «Օրեր» հայկական եվրոպական ամսագրի խմբագիր, Երևանի մամուլի ակումբի և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Յովէլ Շնորհոքեան

ձեռնարկատեր, գրող, ակտիվիստ և DiasporArm-ի հիմնադիր

Արմեն Տեր-Կյուրեղյան

ամերիկահայ ակադեմիկոս, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի համահիմնադիր

Բաբկեն Տեր-Գրիգորյան

իրանահայ հայրենադարձ, տնտեսագետ, ՀՀ Սփյուռքի նախարարի նախկին տեղակալ

Սիրանուշ Դվոյան

դասախոս և Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի գիտական ծրագրերի համակարգող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ



Արտյոմ Գեղամյան

ՀՀ արդարադատության նախարարի նախկին տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու



Ալեքսանդր Վ. Գևորկյան

Հենրի Ջորջի պատվավոր ակադեմիական ղեկավար, Նյու Յորքի Սեյնթ Ջոնս համալսարանի Փիթեր Թոբինի բիզնես քոլեջի տնտեսագիտության և ֆինանսի բաժնի տնտեսագիտության դոկտոր և դոցենտ

Սևան Կաբակյան

օդատիեզերական ճարտարագետ, Birthright Armenia («Դեպի Հայք») բարեգործական հիմնադրամի տարածաշրջանային տնօրեն

Վահագն Մելիքյան

դիվանագետ, ՀՀ նախկին դեսպան Արաբական Միացյալ Էմիրություններում և Արգենտինայում, ՀՀ սփյուռքի նախարարի նախկին տեղակալ

Ատոմ Մխիթարյան

բարձրագույն կրթության և գիտության կառավարման ոլորտի փորձագետ, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու

Ռազմիկ Փանոսեան

կանադահայ պատմաբան և քաղաքագետ, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հայկական համայնքների բաժնի տնօրեն

Հակոբ Ասատրյան

լրագրող, Պրահայի «Օրեր» հայկական եվրոպական ամսագրի խմբագիր, Երևանի մամուլի ակումբի և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Արփի Վարդանյան

Ամերիկայի հայկական համագումարի տարածաշրջանային տնօրեն

Հովհաննես Սարգսյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայ-Ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի վարիչ

Վազգեն Յակուբյան

ճարտարագետ, Leon A. Yacoubian Contracting LLC-ի հիմնադիր և գործադիր տնօրեն, ՀԲԸՄ Հայաստանի նախագահ

Աննա Հեսս Սարգսյան

Genesis Armenia-ի սփյուռքի ոլորտի ղեկավար

Տիգրան Եկաւեան

ֆրանսահայ լրագրող, էսսեիստ և արևելյան ուսումնասիրությունների մասնագետ

Սարգիս Շահինյան

ճարտարապետ, «Շվեյցարիա-Հայաստան» խորհրդարանական բարեկամության խմբի համահիմնադիր և գլխավոր քարտուղար

Արման Եղիազարյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լիլիթ Շաքարյան

սոցիոլոգ, դասախոս և ասպիրանտ, գիտաշխատող Նևադայի համալսարանում

Արտյոմ Երկանյան

լրագրող, քաղաքական մեկնաբան և հաղորդավար

Նիկոլաս Դավիդյան

Բաց համալսարանի հետազոտող, ՀԲԸՄ Եվրոպայի նախկին ղեկավար

Վահան Զանոյան

հեղինակ, հանրային մեկնաբան, տնտեսագետ, համաշխարհային էներգետիկայի և ազգային անվտանգության խորհրդատու

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Արմինե Հովհաննիսյան

Բնակչության աճ փորձագիտական հանձնախմբի ղեկավար

հանրային գործիչ, իրավաբան, «Օրրան» հասարակական-բարեգործական կազմակերպության հիմնադիր, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության գործադիր տնօրեն

Անաստաս Աղազարյան

պատմական և տնտեսական գիտությունների թեկնածու, ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի փորձագետ, ՀՀ առողջապահության նախարարություն առողջապահության ազգային ինստիտուտի առողջապահության ազգային հաշիվների կենտրոնի ղեկավար

Միրա Անտոնյան

սոցիալական պաշտպանության փորձագետ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի հիմնադիր նախագահ, հրավիրյալ և հիմնական դասախոս բազմաթիվ համալսարաններում

Արա Բաբլոյան

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկական վիրաբույժ, ԱԺ նախկին խոսնակ

Կարեն Դադուրյան

առաջնորդության, ռազմավարական պլանավորման, կառավարման, ժողովրդագրության ոլորտների միջազգային փորձագետ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի փորձագետ, ղեկավարման, կառավարման, ռազմավարական պլանավորման և ժողովրագրության հարցերով խորհրդատու

Իրինա Դավթյան

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ

Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանյան

Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ, գերագույն հոգևոր խորհրդի անդամ

Լիլիթ Եզեկյան

տնտեսագետ-վերլուծաբան, Հայաստանի կենտրոնական բանկի նախկին տնտեսագետ-վերլուծաբան և տնտեսագետ-վիճակագիր, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտությունների գծով տնօրեն

Հովհաննես Գրիգորյան

սոցիոլոգ, դասախոս, Breavis-ի տնօրեն և հիմնադիր

Սերոբ Խաչատրյան

կրթության փորձագետ, դասախոս, Հայաստանի մանուկներ հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն, ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դասախոս, ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ազգային զեկույցի աշխատանքային խմբի ղեկավար



Սուրեն Քրմոյան

իրավագետ, իրավական գիտությունների թեկնածու, «Թվային Հայաստան»-ի հիմնադիր նախագահ, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի իրավախորհրդատու, ՀՀ արդարադատության նախարարի նախկին տեղակալ

Կարինե Կույումջյան

ժողովրդագիր, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Հեղինե Մանասյան

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի պատվավոր (պաշտոնաթող) տնօրեն, Հասարակական կարծիքի ուսումնասիրության համաշխարհային ասոցիացիայի (WAPOR) ներկայացուցիչ Հայաստանում, Համաշխարհային արժեքների հետազոտության ասոցիացիայի (WVSA) գիտական խորհրդի անդամ

Սամվել Մանուկյան

սոցիոլոգիայի, ժողովրդագրության, քաղաքագիտության և սոցիալ-տնտեսական ոլորտների գիտական-վերլուծաբան, դասախոս, «Օրբելի» վերլուծական կենտրոնում որպես վերլուծաբան, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոս

Վարդան Մարաշլյան

տնտեսական գիտությունների թեկնածու, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի (Repat Armenia) համահիմնադիր և գործադիր տնօրեն, «5165» ակումբի և «ԱրԱր» հիմնադրամի անդամ

Արտակ Մարկոսյան

ՄԱՀՀԻ-ի ասոցացված փորձագետ և ժողովրդագետ

Հրանտ Միքայելյան

քաղաքագետ, «Կովկաս» ինստիտուտի փորձագետ

Թևան Պողոսյան

ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, Հայ-ռուսական համալսարանի դասախոս, ՀՀ նախագահի նախկին խորհրդական

Արման Ոսկերչյան

բժշկական գիտությունների թեկնածու, գործարար, բժշկական տեխնոլոգիաների փորձագետ, ՀԵՆԱՐ-ի հոգաբարձուների խորհրդի համահիմնադիր և ղեկավար



Ռուբեն Եգանյան

ժողովրդագիր, ժողովրդագրական մի շարք հետազոտությունների ղեկավար

Լիլիթ Եզեկյան

տնտեսագետ-վերլուծաբան, Հայաստանի կենտրոնական բանկի նախկին տնտեսագետ-վերլուծաբան և տնտեսագետ-վիճակագիր, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտությունների գծով տնօրեն

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ



ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023

Երևան

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.

Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:

1 ԴԻՏԱՐԿՅՈՒՆ

Հայոց ցեղասպանություն

Իրականություն

Փորձագիտական խումբը համակողմանի քննարկումներում Հայոց ցեղասպանության ասպեկտը պատմական պատասխանատվության համատեքստում առանձնացրեց որպես առաջնայնություն: *«Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը հետամուտ լինելը զուտ անցյալի հանդեպ տուրքի խնդիր չէ: Սա այսօրվա իրական խնդիր է, քանզի ցեղասպանությունը նոր ցեղասպանություն է ծնում, իսկ նման նախանշաններ դիտարկվում են թուրք-ադրբեջանական համագործակցության հեռանկարում:* ***Ցեղասպանության խնդիրը հայ ժողովրդի և հայկական պետականության գոյության հարց է****: Ուստի խնդիրը խիստ այժմեական է. այն պետք է քննել նոր հայացքով ու նախատեսել ապագային ուղղված համահայկական ջանքեր»*,- նաև նման կերպ արտահայտվեցին փորձագետները:

35 երկիր տարբեր մակարդակներով ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Ըստ փորձագետների, սակայն, ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը քննարկելիս պետք է առնվազն երկու սկզբունք որդեգրել: Առաջինը՝ **անկեղծ լինել ինքներս մեզ հետ** և երկրորդը՝ **լինել իրատես**: Երբեմն մենք տարվում ենք ցեղասպանությունը ճանաչող երկրների քանակով ու սկսում ենք ստեղծել մտացածին պատկերներ կամ ոգևորվում ենք 1-2՝ ազգությամբ թուրքի հայանպաստ մտքերից և դրանք ընդհանրացնում-տարածում ողջ Թուրքիայի վրա: Մինչդեռ իրականությունն այն է, որ «*2015-2020թթ. ձևավորված իրողությունների համատեքստում մենք ունենք սկզբունքորեն նոր իրավիճակ, և ուղղակի* ***չենք կարող խոսել ցեղասպանության մասին նույն կերպ, ինչ նախկինում էինք անում***»:

Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացն ունի նաև Թուրքիայի ագրեսիվ կեցվածքի ապաակտիվացման ու կանխարգելման նպատակ: 2020թ. իրադարձություններից հետո պարզ դարձավ սակայն, որ Թուրքիային զսպելու գործընթացում հայկական կողմի վարած քաղաքականությունը բավարար չի եղել: Այսպես համարում են առանձին փորձագետներ և շարունակում. «***Ճանաչումը պետք է ավելի իրատեսական և մեզ սպառնացող վտանգների տեսանկյունից շոշափելի լինի****: Մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը չդարձավ թուրք-ադրբեջանական ագրեսիան որևէ կերպ կանխարգելող գործոն: Հայոց ցեղասպանությունը ճանաչած մի շարք երկրներ 44-օրյա պատերազմի և դրան հաջորդող իրադարձությունների ընթացքում շարունակում էին լուռ մնալ*»: Ավելին, Ցեղասպանագետների միջազգային միությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ **Ադրբեջանի ու Թուրքիայի գործողություններում Արցախի հայության նկատմամբ ցեղասպանության վտանգ կա**:

Քաղաքականություն

Թուրքիան այսօր ուժեղ պետություն է, և հետևաբար պետք է հստակեցնել պահանջների և պայքարի ձևերը: Արդյո՞ք մենք կարող ենք մեր սահմանափակ ռեսուրսներով

և հնարավորություններով ճնշել ու պարտադրել Թուրքիային, որպեսզի նա ճանաչի ցեղասպանությունը: Հրեաներն ունեն հստակ տեսլական և, անկախ ներքին տարաձայնություններից, միասնաբար այդ տեսլականին են ձգտում: Մենք՝ հայերս, չունենք բոլորիս միավորող տեսլական: «***Ո՞րն է համայն հայության, մասնավորապես, հայրենիքի և սփյուռքի պատմական պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հարցում:*** *Մենք ուզում ենք աշխարհը ճանաչի այն, սակայն չենք որոշել, թե հետո ինչ ենք ուզում*»,- նկատում էին փորձագետները:

«Մի կողմում էյֆորիկ ծայրահեղությունն է, որտեղ Թուրքիան ճանաչում է ցեղասպանությունը, և այդքանով հարցը փակվում է, իսկ մյուս կողմում՝ Թուրքիան չի ճանաչում ցեղասպանությունը, ու հարցը փակելով՝ անցնում ենք առաջ»: Իրական և ապագա կյանքն ընկած է այս երկու ծայրահեղությունների միջև, որտեղ պետք է **հստակ գործողություններ տեսնենք ու պլանավորենք մեր անելիքները**՝ համարում են փորձագետները և առաջարկում խորհել **ինչպես դա անելու** շուրջ:

Հայկական կառույցները, Հայ դատի հանձնախումբը, մեր ավանդական կուսակցությունները տասնամյակներ շարունակ հսկայական աշխատանք են կատարել բազմաթիվ երկրներում: Հանդես գալով **ցեղասպանությունների կանխարգելման դիրքերից**՝ Հայաստանը և հայերը ստեղծել են նաև միջազգային նշանակության հարթակներ, ինչպես օրինակ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» **Գլոբալ ֆորումը**, Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից շնորհվող **«Ավրորա» մրցանակը** և այլն, իսկ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի **համահայկական հռչակագրի** ընդունումը դարձավ Հայաստան-Սփյուռք միասնության կարևոր հանգրվան: Անշուշտ, **աշխատանք շատ է արվել և արվում**: Բայցևայնպես ժխտողականությանն այսօր էլ կարելի է հանդիպել գրեթե ամենուր: Ուրեմն **ինչպե՞ս կարող ենք միավորել մեր ուժերն առաջ գնալու համար և ի՞նչ պետք է փոխենք մեր քայլերում՝** սա պետք է հասկանալ առաջին հերթին**:**

Նախաձեռնություններ

Հրեական «Հակազրպարտչական լիգա» իրավապաշտպան կազմակերպության՝ ADL-ին համարժեք հայկական կառույց ունենալու անհրաժեշտության մասին շատ խոսեցին փորձագետները՝ դիտարկելով, որ **Հայկական «Հակազրպարտչական լիգա» իրավապաշտպան մեխանիզմը** կայացնելու դեպքում այն կարող է համապարփակ պայքար առաջնորդել ժխտողականության ցանկացած դրսևորման դեմ:

«Տարբեր երկրներում մեր համայնքներն ունեն տարբեր օրակարգեր և առաջնահերթություններ: Եթե կարողանանք օգնել համայնքներին, համակարգենք և ներդաշնակեցնենք պայքարը, ապա կկարողանանք հասնել գլոբալ արձագանքի»: Առաջարկվեց ստեղծել բոլոր հիմնական դերակատար-կառույցների ու մեծ համայնք-

ների մասնակցությամբ համակարգող հանձնախումբ, **Ցեղասպանության ճանաչ-ման գործընթացի առցանց կոորդինացիոն խորհուրդ**, որը կներդաշնակեցնի աշխատանքը բոլոր համայնքներում:

Աշխարհում կա Հոլոքոստին նվիրված շուրջ 70 ցուցադրություններ ու թանգարաններ և կան ավելի քան 9 տասնյակ հրեական թագարաններ, որտեղ ցեղասպանության մասին ներկայացվում է: Մենք ունենց Հայոց ցեղասպանությանը նվիրված և լիարժեք գործող մեկ թանգարան ու որոշակի հետազոտական գործունեություն իրականացնող 2-3 այլ թանգարաններ: **Ցեղասպանության թանգարանի արտերկրյա 3 մասնաճյուղերի բացումը** օգտակար պետք է որ լինի:

Մեծ եղեռնը ճանաչած պետություններից քչերում է, որտեղ կրթական համակար-գերում կա Հայոց ցեղասպանության վերաբերյալ որևէ հիշատակում: Միևնույն ժամանակ Հոլոքոստն ուսումնասիրվում և դասավանդվում է գրեթե ամենուր: **Այլ երկրների կրթական ծրագրերում Մեծ եղեռնի մասին նյութերի ներառումը** պետք է դասել մեր լոբբիստական աշխատանքների առաջնահերթությունների շարքում:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023

Երևան

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.

Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:

2 ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի և Արցախի անվտանգության հարցում պատասխանատվություն

Խնդիրը

«*Կարծում եմ, որ «Պատմական պատասխանատվություն» թեմայի խնդիրը պետք է լինի ողջ հայությանը մեկտեղող ու շուրջը հավաքող գաղափարի ձևավորումը: Լեզուն չի կարող նման հավակնություններ ունենալ: Հավատքը՝ գուցե: Սակայն կարծում եմ՝ մեզ միավորող առաջնային գործոնը հողն է*»,- այս և նման դիտարկումները հաճախ էին հնչում փորձագետների քննարկումներում: Արցախի ու ՀՀ-ի անվտանգային փխրուն իրավիճակը պարտադրում է **առաջնային համարել անվտանգության վերաբերյալ քննարկումը**: Պատմական պատասխանատվության տեսանկյունից հարկ է նախևառաջ խոսել հայկական երկու պետությունների անվտանգային հարցերի, մեր առջև կանգնած մարտահրավերներին և խնդիրներին ուղղված հնարավոր ձևակերպումների ու բանաձևերի ընդունման մասին:

«*Վիճակն այնքան օրհասական է, որ երբեմն տպավորություն կա, թե այս բոլոր քննարկումներն ու խոսակցությունները շատ քիչ բան արժեն, իսկ հնչեցված մտահոգությունները մնում են անհասցե*»: Ի վերջո այս ամենը պետք է կազմակերպել մի շատ կոնկրետ ըմբռնման շուրջ՝ պատասխանելով հետևյալ հարցերին. **ինչի՞ առաջ ենք կանգնած, ի՞նչ խնդիրներ ունենք և ինչպե՞ս պետք է լուծենք**:

Քաղաքականություն

Փորձագետները նկատեցին, որ իրենց քննարկումների արդյունքում ուրվագծվել է համաձայնություն այն մասին, որ **պետականության պահպանումն ընդհանուր համահայկական պատասխանատվության** հարց է, և պետք է խնդրի այն մասը, որը մեզ է բաժին ընկնում, փորձենք լուծել և չթողնել հաջորդ սերունդների վրա: Այս տեսանկյունից արձանագրվեցին մի քանի հստակ դրույթներ.

1. Հայ ժողովուրդն **իր պետությունն արագ զարգացնելու պատասխանատվություն ունի**:

2. **Արցախը պահելու և զարգացնելու** պատմական պատասխանատվություն ունենք:

3. Հայաստանն ու Սփյուռքը պետք է **մեկ միասնական բռունցք դառնան**, որ իրականացնեն մեր պատմական պատասխանատվությունը**:** Եվ վերջապես պետք է հասկանանք, թե ինչու հնարավոր չի եղել ձևակերպել **միասնական համահայկական մտածելակերպ**, **առաքելություն ու բանաձև** և անցնել այս ամենից բխող կոնկրետ գործողությունների:

Ըստ փորձագետների, պատմական պատասխանատվության համատեքստում մենք այսօր դիվանագիտական և ռազմաքաղաքական կորուստների չընդհատվող շարքը կասեցնելու պատասխանատվություն ունենք: Այս պատասխանատվության գիտակցումը կնպաստի Հայաստանի և հայաստանաբնակ ժողովրդի շրջանում խարխլված համերաշխության վերականգնմանը:

Միևնույն ժամանակ, մեր այսօրվա խնդիրները չպետք է մեզ հետ պահեն մեր ապագային ուղղված նպատակներ ձևակերպելուց: «***Մեր ձախողումները գալիս են նպատակներ չձևակերպելուց*** *և դրանց իրականացմանն ուղղված պատշաճ աշխատանք չիրականացնելուց*»,- նկատում էին փորձագետները:

Արցախի հարցում փորձագետները առաջարկեցին մեկընդմիշտ ընտրել հնարավոր 3 տարբերակներից մեկը և ի լուր աշխարհի հայտարարել, որ **Արցախի հարցը.**

1. 120 հազար արցախցիների հարցն է, կամ
2. 120 հազար արցախցիների և 3 մլն հայաստանցիների հարցն է, կամ
3. 10 մլն աշխարհի հայության հարցն է:

Այս ընտրությունը, որքան էլ ակնհայտ է թվում, այն պե՛տք է կայացնել և հետո բոլոր ծրագրերը կազմել ըստ այդ ընտրության: Անգամ այս ընտրությունից հետո ամեն ինչ պարզ ու միանշանակ չի դառնում կարծես: Օրինակ, իրենց առավել համարձակ համարողները կարող են պնդել.

- Ամբողջ աշխարհի հայությունը պետք է միասնաբար հանձն առնի, որ ստանձնում է Արցախի պատասխանատվությունը և չթողնի այն միայն պետության և Հայաստանի քաղաքացիների ու, առավել ևս, արցախցիների ուսերին: ***Հայ ազգը չպետք է վախենա հաղթանակներից:***

Իսկ իրենց ավելի շրջահայաց համարողները կարող են հակադարձել.

- Արցախի խնդիրը բարդ, բանակցային գործընթաց է: 2020թ. պատերազմից հետո Հայաստանի դիրքերը և Արցախի անվտանգությունը թուլացել են. այսօր խնդիրը կայունացել է ռուս խաղաղապահների և եվրոպացի դիտորդների շնորհիվ: ***Արկածախնդրությունը վտանգավոր է:***

Ինչպե՞ս ենք մենք տեսնում իրականությունը: Այս մասին արժե լրջորեն խոսել:

Նախաձեռնություններ

«*Արցախի հիմնախնդիրը սփյուռքում հատվածական միջավայր է մտցրել: Սփյուռքը ցանկություն ունի օգնելու Արցախի հարցում, սակայն չգիտի, թե ինչպես. չկա ընդհանուր, միասնական գիծ*»,- նշում է փորձագետներից մեկը: Եթե կարողանանք Հայաստանի և Արցախի անվտանգության հարցում աշխարհի հայերով մեկ բռունցք դառնալ, շատ ռիսկեր կպակասեն: Ադրբեջանը և աշխարհը պիտի հստակ տեսնեն ու ընկալեն, որ Արցախի հարցում գործ ունի ոչ թե 120 հազար արցախցիների, այլ 10 մլն աշխարհասփյուռ հայության հետ: **Աշխարհի հայերի «Արցախ՝ 10 մլն» Համաժողովի գումարմամբ** հնարավոր կլինի էապես բարձրացնել հայ ժողովրդի միասնական ձայնը Արցախի հարցում և դրա ընթացքում կազմավորել գործուն մեխանիզմներ, որոնք կդառնան արցախահայության «10 մլն-անոց մեջքն ապահովող» մշտական ինստիտուտներ:

2022թ. Արցախի ԱԺ-ն ու Անվտանգության խորհուրդը տարբեր հայտարարություններով դիմեցին հայության միավորման ու օգնության կոչով: Արդյո՞ք Սփյուռքը, օրինակ, ֆինանսապես կկանգնի Արցախի մեջքին, եթե անհրաժեշտ լինի: *«Համահայկական հիմնադրամը ֆինանսավորում էր ենթակառուցվածքները, միգուցե ինչ-որ կառույց ստեղծե՞նք, որն ավելի շատ կկենտրոնանա զարգացման ծրագրերի վրա: Եթե ես ապրում եմ այլ երկրում, ինչպե՞ս դառնամ մաս ու աջակցեմ Հայրենիքիս»*: Եթե լինի միասնական կամք, ապա կարելի է ստեղծել **Զարգացման ծրագրերի «Արցախ» հիմնադրամ**, որն Արցախում կֆինանսավորի տնտեսությունն ու անվտանգությունն առաջ տանող ծրագրեր՝ հնարավորություն տալով աշխարհի ցանկացած վայրում ապրող ազգային կենսական խնդրի լուծման մաս դառնալ:

Պետք է կարևորել **թվիթերի, ավելի ճիշտ բոլոր սոցիալական ցանցերի, նաև վիքիպեդիայի դերը**: *«Իսրայելն, օրինակ, ֆարսիով գործարկված հարթակ ունի, որտեղ 450 միլիոն մուտքեր են արձանագրվել նախորդ տարի: Համացանցում պարսկալեզու բովանդակության ամենամեծ հավաքածուն Իսրայելինն է»*: Պատերազմից հետո վիքիպեդիայում մեր կողմից տարվող աշխատանքները բավականին թուլացել են: Ադրբեջանցիները շարունակում են լցնել նոր թեմաներ, իսկ մենք այդքան էլ ակտիվ չենք: Մենք լավ կառավարվող՝ «**Համահայկական համացանցային բանակ»** կայացնելու կարիք ունենք:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.
Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:

3 ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Ժառանգության պահպանում և ճանաչելիության ապահովում

«Արմատներից հրաժարվել նշանակում է հրաժարվել ինքդ քեզնից: Հինգ տարեկանից մոմեր եմ վառել հայկական եկեղեցիներում: Իսկ եկեղեցին միայն հավատ չէ, այլ նաև մշակույթ...»:
Անրի Վեռնոյ

Իրականություն

Բացի Հայոց ցեղասպանության հիմնախնդրից կա նաև մեր հարուստ պատմության և ժառանգության պահպանման ու ճանաչելիության հիմնախնդիրը: Տեսանելի է հայ ժողովրդի զավակներին տարբեր հարցերի շուրջ ավելի գործուն դարձնելու կարևորությունը: *«Շատերը մեզանում ծանոթ չեն մեր գանձերին, մեր ժառանգությանն ու հայ ժողովրդի նշանավոր զավակներին, ինչպիսիք են օրինակ Ներսես Շնորհալին և Գրիգոր Նարեկացին, մեր մյուս մեծերը»*: Հայերն աշխարհին մեծ ժառանգություն են տվել: Մեր մեծ գանձերից է հավատքը, որը նպաստել է մեր գոյատևմանը և նույնպես համաշխարհային արժեք է: *«Մենք պետք է խոսենք նյութական և ոչ նյութական ժառանգության մասին՝ նկատի ունենալով մեր մշակույթն իր լայն ու նեղ ըմբռնումներով, արվեստը, փիլիսոփայությունը, կրոնը և այլ իրողություններ»*: Այս ամենի պահպանումն ու աշխարհին ներկայացնելը մեր պատմական պատասխանատվությունն է, սակայն **ինչպե՞ս և ո՞վ պետք է իրականացնի այդ առաքելությունը**. այս հարցի շուրջ է, որ պետք է պայմանավորվենք ազգովի:

Կարևոր է հասկանալ, թե **հայ ինքնությունը, ոգին և հոգեղենն ինչպե՞ս կարող ենք պահպանել, զարգացնել և փոխանցել մյուս սերունդներին**: Ժառանգության վերաբերյալ վերջերս կատարված հետազոտությունների մեկի անվանումը մասնագետները դրել էին Hidden treasures՝ նկատի ունենալով, որ մեր ժողովրդի մի էական մասը մեր ժառանգությանը հաղորդ չէ: *«Խնդիր կա նաև հոգևոր հարթությունում, երբ շատերը չգիտեն մեր հավատքի էության մասին: Իհարկե, տարբեր տեղերում մեր ժառանգության նմուշները ներկայացված են, ինչպես, օրինակ, Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում, սակայն չունենք ռազմավարական լուրջ հիմքերի վրա դրված մոտեցումներ»:*

Քաղաքականություն

Փորձագետները համոզված են, որ մշակույթի ու դրա պահպանման հարցերն ամենալայն իմաստով պետք է մեր առաջնահերթությունները լինեն: Մեր լեզուն, գրականությունը, երաժշտությունը շատ հարուստ են, և նրանց պահպանման վերաբերյալ հարցերը պետք է կենտրոնական լինեն մեր քննարկման ընթացքում: Լայն իմաստով մշակույթի տակ նաև կարելի է հասկանալ մեր ազգային խոհանոցը, կենցաղավարությանը բնորոշ մի շարք այլ բաղադրիչներ, որոնք ունեն մշակութային հենք ու մեր մշակույթի անօտարելի մասն են կազմում: **Այս բոլորը պաշտպանելու պարտավորու-**

թյուն ունենք մենք: Իսկ խնդիրներ ունենք ամենուր՝ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, թե՛ ողջ տարածաշրջանում, թե՛ Սփյուռքում: Ժառանգության պահպանման հարցում շատ անելիքներ կան, օրինակ, Վենետիկում, Վիեննայում ու Երուսաղեմում. պետությունն այստեղ հավուր պատշաճի ներկայացված չէ, իսկ տեղի ուժերն այդքան կարողունակ չեն, որ հարցերն ինքնուրույն գլուխ բերեն:

Մեր պատմության, կերտած հաղթանակների ու հաջողությունների նկատմամբ **երիտասարդների շրջանում հպարտության զգացումի և վարքային մոդելների ձևավորումը** նաև պետք է լինի մեր պատասխանատվությունը՝ համարում են փորձագետները, մինչդեռ դպրոցական ծրագրերում խիստ թերի է ներառված մեր պատմական ժառանգությունը: Դպրոցում է շատ լուծումների բանալին, նաև՝ խնդիրների ակունքը: Օրինակ, «*ինչպե՞ս եղավ, որ մենք քրիստոնյա ենք, բայց հանկարծ պայքար մղվեց քահանաների և եկեղեցու դեմ՝ դպրոցներից վերջիններիս դուրս մղման նպատակով, և դպրոցներում դադարեցվեցին ավետարանի ընթերցանության պրակտիկան: Դա արվեց բոլորիս աչքի առջև*»,- նշում էր հայտնի մանկավարժ փորձագետը:

Առանձին փորձագետներ առանձնացնում են նաև **Խորհրդային տարիների հանդեպ պատմական պատասխանատվության հարցը**, որից կարծես թե խուսափում ենք: *«Մենք ստեղծել ենք արժեքներ, և այդ շրջանը նույնպես պատմական պատասխանատվության մաս է. մենք այսօր դրա կրողն ենք*»,- նշում են նրանք:

Սակայն **ի՞նչ մեխանիզմներ պետք է լինեն և ինչպե՞ս պետք է հանրահռչակվի մեր ժառանգությունը**, այս մասին է, որ խոսելու կարիք ունենք:

Նախաձեռնություններ

Ըստ փորձագետների, նախ մենք պետք է վստահ լինենք, որ մեզ համար կարևոր ժառանգության նմուշները փաստաթղթավորված են: Դա մեզ թույլ կտա ունենալ մեր ժառանգությունն ամրագրող մի մեծ ցուցակ կամ համակարգ, **Հայկական ժառանգության ցանկ**, մոտավորապես **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի համաշխարհային ժառանգության ցանկի պես, որտեղ կլինեն աշխարհի տարբեր անկյուններում առկա մեր ժառանգության նմուշները: Այսպիսի նախաձեռնություններ արդեն իսկ իրականացվում են, և մեկ միասնական ազդեցիկ ծրագրի կարիք կա:

«Յանկացած հայ կարող է և պետք է լինի իր ազգի ժառանգության պահպանության մարտիկ և «PR-ամբասադոր»՝ հայրենիքն ու ողջ հայությունը պատշաճ կերպով ներկայացնող»,- պնդում էին քննարկումների մասնակիցները: Գաղափար կա նախաձեռնելու «**Հայկական ժառանգության դեսպաններ»** շարժումը՝ իր հարթակներով, ուղղորդված PR արշավներով, գործուն մեխանիզմով, որը թույլ կտա բոլորիս ներգրավվել Հայաստանի, հայության և մեր հաջողությունների տարածման գործում:

Կան հայկական ժառանգության նմուշներ պարունակող մասնավոր հավաքածուներ, որոնց մասին մենք քիչ բան գիտենք: Վտանգ կա, որ այդ նմուշները կարող են ցրվել աշխարհով մեկ: Փորձագետները կարևորեցին **Հայկական ժառանգության հիմնադրամ** ստեղծելու գաղափարը, որը կհսկի նման գործընթացները, կհետևի բոլոր աճուրդներին և հայկական ժառանգության նմուշների առկայության դեպքում դրանք արագ կգնի ու կբերի Հայաստան, նաև տեղեկատվություն կհավաքի գոյություն ունեցող հավաքածուների մասին:

Գոյություն ունի «Իրանիկա» հարթակը, որը լավ շտեմարան է, իրանագիտական մի շարք հետազոտությունների և այս ուղղությունն ուսումնասիրող միջազգային համալսարանների համագործակցության արդյունք է ու հրաշալի միջոց Իրանը մեկ դեմքով և մեկ տեղից ներկայացնելու համար: Իրանիկայում գրվող ցանկացած կոնկրետ նյութ ունի գիտական հենք ու հիմնավորում: Փորձագետների կողմից առաջարկ եղավ հայագիտական որևէ կենտրոնի հիմքի վրա Իրանի օրինակով «**Արմենիկա» ծրագիրը** ստեղծել և առաջ տանել:

Բոլոր թանգարաններում պետք է թվայնացման և այլ միջոցներով պահպանենք մեր ժառանգության նմուշները: Փորձագետները ընդգծեցին մեր ունեցած **արժեքների թվայնացման, պահպանման և տարածման մեծ ծրագրի** կարևորությունը:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.
Ո՞րն է հայության տարբեր հատվածների համար պատմական պատասխանատվության ընդհանուր շրջանակը հայկական ինքնության, հայրենիքի, պատմական հիշողության և արժեքների պահպանության ժառանգությունն ապագա սերունդներին և աշխարհին փոխանցելու հարցերում:

4 ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հաջորդ սերունդներին հայ պահելու պատասխանատվությունը

«Մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է»:
Պարույր Սևակ

Իրականություն

- Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի մասնագետների հետազոտության համաձայն՝ հայերենն աշխարհի 60 ամենաազդեցիկ լեզուների շարքում է:
- 2010 թվականին արևմտահայերենը մտցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի վտանգված լեզուների էլեկտրոնային ատլասի» մեջ:
- Ընդունված է, որ մենք աշխարհում շուրջ 10 միլիոն ենք, մինչդեռ հայերենով խոսում է միայն 6 միլիոնը:

Սփյուռքում էութենական են հայոց լեզվին վերաբերող հարցերը, հատկապես լեզվի պահպանումը և դրա փոխանցումը հաջորդ սերնդին: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ տարբեր գաղթօջախներում, սփյուռքյան համայքներում հայոց լեզուն բաժանվում է տարբեր բարբառների և լեզվական ձևերի*: «Ես իմ երեխաներին ուղարկում եմ Լոնդոնում գտնվող հայկական կիրակնօրյա դպրոց, սակայն այստեղ հաճախում է մոտ 100 երեխա, իսկ Լոնդոնում ապրող հայերը մոտ 30 հազար են»*: Ինչպե՞ս կարող ենք տարբեր սերունդների հայ ներկայացուցիչներին համախմբել նման դպրոցների, կրթօջախների, հայկական ժառանգության ու դրա եզակի նմուշների շուրջ: Ինչպե՞ս նրանց **խրախուսել, որպեսզի սովորեն հայոց լեզուն**, հաճախեն նման դպրոցներ, կիրառեն հայերենը: Դա կարող է լինել տանը, դպրոցում, որևէ խմբակում, որտեղ կա համապատասխան միջավայր, հայախոս մարդիկ, ընկերներ: Այս հարցերն էին առաջ քաշում փորձագետները՝ թեմային անդրադառնալիս:

Քաղաքականություն

Հայոց լեզվի իմացության խնդրին ուղղված աշխատանքներ միշտ են արվում հայկական տարբեր կազմակերպությունների կողմից տարբեր երկրների համայնքներում: Սակայն այդ ջանքերը բավարար չեն հարցի հիմնարար լուծման համար: Միայն հայերենի և, մասնավորապես, արևմտահայերենի խմբակների ստեղծումն ու բացումը քիչ է: Մեզ **գործուն մեխանիզմներ են անհրաժեշտ**, որոնք կայուն հիմքերի վրա կդնեն հայապահպանությունը Սփյուռքում:

Փորձագետները կարծում են, որ հստակ **կրթական քաղաքականության մշակման և իրականացման կարիք կա Սփյուռքում**: Իսկ համատարած և հետևողական քաղաքականությունը ոչ միայն ենթադրում է բոլորի ջանքերի համադրում, այլև հստակ քայլեր՝ դպրոց-դասագիրք-ուսուցիչ շղթայում կոնկրետ՝ լավ կառավարվող գործընթացներ:

Փորձագետները նաև կարծում են, որ կրթական մեխանիզմները բավարար չեն լինի, եթե երեխան չունենա միջավայր, չշփվի իր հասակակիցների, ընկերների հետ, շփման ու խաղերի միջոցով չսովորի, հաճույք չստանա ընթացքից: Այս պարագայում քաղաքականությունը կվերածվի լոկ լեզվի պարտադրանքի, որը հազիվ թե օգտակար լինի: *«Շատ կարևոր է, որ այս բոլոր հարցերին,* ***առաջարկություններին մենք նայենք երեխաների աչքերով՝*** *իրապես գնահատելով հնարավոր արդյունքներն ու ազդեցությունները»:*

«Հայագիտությունը նաև քաղաքականություն է, պետք է ***հայագիտական կենտրոն-ներ ստեղծել աշխարհի լավագույն համալսարաններում*** *և դա ուղիղ պետական ռազմավարության խնդիր է»*,- նշում էին քննարկումների մասնակիցները:

Լրջագույն **խնդիրներ ունենք արևմտահայերենի պահպանման ուղղությամբ**: Եթե լուծումներ չգտնենք, արևմտահայերենն արևելահայերենի ճնշման ներքո ինչ-որ ժամանակ անց կարող է վերածվել շատ նեղ շրջանակում խոսացվող լեզվի, որն այլևս ոչ մի մակարդակում կիրառություն չունի: Մինչդեռ ակնհայտ է, որ արևմտահայերենի պահպանումն ունի ռազմավարական նշանակություն: *«****Թումո-ն և ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանն*** *ունեն հեռավար կրթության հրաշալի մեթոդներ և փորձառություն, նրանք կարող են արձագանքել այս խնդիրներին»,- կարծում են փորձագետները*: Ոմանք էլ առաջարկեցին, որ, որպես Սփյուռքի ջանքերով ստեղծված կրթօջախ, **Հայաստանի ամերիկյան համալսարանը** կարող է դառնալ արևմտահայերենի հիմնական դարբնոցն աշխարհում:

Փորձագետները երկար քննարկեցին նաև հայկական բազմազանության ասպեկտը: *«Մենք մեր մեջ հային սահմանել ենք որպես մեկ մշակույթ, մեկ ազգ, սակայն մենք այս կերպ անտեսել ենք մեր բազմազանությունը»,-* պնդում էր փորձագետներից մեկը և առաջարկում՝ **«Բազմազանության մեջ միասնություն»** լատինական հայտնի լոզունգով է պետք առաջնորդվել: *«Ինչո՞ւ են այսօր պայքարում բարբառի դեմ և թույլ չեն տալիս, օրինակ, Շիրակի մարզի դպրոցում իրենց բարբառով խոսել: Ինչու՞ շիրակցի երեխան չի ուսումնասիրում իր բարբառը»:*

Նախաձեռնություններ

Ամենատարբեր ուղղվածություններով և բովանդակությամբ ճամբարներ, հանդիպում-ներ, փոխայցելություններ պետք է կազմակերպել: Այսօր նման նախաձեռնություններ-ով «Դեպի Հայք» (Birthright Armenia), «Արի տուն», «Repat Armenia» և այլ ծրագրեր կան. դրանք պետք է շատացնել: Կրթական փոխանակումները, այդ թվում ներքին և ներգնա փոխանակումները, խնդրի լուծման մեծ ներուժ ունեն: Պետական լուրջ աջակցության կարիք կա այս հարցում: Փորձագետներն առաջարկեցին այս գործընթացն առաջ տանող՝ **Երիտասարդական փոխանակումների կոորդինացիոն խորհուրդ** ստեղծել՝ պետության և հիմնական կառույցների ներգրավմամբ:

ՀԲԸՄ օրինակով ոգեշնչված՝ հանձնախումբը լրջորեն դիտարկեց **Հայկական**

վիրտուալ համալսարանների ստեղծումը խթանելու և մրցակցություն ապահովելու գաղափարը: Առցանց կրթութունը հայագիտության համար կարող է դառնալ փրկարար օղակ՝ հաշվի առնելով, որ ֆիզիկական ներկայությունն այլևս մեծ խնդիր է դառնում: Եթե կարողանանք ձևավորել վիրտուալ միջավայր լավագույն կադրերի, մասնագետների ներգրավածությամբ, ապա այն կկարողանա դառնալ նաև միավորող ու գիտելիքաստեղծ գործոն: *«Պատկերացրեք՝ եթե աշխարհի բոլոր ծայրերից հայերը ոգևորվեն հայոց լեզվի, հայոց պատմության և մշակույթի ոլորտներում իրենց տանը բարձրակարգ կրթություն ստանալու գաղափարով, ինչ արդյունքներ կարելի է ունենալ»*:

«Հայոց լեզուն՝ խաղերի միջոցով» նախաձեռնության կարևորության մասին հատկապես ակտիվ էին քննարկում մանկահասակ երեխաներ ունեցող սփյուռքահայ փորձագետները: *«Մենք ուզում ենք, որ մեր երեխաների կապը հայրենիքի հետ մնա/զարգանա, նրանք հայ մնան: Շատ լավ կլինի, որ ժամանակակից խաղեր լինեն, երեխաները մտնեն, հայերենի և հայության մասին իրենց գիտելիքներով «badge»-եր հավաքեն, ու իրար ասեն՝ ահա այսքան շքանշան ունենք»:*

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.
Ի՞նչ սկզբունքների և գործնական կառույցների վրա կարելի է ձևավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ:

1 ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Հայը և հայկական Սփյուռքն այսօր

Նախաբան

Ո՞վ ենք մենք

Հայաստան[1]-Սփյուռք միասնականության խնդրով հրավիրված փորձագետները նախ կարևոր համարեցին որոշ հայեցակարգային հարցերի քննարկումը, որպեսզի մարդիկ կարողանան լսել իրար ու խորհել և հետագա քննարկումներում վստահ լինեն, որ բազային ընկալումների հարցում քննարկման սեղանների շուրջ ներդաշնակություն կա:

- **Ինչպե՞ս ենք մենք նկարագրում ինքներս մեզ, ո՞վ է հայը 21-րդ դարում**,- քննարկումն այս հարցով սկսելու առաջարկներ հնչեցին:

- Ինչպե՞ս ենք մենք ձևակերպում հայրենասիրությունը, իսկ ազգասիրությու՞նը:

- Ո՞րն է մրցունակ հայը:

- Ո՞րն է գրավիչ և հզոր Հայաստանի մեր պատկերացումը:

- Ի՞նչ է ծննդավայր և ի՞նչ է հայրենիք. ո՞րն է տարբերությունը:

Այս հարցերի պատասխանները, ըստ փորձագետների, Համաժողովի մասնակիցներին հաստատապես կօգնեն Հայաստան-Սփյուռք միասնականության խնդրում լուծումների փնտրտուքն առավել դյուրին դարձնելու համար:

Ի՞նչ գիտենք մենք Սփյուռքի մասին

Հայաստանի և Սփյուռքի փորձագետները համակարծիք են, որ մենք Սփյուռքի վերաբերյալ տվյալների լուրջ պակաս ունենք և հարկ է մեծ աշխատանք տանել սփյուռքի վերաբերյալ **տվյալների շտեմարաններ ստեղծելու ուղղությամբ**: Անգամ առաջարկ հնչեց, որ տվյալներ տիրապետող և կառավարող ամենահարուստ ընկերությունների՝ Google-ի և մյուսների հետ պետք է փորձել աշխատել այս ուղղությամբ:

Ըստ Սփյուռքի գիտակների՝ Սփյուռքն ինչ-որ ներկայացուցչական կառույց չէ, այն ինքնին միասնական չի կարող լինել, և Սփյուռքի խնդիրները շատ տարբեր են: «*Սփյուռքի միասնականությունը ուտոպիա է*»,- հնչում էր քննարկումների ժամանակ: **Սփյուռքը մեկ Սփյուռք չէ**, և պետք է խնդիրները դիտարկել համայնքներով: *«Ես 3 տարբեր Սփյուռք եմ ճանաչում»*.

1. **ցեղասպանության հետևանքով առաջացած Սփյուռքը**, որը, մանավանդ միջին Արևելքում, ունի ինքնիշխան պետականության ընդգծված հակում և շատ հայաստանակենտրոն է: Այստեղ, անշուշտ, կան նաև սփյուռքակենտրոն շրջանակներ,
2. **անցած 30 տարիներին Հայաստանից գաղթածներ**, ովքեր, օրինակ Գլենդել եկած հայերը, Հայաստանում ունեն ազգականներ, մտերիմներ ու նման ամուր կապեր, բայց բացառիկ թույլ կապեր պետականության մասով,

[1] Փորձագետները որոշեցին կիրառել **Հայաստան-Սփյուռք** տարբերակը **Հայրենիք-Սփյուռքի** փոխարեն՝ շեշտելով, որ Հայաստան ասելով պետք է հասկանալ **Հայաստանն ու Արցախը** միասին, մինչդեռ Հայրենիք եզրույթը շատ ավելի վերացական է և այլ հարթություններ է պարունակում:

3. «երրորդ Սփյուռքն» ամենահինն է, օրինակ, Բոստոնի հայ համայնքը, որտեղ մարդիկ **ապրում են արդեն 4-5 սերունդներով**, նրանց համար հայ լինելը Հայաստանի հետ կապ չունի, ավելի շատ կապված է մշակույթի, խոհանոցի հետ:

Իսկ իրականում Սփյուռքը հասարակ մարդիկ են, ովքեր շարժվում են պարզ մոտիվացիաներով: 2 խումբ ունենք՝ մարդիկ, ովքեր շարժվում են անձնական շահերով, իրենց կենցաղով, և մարդիկ, ովքեր կարևորում են պետությունը, զգում են պարտավորություն: Ամեն ոք ինչ-որ չափով պատրաստ է ներգրավվել համահայկական օրակարգում:

Հայաստանի Հանրապետության գոյության 30-ից ավել տարիների ընթացքում մեծ է եղել Սփյուռքի դերն ու նշանակությունը գրեթե բոլոր ոլորտներում: Իսկ տնտեսության մեջ և հանրային կյանքում **Սփյուռքի կարևորագույն ներդրումը** զուտ գումարներ չեն եղել, այլ **մշակույթն է եղել և շարունակում է մնալ**. սկսած խորհրդային տարիներից, երբ սփյուռքահայերի ներհոսքը բերում էր, ասենք, երաժշտություն, որը ԽՍՀՄ-ում անգամ չկար, այսօր էլ այն բերում է, օրինակ, «Թումո»: Եվ սա մենք պետք է հաշվի առնենք հարաբերությունների պարադիգմում:

Ի՞նչ նպատակներ ունենք մենք

Աշխարհասփյուռ հայության համար նպատակների հարաբերական կարևորության աստիճանակարգն, ըստ փորձագետների, մոտավոր այս տեսքն ունի.



Կամ պարզ լեզվով ասած՝ մենք պիտի կարողանանք լուծել հայապահպանության խնդիրն ամեն տեղ, մենք պիտի ապահովենք մեր լինելիությունն ինքնիշխան Հայաստանում, դա անելու համար պիտի կարողանանք անվտանգության խնդիրը լուծել, իսկ անվտանգությունն ապահովելու համար տնտեսական հզորացում է պետք: Ու այդ ամենն անելու համար մեզ միասնականություն է պետք:

Ի՞նչ խնդիրներ ունենք

Համահայկական օրակարգի ձևավորման հարցերում ցայսօր, որպես կանոն, մասնակցում էին անհատները, սփյուռքահայ էլիտան. պակասում են **հարթակները, որտեղ կխոսի ժողովուրդը**: Առավել ևս, որ Սփյուռքն ինքնին ինստիտուցիոնալացման ոչ բարձր մակարդակ ունի. Սփյուռքի միայն 15%-ն է

առնչվում հայկական կազմակերպությունների հետ, ի դեպ, դրանցից հիմնականն էլ Հայ Առաքելական Եկեղեցին է: Մնացյալը որևէ առնչություն չունի հայկական կառույցների հետ:

Մինչդեռ այսօր **Սփյուռքում վստահության լուրջ ճգնաժամ ունենք** ոչ միայն պետության հանդեպ, այլ նաև ՀՀ բնակչության: Օրինակ, արևմտյան Սփյուռքը նկատելիորեն չի վստահում հայաստանցուն, իսկ մարդիկ Հայաստանում շարունակում են սփյուռքին «ախբար» ձևով վերաբերվել՝ բացասական երանգ հաղորդելով: «*Կարևոր եմ համարում, որպեսզի բոլորս միմյանց հայ կոչենք ու այդ հիմքով փորձենք ձևավորել վստահություն*»,- առաջարկում էր փորձագետներից մեկը: «*Ես երկար ապրել եմ ԱՄՆ-ում, Եվրոպայում, կա վստահության լուրջ խնդիր, նաև այն հարցում, թե արդյո՞ք հավաքագրվող միջոցները կհասնեն Հայաստանին*»:

Այս իրողությունների պայմաններում կարևորագույն հարցը, որի պատասխանը պետք է գտնել, այն է, թե **ի՞նչ կարելի է անել, ի՞նչ կոնկրետ քայլերով կարելի է Սփյուռքի և Հայաստանի, սփյուռքահայերի և հայաստանաբնակների միջև առկա վստահության անջրպետը մեղմել:**

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023

Երևան

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.

Ի՞նչ սկզբունքների և գործնական կառույցների վրա կարելի է ձևավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ:

2 ԴԻՏԱՐԿՈՒՄ

Կենտրոնում՝ Հայաստանը

Նախաբան

Իրականություն

«*Սփյուռքը նախկինում ուներ նպատակ՝ հայ դպրի պաշտպանությունը: Մեզ համախմբողը դա էր: Հիմա մենք կորցրել ենք այդ նպատակը: Բոլոր մեր աշխատանքներն ու ծրագրերը միջոցներ են, իսկ ո՞րն է նպատակը: Մենք հայապահպանությունը պետք է փոխենք հայաստանապահպանությամբ*»,- փորձագետներից մեկի այս բառերով՝ հայաստանակենտրոնության նպատակադրումը դարձավ քննարկումների առանձին ճյուղ «Հայաստան-Սփյուռք միասնականություն» փորձագիտական հանձնախմբում: **«Պետություն + հայություն» բանաձևն** այս քննարկումներում բավական լայն ընդգրկում ունեցավ և հատկապես ուշագրավ շարադրանք ստացավ հարգարժան փորձագետներից մեկի կողմից՝ հետագայում դառնալով պարբերաբար մեջբերվող խոսք.

«***Ես Սփյուռքը տեսնում եմ սեղանի վրա ցրված երկաթի փոշու տեսքով***, *որը մենք փորձում ենք հավաքել:* ***ՀՀ-ն պետք է լինի այն մագնիսը***, *որը պետք է հավաքի բոլորին: Սակայն դրա համար պիտի լինի անսահման վստահելի պետություն: Սփյուռքը չպետք է կամավոր աշխատի՝ տարբեր ոլորտներում հատվածական ծրագրեր իրականացնելով: Ինչպե՞ս կարող ենք մենք դարձնել պետությունը նախանձախնդիր, որպեսզի մագնիսի նման հավաքի Սփյուռքին: Նաև ինչպե՞ս լիցքավորենք երկաթի այդ փոշեհատիկները»:*

Ըստ առանձին փորձագետների՝ պետք է ընդունենք, որ **այսօրվա Սփյուռքը, այնուամենայնիվ, հայաստանակենտրոն չէ** և պետք է հրաժարվել ձև անելուց, իբր Սփյուռքն այդպիսին է: Հարցախույզի արդյունքներով՝ Սփյուռքի հետաքրքրություններում Հայաստանը միայն 4-րդ տեղում է, և այդ փաստի հետ պետք է հաշվի նստել: Չնայած հանուն ճշմարտության պետք է նկատել, որ գումարային առումով գտնվելով 4-րդ տեղում՝ Հայաստանն, այնուամենայնիվ, առկա է բոլորի պատասխաններում:

Քաղաքականություն

«*Ըստ իս, ամենակարևոր հարցը, որը մենք այսօր ունենք՝ Հայաստանի պետականության պահպանումն է: Կներեք, ի՞նչ Հայաստան-Սփյուռքի մասին է խոսքը, եթե Հայաստանը չլինի*»,- այս դիտարկմամբ առաջ քաշվեց գաղափարն առ այն, որ Հայաստանին նոր արյուն տալ է պետք, այսինքն՝ **կազմակերպել մեծ ներգաղթ**: Հասկանալի է, որ սա բարդ է իրականացնել, բայց եթե մենք սա ծրագրավորենք որպես գերակայություն, մյուս շատ հարցեր «մեխանիկորեն իրենց տեղն են ընկնում»՝ պաշտպանություն, տնտեսություն, մտածելակերպ, կրթություն, պետական համակարգ: Հայաստանը կփոխվի, Արցախն էլ, քանզի առանց Արցախի անվտանգության մենք չենք կարողանա ձևավորել Հայաստանինը: Հիշեցնենք, որ Խորհրդային Հայաստանը 3 անգամ պետական մակարդակով ներգաղթ

կազմակերպեց, իսկ Իսրայելում Սփյուռքի նախարարությունն այսօր կոչվում է Հայրենադարձության ու ինտեգրման նախարարություն:

«Պետություն + հայություն» բանաձևը ենթադրում է, որ պետք է **փոխել պետական կառավարման համակարգի տրամաբանությունը**, որը վերից վար և հակառակ պիտի հաշվի առնի ու մտածի ոչ թե 3 մլն հայաստանցիների, այլ 10 մլն հայերի մասին: Այսինքն, ցանկացած ոլորտի ցանկացած որոշում պիտի դիտարկվի ողջ հայության պրիզմայով: Եվ բոլորի աշխատանքային համակարգը պետք է վերակառուցվի հենց դրա հիման վրա: Ըստ փորձագետների՝ Արցախի կառավարությունն այդ գաղափարով ինչ-որ չափով աշխատում է:

Թեման, որն այս համատեքստում բուռն քննարկման արժանացավ, տարբեր ձևաչափերով Սփյուռքի քաղաքական մասնակցությունը կամ ոչ-մասնակցությունն է Հայաստանի զարգացմանը: Հատկապես կարևորվեց **սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը**, որով Սփյուռքի հանդեպ սահմանափակումները կդառնան առավել ազատական: *«Մեր Սահմանադրության մեջ ունենք 6 հոդված, որոնք, օրինակ, դրսում սովորած և երկքաղաքացի հային թույլ չի տալիս դառնալ նախարար»*: Մենք իրավունք չունենք հրաժարվելու Սփյուռքի ռեսուրսներից: Կան բազմաթիվ երկրներ, որտեղ երկքաղաքացիությունը խոչընդոտ չէ: Անգամ ԱՄՆ-ում դա խնդիր չէ: *«Իվերջո հայ ժողովրդի ներուժի 75-80% Սփյուռքում է, որտեղ կան նաև ՀՀ քաղաքացիներ: Ինչպե՞ս կարող ենք հզորացնել մեր պետությունը՝ այդքան ռեսուրսից հրաժարվելով»*:

Հայաստանի քաղաքական կյանքին Սփյուռքի ինտեգրման և մասնակցության թեման, այնուհետև, կենտրոնացավ օրենսդիր իշխանության դաշտում: Փուլ առ փուլ առաջ գնալու կողմնակիցներն առաջարկում էին, որ նախ ընտրություններին մասնակցող կուսակցություններից կարող ենք օրենսդրորեն պահանջել ինչ-որ համամասնությամբ **ընտրացուցակներում ընդգրկել Սփյուռքի ներկայացուցիչներին**: Իսկ որպես հարցի լուծման ավարտական փուլ դիտարկվեց **Երկպալատ խորհրդարանի մոդելը**, որտեղ Վերին պալատը կամ Սենատը կազմավորվում է Սփյուռքի ներկայացուցիչներից: Այս գաղափարը վաղուց է շրջանառվում, իսկ ընտրության մեխանիզմի բարդ իրականանալիության մասին պատկերացնում են բոլորը:

Շոշափված մյուս առաջարկը իրենց հայ համարող մարդկանց կողմից **ՀՀ-ում միջին հարկի (100-150$) վճարումն** էր: Կային նաև գաղափարին դեմ արտահայտվողներ. «*Ինչու՞ պետք է, օրինակ, Արգենտինայում բնակվող հայը, ով ստանում է ամսական 1000 դոլար, ամեն ամիս ՀՀ բյուջե փոխանցի ինչ-որ գումար: Ի՞նչն է լինելու նրա մոտիվացիան*»: Ավելի փոխզիջումային լուծումների կողմնակիցները հարթեցնում էին քննարկման սուր անկյունները. «*2020թ. հետո Սփյուռքում ավելացան հայաստանակենտրոն միտումները, մեր հայրենակիցներն ավելի համակարգված ու լուրջ են հիմա ամենը հասկանում ու պատկերացնում: Պետք է հասկանալ, թե ինչպես կարելի օգտագործել այդ հնարավորությունները: Կարծում եմ՝ պետք է մտածել*

համակարգ, որը թույլ կտա մարդկանց վճարումներ անել ըստ իրենց հնարավորության»:

Փորձագետները քննարկեցին նաև սփյուռքահայերի՝ կամավորության սկզբունքով կամ որևէ այլ ընդունելի մեխանիզմով **Հայոց բանակում ծառայելու հարցը**:

Նախաձեռնություններ

- Պետական մակարդակով Մեծ ներգաղթի ռազմավարության որդեգրման դեպքում՝ **«Back to Armenia» համահայկական շարժման** նախաձեռնում:

- ՀՀ տնտեսության զարգացման գործում յուրաքանչյուր հայի՝ բաժնետոմսերի գնման տեսքով մասնակցության հնարավորություն տվող և վստահելի կառավարմամբ **«Հայաստան» ներդրումային ընկերության** ստեղծում:

- Հայաստանում կիրառվող ազգանունների **«yan» վերջավորության** և Սփյուռքում կիրառվող **«ian» վերջավորության** միասնականացման գործընթացի նախաձեռնում:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ հարց.
Ի՞նչ սկզբունքների և գործնական կառույցների վրա կարելի է ձևավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ համակարգ:

3 ԴԻՏԱՐԿՈՒՄ

Նպատակը՝ սփյուռքի պահպանություն

Իրականություն

Սփյուռքի նպատակը ՀՀ-ի ամրապնդումը, պետականության կերտումը կամ հզորացումը չէ միայն. դա պետք է լինի նպատակներից մեկը, ոչ միակը: **Սփյուռքի նպատակներից է նաև ինքնապահպանությունը**, զարգացումը և փոխանցումը հաջորդ սերունդներին, լեզվի և մշակույթի փոխանցումը: Այս տեսանկյունից «Սփյուռքը նաև ինքնանպատակ է»: Պատմականորեն միշտ եղել է այդպիսին, բայց երազել է Հայրենիքի մասին:

Հետևաբար Հայաստան-Սփյուռք միասնականության գլխավոր նպատակ կարելի է սահմանել նաև **Սփյուռքի պահպանությունը**: Իսկ խնդիրներ Սփյուռքի համայնքներում շատ կան: Ամենաթարմ օրինակը Լիբանանն է, որտեղ ներկայում բավականին ծանր վիճակ է. նվազագույն եկամուտը 21 դոլար է, անգամ Աֆղանստանից ցածր: Ժողովրդի մի զգալի մասը հացի գումար չունի, ներառյալ հայ համայնքը: Բայց անգամ այդ կացության մեջ մարդիկ, միևնույնն է, մտահոգ են Հայաստանով:

Սփյուռքում կրթական մակարդակի անկում կա: Փորձագետներից մեկը պատմեց Հունաստանի «Ազատ օր» օրաթերթի խմբագրի հետ իր զրույցը և մեջբերեց նրա խոսքերը. *«Ամեն տարի հրապարակում են համալսարաններ ավարտած հայերի տվյալները, այդ տարի եղել էր 21 անձ. համայնքի թիվը ավելացել է՝ 21 հազարից հասել է 50 հազարի, բայց ուսանողության թիվը նվազել է»*: Նոր Սփյուռքի ընկերային և տնտեսական մակարդակը բավարար չի և հսկայական աշխատանքի տեղ կա:

Այս և այլ խնդիրները շատ են, և բոլորն էլ լուծման կարիք ունեն: Համայնքից համայնք մոտեցումներն էլ տարբեր պիտի լինեն. Ֆրանսիայի ֆրանսախոս համայնքի հետ հարկ է մի կերպ աշխատել, Արգենտինայի իսպանախոս սփյուռքի հետ՝ մեկ այլ կերպ: Այո՛, **Սփյուռքի հետ պետք է բազմազան աշխատել**, ինչպիսին հենց ինքը Սփյուռքն է: Համագործակցությունն էլ պետք է բազմաբնույթ լինի, սակայն նման կապերը բացակայում են, ու, ըստ փորձագետների, բացակայում են Հայաստանի պատճառով, քանի որ միջավայրը պետք է ստեղծվեր Հայաստանի կողմից:

Սփյուռքն անցավ սիրիական, հետո լիբանանյան, իսկ այսօր անցնում է ուկրաինական ճգնաժամով: Մենք անընդհատ տեսնում ենք, որ **Սփյուռքի մեր համայնքներին աջակցող համակարգերի** բացակայություն ունենք: Երկրորդ ճգնաժամը 44-օրյա պատերազմն էր, որը ցույց տվեց, որ մեծ աջակցություն կար, սակայն գործուն համակարգ չկար, ինչը բերում է նույնիսկ Հայաստան-Սփյուռք հարաբերության հետ կապված խնդիրները: Մենք պետք է ունենանք համակարգ, առաջնորդություն, որը ճգնաժամերի ընթացքում կլինի ուղղորդող:

Քաղաքականություն

Իսկ Հայաստանի ո՞ր կառույցը կամ կառույցները պետք է զբաղվեն Սփյուռքի գործերով: Սփյուռքում ու նրա հետ ապրողն ու ուղիղ աշխատողը միայն գիտի

կոնկրետ խնդիրները: Այս համատեքստում կարևորվեց ՀՀ բոլոր դեսպանատներում Սփյուռքի հետ աշխատող պաշտոնյայի գոյության կարևորությունը, մարդ, ով լավ գիտի առաջին հերթին տվյալ համայնքը և նրա առանձնահատկությունները: Փորձագետները քննարկեցին **Հանձնակատարի գրասենյակի կամ Սփյուռքի նախարարության** արդյունավետության մասին պատկերացումներ: *«Մենք կարիք ունենք միավորվելու, որպեսզի ՀՀ-ն մեկ ձայնով խոսի դեպի Սփյուռք»:* Այստեղ փորձագետները դիտարկեցին Հունաստանի փորձը, երբ օրինակ, կա Արտաքին գործերի նախարարություն, որտեղ նաև նստում է Սփյուռքի հարցերով նախարարը և երկու նախարարները ղեկավարում են կառույցը, միասին կառավարում են 2 ուղղություններն էլ և երկվություն չի առաջանում:

Հակադարձ դիրքորոշումներ էլ կային այս հարցում: Օրինակ, որ պետական միջամտության փոխարեն հարկ է սահմանել նոր մոտեցում ու քաղաքականություն, ձևավորել նոր սուբյեկտներ, կենտրոններ: «*Պայմանական անունը դնում ենք **Փյունիկ-Հայաստան** և կենտրոնները տարածում աշխարհով՝ փյունիկ-Ֆրանսիա, փյունիկ-Ռուսաստան և այլն*»: Հասարակական, սոցիալական ու կրթական ուղղվածությամբ կազմակերպություններ, որոնց միջոցով կապահովվի կապը ՀՀ-ի ու Սփյուռքի միջև: Նման կառույցները շատ ավելի նվազ խնդրահարույց են: «*Խոսում ենք **ՀՀ դեսպանատներում հատուկ սփյուռքի գծով ներկայացուցիչ ունենալու մասին**, դա շատ ավելի խնդրահարույց է, երբ պետության անունից է ինչ-որ մեկը փորձում խոսել ու օգնել: Իսկ նման ՀԿ-ների տեսքով, անունից ու գաղափարից սկսած մշակման դեպքում ավելի լավ գործունեություն կստանանք*»:

Երրորդ տեսակետի համաձայն՝ մենք արդեն ունենք **«Հայաստան» հիմնադրամը**, որն իր կառույցներն ունի: Անհրաժեշտ է ուղղակի վերակառուցել արդեն եղածը, որ հստակ լինի, օրինակ, ամենամյա դրամահավաքի ժամանակ ինչ-որ գումար ուղղվելու է այս կամ այն համայնքի խնդիրներին: Տեսահոլովակներով կցուցադրվեն Սփյուռքի համայնքների խնդիրները և ծրագրեր կֆինանսավորվեն:

Ընդհանրապես ամենատարբեր ցանցեր ստեղծելու գաղափարների պակաս քննարկումներում չկար: Պետության նախաձեռնությամբ ստեղվել և արդեն իսկ գոյություն ունեն **մասնագիտական՝ բժիշկների, ինժեներների, իրավաբանների և այլ ցանցեր**: Փորձագետները կարևորեցին դրանց մշտական ակտիվությանն ուղղված՝ պետական համապատասխան կառույցների աշխատանքի հանրային վերահսկողությունը:

Նախաձեռնություններ

Փորձագետները հանդես եկան նաև **Գործարարների համագործակցային ցանց** ստեղծելու գաղափարով: Հաջողակ գործարար հայերն ամենուր են. «*թո՛ղ համատեղ բիզնես կապեր ձևավորեն Արգենտինայից Հնդկաստան և այլն, որի համատեղ շահույթի մի մասն էլ կծառայի Հայրենիքին: Եվ ամենևին էլ պարտադիր չէ, որ այդ*

կապերն անպայմանորեն Հայաստանով միջնորդավորված լինեն, կարող են ուղիղ լինել՝ ասենք, Կանադայի համայնք-Կիպրոսի համայնք»:

«*Առաջարկս վերաբերում է **Համահայկական SS ընկերության** ստեղծմանը. դրա համահայկականության ընդգծման համար այն կարող ենք կազմավորել բաժնետիրական ընկերության մոդելով, որտեղ մարդիկ իրենց մասնակցությունը կունենան տարբեր ֆորմատներով*»,- այսպիսի հետաքրքիր առաջարկ էլ ուներ մեկ այլ փորձագետ:

Բայց ամենակարևոր համահայկական ցանցը, որի ստեղծման մասին խոսում էին փորձագետները, **Համահայկական լոբբիստական ցանցն** էր: Հայկական լոբբիստական կառույցները պատվով են կատարում իրենց առաքելությունը ողջ աշխարհում, սակայն նրանք ներառում են աշխարհասփյուռ հայերի փոքր հատվածը միայն: Մեկ միասնական լայն ցանցի կայացման դեպքում հայերն Ավստրալիայից մինչև Կանադա կարող են միասնաբար ջանքեր ներդնել և համատեղ հաղթանակներ գրանցել ազգային խնդիրներում:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

Համապարփակ հարց.
Որո՞նք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ուղիները:

1 ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Հայաստանի ժողովրդագրական վիճակը ներկայում

	Ծնվածներ	Մահացածներ	Մշտական բնակչությունը տարեսկզբին, հազ. մարդ
1990	79 882	21 993	3 514.9
1991	77 825	23 425	3 574.5
1992	70 581	25 824	3 633.3
...			
2020	36 353	36 433	2 959.7
2021	36 623	34 388	2 963.3
2022	36 353	26 805	2 961.4

«Առկա վերլուծությունները վկայում են, որ ժողովրդագրության առումով հուսադրող քիչ բան կա Հայաստանում: Ըստ փորձագետների՝ ***ունենք բնական աճի շատ փխուր պատկեր****, որը չի վերականգնվում պատերազմից հետո:* ***Արտագաղթի ցուցանիշներն էլ բավականին մեծ են****»,-* արձանագրում էին փորձագետները ՀՀ ժողովրդագրական իրավիճակի շուրջ երկար ու համակողմանի քննարկումների ընթացքում:

Հայաստանի բնակչությունը նվազում է: Շարունակում է խնդիր մնալ նաև միգրացիոն շարժերի բացասական մնացորդը: Օրինակ, ըստ ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի և ելքերի սահմանային գրանցումների՝ **2022 թվականին Հայաստանից հեռացել է 27 941՝ ՀՀ փաստաթղթերով ավել մարդ, քան վերադարձել է**:

Հայաստանի բնակչությունը նաև ծերանում է: **Մինչև 15 տարեկան երեխա կա միայն ամեն 5-րդ ընտանիքում:**

«*Համավարակից և պատերազմից զատ, ժողովրդագրական առումով էական նշանակություն ունի անվտանգային միջավայրի վատթարացումը: Հարկ է խնդիր ձևակերպել պահպանելու բնակչության ներկայիս թիվն առաջիկա տարիների համար, քանի որ* ***2026 թ. հետո ունենալու ենք ծնունդների թվաքանակի անկում****»,-* համարում են փորձագետները: Եթե մոտ ապագայում հնարավոր լինի կանխել ժողովրդագրական առումով անդառնալիության կետին հասնելը, ապա դա կլինի մեծ ձեռքբերում: Մեր նպատակներն ապագայի համար պետք է լինեն ինչպես հավակնոտ, այնպես էլ հասանելի:

Իսկ տարբեր գնահատականներով, առկա տեմպերի պահպանման պարագայում **2050թ. ՀՀ բնակչությունը կլինի մոտ 1,9 մլն, իսկ 2100 թ.՝ 1 մլն**: Սպասումներն էլ դրական չեն, կա ապագայի հնարավոր լավատեսական սցենարների հանդեպ հավատի բացակայություն: Հետևաբար շատ ավելի քչերն են այսօր հակված ակնկալելու բնակչության թվաքանակի աճ: «*Ունեմ տպավորություն, որ*

հասարակության մեջ մի տեսակ մրցավազք է սկսել ***ամերիկյան Գրին քարտ կամ ռուսական անձնագիր*** *ստանալու համար, անչափ շատ են մարդիկ, ովքեր այս գործընթացներով են զբաղված. միթե՞ սա հուսալքվածության նշան չէ*»,- տխրությամբ արձանագրում էր քննարկման մասնակիցներից մեկը:

Անվտանգություն, հավատ, հույս. սրանք ժողովրդագրական իրավիճակի համար կարևորագույն ասպեկտներ են՝ համարում են փորձագետները: Իսկ այն, ինչ Հայաստանում այսօր արվում է ժողովրդագրական պատկերի և բնակչության աճի խնդիրների ուղղությամբ, գնահատում են որպես խիստ անբավարար: «*Հանրության մեջ ունենք ապատիկ տրամադրություններ. շատերը հաղորդ չեն իրականությանը և խնդիրներին, չեն պատկերացնում դրանց մասշտաբները: Ընդ որում, շատերը չգիտեն, թե ինչ են ուզում և ինչ կուզեին փոխել և/կամ ինչպես դա անել: Հարկավոր է հստակ քաղաքականություն նշված խնդիրների լուծման համար*»:

Վերջին տարիներին այս ուղղությամբ **պետության կողմից տարբեր աշխատանքներ կատարվել են**. մասնավորապես, բնակարանային ծրագիրը, առաջին և երկրորդ երեխաների միանվագ դրամական նպաստն է բարձրացվել, գյուղական բնակավայրերում չաշխատող ծնողներն սկսել են պետական նպաստ ստանալ և այլն: Սակայն, կան շատ ավելի լուրջ գործոններ, որոնք բացասաբար են անդրադառնում խնդիրների մեղմման ջանքերի վրա. դրանք շատ ավելի համապարփակ մոտեցում են պահանջում:

Ըստ փորձագետների՝ մենք պետք է հասկանանք, թե **ինչ նպատակադրումներ ենք ամրագրում:** Որո՞նք են ՀՀ ժողովրդագրական հնարավորությունները և պոտենցիալը. ինչպե՞ս և ի՞նչ որակի պատկեր է հնարավոր ապահովել: Որքա՞ն բնակչությամբ Հայաստան ենք մենք պատկերացնում **10, 20, 30 տարվա հեռանկարում՝ 2՞մլն, 4՞մլն, 6՞մլն, միգուցե 3մլն բնակչությունն** ենք համարում հասանելի և ընդունելի: Ինչու՞:

Փորձագետները ժողովրդագրական պատկերի բարելավման հիմքում առանձնացնում են գերակտիվ երկաստիճան-փոխլրացնող ջանքերի համակարգի կարևորություն.

1. բոլոր ոլորտների պետական ողջ քաղաքականության հիմքում **ժողովրդագրական պատկերի բարելավման առաջնայնություն** և գերնպատակ,
2. **հանրային լայն աջակցություն** և նախաձեռնություններ:

Սակայն նույնիսկ փորձագետների մոտ տարբերվում են մոտեցումները քաղաքականության մասշտաբայնության մասով:

«***Ժողովրդագրական մեյնսթրիմինգ՝ հռչակել ժողովրդագրությունը գլխավոր խնդիր, որին պետք է սպասարկեն մյուս ոլորտների քաղաքականությունները****: Մինչև հիմա ժողովրդագրական քաղաքականությունը ընկալվում է որպես*

սոցիալական օժանդակության գործիք: Մեզ անհրաժեշտ է համալիր քաղաքականություն, որը խթանում է մարդուն Հայաստանում մնալու և ստեղծագործելու»- գտնում են մի խումբ փորձագետներ:

*«Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է լինի **ավելի փոքր քաղաքականությունների, ծրագրերի ամբողջություն**, քանի որ համապարփակ և միասնական քաղաքականություն ունենալն ու իրականացնելը թանկ հաճույք է և ոչ հասու այսօրվա Հայաստանին»*- հակադարձում են մյուսները:

Ո՞ր ճանապարհով շարժվել և ինչպե՞ս. այս մասին լրջորեն խոսելու կարիք կա: Մի բանում սակայն բոլորն են համակարծիք՝ **հրատապ քայլերի անհրաժեշտությունն ակնհայտ է**:

Գործընթացի հանրային լայն աջակցության և մասնավոր նախաձեռնությունների կարևորությունն էլ հստակ ընդգծվում էին քննարկումներում: **Ի՞նչ պետք է անի լայն հանրությունը**, **ի՞նչ կարող են անել մեր գործարարները, մշակութային և կրթական կառույցները, տեղեկատվության բոլոր միջոցները, ինչպիսի՞ իրականանալի նախաձեռնությունների գաղափարներ կարող են լինել**. այս հարցերի մասին փորձագետները հրավիրում եմ բոլորի ուշադրությունը և խրախուսում ստեղծագործ քննարկում:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023
Երևան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

Համապարփակ հարց.
Որո՞նք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ուղիները:

2 ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Բնակչության բնական աճ

Իրականություն

Փորձագետները մանրամասն քննարկեցին ծնելիության, կյանքի տևողության, մահացության, բնակչության ծերացման, առողջապահության, ամուսնությունների և ամուսնալուծությունների, երիտասարդ ընտանիքների աջակցության, կնոջ հասարակական դերի, աշխատանքի, կրթական հնարավորություններ ի դերի ապահովման, բնակչության բնական աճի վերաբերյալ հարցերի լայն սպեկտր:

Տարիներ շարունակ Հայաստանն ունեցել է **պտղաբերության/ծնելիության 2.1 գործակիցը**, որը նվազել է և ներկայում կազմում է 1.6-1.7: Մարզերում ծնելիության մակարդակը Երևանի համեմատ էլ ավելի ցածր է: 1.6 գործակցի դեպքում դեռևս կարելի է ճիշտ քաղաքականության միջոցով այն մոտեցնել 2.1-ի, սակայն 1.3 գործակցի դեպքում խնդրի արդյունքում առաջացած վիճակն ինչ-որ իմաստով դառնում է անշրջելի:

Ծնելիության նվազման միտումը համաշխարհային երևույթ է, և երեխաների պահանջմունքը կայուն նվազման միտում ունի նաև Հայաստանում ու արդեն բավականին երկար ժամանակ: **Ամուսնությունները և առաջին երեխայի ծնունդը հետաձգելը** ևս տեսանելի երևույթ է մեր օրերում: Մտահոգիչ պատկեր է նաև **ամուսնալուծությունների մասով**՝ յուրաքանչյուր 3-րդ նորաստեղծ ընտանիք գտնվում է ռիսկային խմբում: **Սեռով պայմանավորված աբորտների** հարցն էլ, թեև վերջին տարիների բարելավվել է, բայց շարունակում է մնալ խնդիր, թեպետ զգալի ազդեցություն ժողովրդագրական պատկերի վրա այս հարցը չունի: «***Մեր առողջությունը շատ վատ վիճակում*** *է, ծերերի մեծ խնդիր ունենք: Մեզ մոտ մինչև 5 տարեկան երեխաների հարցում վիճակը շատ լավ է, գրեթե մոտեցել ենք եվրոպական ցուցանիշներին, այս տարիքային խմբի հաշվին ընդհանուր երկարակեցության թիվն աճել է ու ասում ենք, թե պատկերը դրական է*»,-բնակչության կյանքի տևողության հարցերի քննարկման ժամանակ իր մտահոգությունն էր կիսում փորձագետներից մեկը:

Մեր հասարակության **սեռատարիքային կազմի պատկերը** գրեթե հայրենական մեծ պատերազմի միջով անցած երկրի սեռատարիքային կազմի պատկերին է հասնում: 25 տարեկան և ավելի մեծ տղամարդկանց թվի մեծ պակաս կա: Պատերազմն այստեղ նկատելի գործոն է, բայց ամենամեծ խնդիրն ու գործոնն այս դեպքում միգրացիան է:

Մահացության մակարդակների տարբերություն ունենք Երևանում և մարզերում: Առողջապահական համակարգը չի գործում որպես միասնական-միատիպ մարմին, որը առողջապահության հավասար հասանելիություն կարող է ապահովել մայրաքաղաքում և մարզերում: Սա ուղիղ կերպով ազդում է մահացության և այլ ցուցանիշների վրա:

Քաղաքականություն

Անհրաժեշտ է մշակել և ունենալ **ազգային նպատակներից բխող ընտանիքի կազմ, մոդել** և ամբողջ հանրային փոխհարաբերությունների փիլիսոփայությունը կառուցել հենց դրա հիմքի վրա՝ մանկապարտեզից, դասագրքերից ու գովազդներից մինչև կենսաթոշակային համակարգ: Օրինակ, ընդլայնված ընտանիքներում տատիկ, պապիկների կողմից արժեքների տրանսֆորմացիան թոռների վրա շատ ավելի մեծ է, իսկ տարեցները շատ երեխա ունենալու հավատամքի կրողներ են:

Մայրությունը պետք է հանրահռչակվի որպես արժեք և շատ հարգված մի բան, երջանկության աղբյուր: «*Հայաստանում մոտավորապես **յուրաքանչյուր 10-րդ կին երբեք ամուսնացած չի եղել**: Նրանց մի մասն ուզում է երեխա ունենալ, սակայն միայն այն պատճառով, որ մեր հասարակությունը դրան վատ է նայում, չեն ունենում երեխա: Այդպիսի կանանց հաճախ ավելի շատ փնովում են հենց կանայք: Մինչդեռ բոլորը պիտի միանան, **մեծարեն այն կնոջը, ով առանց ամուսնու ցանկանում է երեխա ունենալ***»,- այսպիսի դիտարկում արեց փորձագետներից մեկը: Առանց ամուսնու երեխա ունենալու որոշում կայացրած կնոջ մասին **անգամ մեկ բարձրակարգ գեղարվեստական ֆիլմի նկարահանումը** կարող է մթնոլորտ փոխել երկրում:

Առկա են խնդիրներ նաև **երեխա խնամող մոր աշխատանքային պայմանների** ապահովման հարցում: ՀՀ-ում հղի կանայք, թոշակառուները շատ հաճախ դուրս են մնում տնտեսական շրջանառությունից, չեն աշխատում, այնինչ կարող են վերապատրաստվել ու հնարավորության չափով նորից գալ ու ներգրավվել տարբեր ոլորտներում: Սա խնդիր է, որ շարունակաբար զսպելու է ծնելիությունը երկրում:

Որպես բնական աճին նպաստելու տարբերակ փորձագետներն առաջարկեցին դիտարկել նաև ՌԴ փորձը, որտեղ **«Մայրական կապիտալ» ծրագրի** ներքո նորաթուխ ծնողներին տրամադրվում է հողատարածք կամ բացառապես դրա ձեռքբերման համար նախատեսված դրամական աջակցություն, իսկ ամեն հաջորդ երեխայի հետ ավելացվում է դրա ծավալը:

Կարևոր է աշխատաշուկայում առկա հնարավորությունները գնահատել, որովհետև մանկահասակ երեխաներ ունեցող կանայք պետք է կարողանան ունենալ **կես օրյա ծանրաբեռնվածություն ենթադրող զբաղվածության հնարավորություն**: Նման հաստիքների դեպքում պետք է այն տրոհել երկու մասին և տալ երկու մարդկանց, որպեսզի վերջիններս հասցնեն աշխատանքի հետ այլ անելիքներ էլ պլանավորել:

Փորձագետները կարևորեցին նաև **եկեղեցու դերը.** «*Քարոզի մեջ, իմ կարծիքով, եկեղեցու ներկայացուցիչներն ունեն մեծ դեր, հատկապես գյուղերում՝ ի տարբերություն քաղաքների: Մարդիկ լսում են գյուղական հոգևոր կյանքի ներկայացուցիչներին իրենց համայնքներում: Ընդ որում գյուղերի հոգևորականները շատ հաճախ ունենում են իրենց ընտանիքները, մոտ են բնակչության, նրանց*

հոգսերին ու այս տեսանկյունից կարողանում են ճիշտ գնահատել մարդկանց կարիքներն ու մոտեցումները»,- եզրահանգում էին նրանք:

Փորձագետների քննարկումներում առանձահատուկ կարևորվեց **լայնածավալ քարոզչության և իրազեկման հանրային մեխանիզմների ստեղծումը**: «*Յուրաքանչյուր սրտացավ ոք պետք է դառնա շատ երեխա ունենալու գաղափարի տարածողը, քարոզիչը, օրինակը*»: Պայմանական «Առնվազն 4 երեխա» անունով հասարակական կազմակերպությունը կարող է մասնագիտանալ քարոզչական մեծ ալիքի ձևավորման և ուղղորդման հարցերում: Քարոզչական մեծ ալիքին զուգահեռ պետությունն էլ կարող է **երրորդ և չորրորդ երեխայի ծնունդը խրախուսող քաղաքականություն առաջ տանել**, և համատեղ ուժերով հնարավոր կլինի արդյունքներ գրանցել:

Հայաստանի և Սփյուռքի երիտասարդների միջև ընտանիք կազմելու խնդրին նպաստելու համար, ըստ փորձագետների, կարելի է դիտարկել **«առցանց համահայկական ծանոթության հարթակի»** ստեղծման հնարավորությունը: Դրանում հանգամանորեն ստուգման և բացառությամբ հայ մասնակիցների գրանցման արդյունքում կհեշտանա ծանոթանալու, մտերմանալու, ընտանիք կազմելու հարցերում հետաքրքրվող հայ երիտասարդների շփումները:

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԻ
ՀԱՄԱԺՈՂՈՎ

10-12 ՄԱՐՏԻ 2023

Երևան

ԸՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

Համապարփակ հարց.

Որո՞նք են Հայաստանի կայուն ապագան երաշխավորելու և ժողովրդագրական մարտահրավերները լուծելու անհրաժեշտ ուղիները:

3 ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Ներգաղթ և արտագաղթ

Խնդիրը

Միգրացիան շարունակում է մնալ բնակչության թվաքանակի մասով հիմնական գործոնը: Իսկ մենք շարունակում ենք գրանցել բացասական միգրացիոն միտումներ:

Փորձագետները ներգաղթի թեմայով երեք խումբ հարցեր քննարկեցին և առաջարկում են ընտրել, թե առաջնահերթ ո՞ր ուղղությամբ ջանքեր ներդնել.

1. **Արտագաղթած հայաստանցիների ներգաղթի կազմակերպում**
   Ի՞նչ քայլեր ձեռնարկել, որպեսզի արտագաղթած հայաստանցիները վերադառնան Հայաստան: Ի՞նչ գործոններ է պետք ապահովել, հնարավո՞ր է արդյոք այն իրականացնել, թե՞ ոչ, պետքակա՞ն է այդ գործընթացի կազմակերպումը մեզ համար, թե՞ ոչ:

2. **Պատմական սփյուռքի ներկայացուցիչների ներգաղթի կազմակերպում**
   Ինչպե՞ս անել, որ սփյուռքի ներկայացուցիչները ներգաղթեն: Տարբեր ժամանակներում նման պատմական իրադարձություններ ունեցել ենք մենք և մեր հայրենակիցները վերադարձել են հայրենիք Սիրիայից, Լիբանանից, վերջերս նաև Ռուսաստանից և Ուկրաինայից: Ի՞նչ անել, որպեսզի պահենք ներգաղթած մարդկանց այստեղ և ի՞նչ անել, որպեսզի ավելի ու ավելի շատ մարդիկ գան սփյուռքից ու ապրեն Հայաստանում:

3. **Օտարազգիների ներգաղթի կազմակերպում**
   Ուզու՞մ ենք արդյոք, որ օտարազգիները գան ու ապրեն Հայաստանում: Այսպիսի ներգաղթը կօգնի՞ Հայաստանին, թե՞ ոչ: Ի՞նչ հեռանկար ունի այս հարցը և որոնք ենք մոտակա և հեռակա ազդեցությունները:

«Հայաստան-Սփյուռք միասնականություն» թեմայի քննարկումներում արդեն հանգամանալից դիտարկվել են արտագաղթած հայաստանցիների և լայն Սփյուռքի՝ **Մեծ ներգաղթ կազմակերպելու հնարավորությունը**: Հայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու գաղափարը ոգևորությամբ ընդունվեց շատերի մոտ, սակայն կային նաև հակառակ կարծիքներ, որոնք նույնքան հիմնավոր էին. «*Ինչո՞ւ ենք մենք ձևակերպում սփյուռքահայի ներգաղթի խնդիր: Ո՞րն է ՀՀ-ի տեսանկյունից այսօր ավելի կարևոր. ունենալ թոշակառու, որն այսօր ապրում է այստեղ, ապահովված է, թե ունենալ մեկ թոշակառու, որը պետության խիստ կազմակերպված քաղաքականության դեպքում դառնում է պետության, իշխանության մոտեցումների ակտորն ու քարոզողը: Երկրորդ տարբերակը, կարծում եմ, ավելի լավ է»:*

Կարծիքների հակադրություն կար նաև 3-րդ՝ **օտարազգիների ներգրավման թեմայում**: Պետք է հարց տալ՝ ուզո՞ւմ ենք ունենալ միայն հայերով բնակեցված ՀՀ, թե պետություն, որը կարող է տուն լինել նաև այլ ազգի, կրոնի ու արժեքների մարդկանց համար: Գուցե պետք է հանդուրժող և ընդհանուր արժեքները կիսող մարդկանց ներգա՞ղթ կազմակերպել ՀՀ: Իսկ արդյո՞ք մենք հանդուրժող ենք ՀՀ-ում գտնվող այլազգի ներկայացուցիչների հանդեպ: Օտարազգիներ ներգրավման

հարցում բավականին դրական կարծիքներ հնչեցին, սակայն այստեղ մնույնպես կային այլ կարծիք ունեցողներ. մասնավորապես նշվում էր, որ առաջնայնությունների հարց կա. օրինակ, **երբ դու չես կանգնեցրել արտագաղթը**, խոսելն այլ ազգերի ներկայացուցիչներ ներգրավելու մասին չի կարող հանրային դրական ընկալում ունենալ:

«***Մեր առաջնահերթությունը պետք է լինի մարդկանց երկրում պահելը****: Կարևորության տեսանկյունից սա շատ ավելի սուղ խնդիր է, քան դրսից մարդկանց բերելը*»,- հնչում էր փորձագիտական քննարկումներում: Սիրիահայերի դեպքում ունեցանք մեծ հոսք, սակայն չկարողացանք շատերին պահել: Գործոնները շատ են, որոնք մարդկանց ստիպում են հեռանալ և հաճախ դրանք շատ մարդկային և անձնական հիմքեր են ունենում: Շատ են այն մարդիկ, ովքեր չեն լսում իրենց առաջարկվող հնարավոր տարբերակները որպես ՀՀ-ն լքելու այլընտրանք: Այս խմբի մարդիկ ՀՀ-ն դիտարկում են որպես տարանցիկ երկիր:

Արտագաղթը մեր ցավոտ թեմաներից է: Ինչո՞ւ են մարդիկ արտագաղթել ու արտագաղթում Հայաստանից: Եթե հնարավոր լինի որոշել մարդկանց գնալու այս կամ այն կոնկրետ պառճառները, ապա հնարավոր կլինի իրականացնել գնահատումներ և հասկանալ, թե ինչպես կարելի է վերացնել այդ պատճառները: *«Ամենացավալին այն է, որ **չկա ընկալում, որ ՀՀ-ից ցանկացած մարդու հեռանալը մեծ խնդիր է**: Սա հանրային ու այլ փրամադրություններում գրեթե չի դրսևորվում»*,- իրենց մտահոգությունն այսպես էին արտահայտում փորձագետները:

Հարցին, թե ինչ պատճառով են մարդիկ մեկնում Հայաստանից, նշում են անվտանգային իրավիճակը: Դեռևս **ունենք կամավոր պարտադիր վերադարձ**, որտեղ վերադարձողներից շատերը հիմնականում ԵՄ գնացած ու ապաստանի ստանալու հարցում մերժված մարդիկ են: Թե որքանով ՌԴ-ից ու այլ տեղերից ՀՀ եկողները կշարունակեն մնալ այստեղ, քանիսն են ՀՀ իրենց անձնագիրն օգտագործում Եվրոպա գնալու համար, այս պահին հստակ չէ:

Անելիքներ

«Արտագաղթելն ամոթ է» հանրային շարժման նախաձեռնմամբ և քարոզչական ամենատարբեր գործիքների կիրառմամբ հնարավոր է ազդել արտահագաղթման հակում պարունակող հանրային մթնոլորտի վրա՝ փոխելով նաև մարդկանց վարքագիծը:

Պետք է կարողանալ կանխատեսել մոտակա հնարավոր հոսքերը դեպի Հայաստան և պատշաճ կերպով պատրաստվել մարդկանց ժամանմանը: «*Իսրայելում ունեն գործակալություն, որ զբաղվում է հրեաների հոսքերի կազմակերպմամբ, իսկ մենք չունենք նման կառույց*»,- նշում են փորձագետները: **Ներգաղթի կազմակերպման ու քարոզչության գործակալության** ստեղծումը Հայաստանում ևս կարևոր է դառնում:

Եթե մեր սփյուռքի ջանքերով հնարավոր լինի, որ **ԱՄՆ կոնգրեսը Սոցիալական ապահովության (Social Security) օրենքում լրացում կատարի** և Իսրայելի ու Լեհաստանի կողքին Հայաստանի թոշակառուներին նույնպես հնարավորություն տրվի երկրից բացակայելու պայմաններում ստանալ իրենց թոշակը, ապա դա խթան կհանդիսանա հայրենադարձության համար:

Բազմաթիվ այլ՝ հնարավոր անելիքների մասին խոսեցին փորձագետները, որոնց շարքը հարստացնելու համար հրավիրում են մեծ Համաժողովի մասնակիցներին՝ **մտքային գրոհի և թարմ գաղափարների գեներացման**:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՕՐ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.3.

- Սկզբից պետք է արցախցիները հասկանան ուզում են Հայաստանի օգնությունը, ընդունում են, թե Հայաստանի ու Արցախի դիրքորոշումները տարբերվում են:
- Արցախի հարցը պիտի դարձնել միջազգային ազգերի ինքնորոշման հարց:
- 1980-ականներից սկսած խնդիրը պարզ է՝ տարբերակ 1. Ադրբեջանի հայերի էթնիկ զտումը; տարբերակ 2. Արցախի ճանաչում. արդարություն (միջազգային):
- Արցախի հարցը լուծվել է 1989 թ. և մենք (ողջ հայությունը) տեր չենք կանգնել մեր իսկ որոշմանը: Հիմա պետք է փորձենք գործադրել բոլոր հնարավոր և անհնարին թվացող ջանքերը մեր սխալներն ուղղելու համար:
- Հայաստանի և Արցախի անվտանգության հարցը բարդ բանակցային գործընթաց է, ցավոք, մենք չենք կարող ասել, որ հասել ենք կայունության, պետք է շարունակել աշխատել այդ ուղղությամբ: Սա ամբողջ հայկական աշխարհի հարցն է, ոչ միայն ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների:
- ՀՀ-ն պետք է տեր կանգնի Արցախում բնակվող իր քաղաքացիների բոլոր իրավունքների իրացմանը:
- Այո, մեր դիրքերը թուլացել են, բայց նաև չի կայունացել ներկայիս խնդիրը ռուս խաղաղապահների և եվրոպացի դիտորդների շնորհիվ:
- Համայն հայությունը պետք է ունենա ազգային դոկտրին, որից կբխի նաև Արցախի խնդրի լուծումը:
- Մենք կարիք ունենք ազգային վերակառուցման և իմաստուն առաջնորդության:
- Արտաքին քաղաքականության մեջ պետք է որոնել նոր ռազմավարական դաշնակիցներ:
- Հաղթանակներից վախի հարցը չէ: Խոսքը ռիսկերին պատրաստ լինելու և դրանք նվազեցնելու համար միջոցներ նախապատրաստելու մասին է հաղթանակ ապահովելու համար:
- ՀՀ-ն Արցախի հետ միասին համախմբելով Սփյուռքին, պետական մակարդակով պետք է ստանձնի Արցախի պատասխանատվությունը:
- Ամբողջական տուեալներուն չեմ տիրապետեր, հարցումը լավ չէ բանաձևուած: Ի՞նչ է «Արցախի պատասխանատվությունը» եզրը:
- Եկեք իրատես լինենք, բայց նաև չվախենանք հաղթանակներից: Այսինքն, Արցախի հարցը և՛ արցախցիների, և՛ ՀՀ-ի, և՛ աշխարհի բոլոր ոչ անտարբեր հայերի հարցն է (բայց 1 միլիոնն էլ չի հավաքվի, ովքեր անտարբեր չեն ոչ թե խոսքով, այլ գործով): Ավելի նեղ իմաստով (նույնիսկ ավելի մեծ), պատասխան պետք է ակնկալել համահայկական վերնախավից:
- Արցախի հարցը ունի բազմաշերտ և շատ նուրբ նրբերանգներ. երկու տողով հնարավոր չէ ներկայացնել:
- Հարցերի ձևակերպումները «կամ-կամ»-ի մեջ են, սակայն Արցախի հիմնախնդիրը նաև 120 000 արցախցիների խնդիրն է, որոնք պետք է ձևակերպեն՝ ինչպիսի ապագա են ցանկանում ունենալ:
- Ե՛վ Հայաստանը (որպես պետություն), և՛ Սփյուռքը պետք է իրենց տեղերում ջանքեր գործադրեն Արցախի անվտանգությունն ապահովելու համար:
- Պետք է առաջնորդվել Արցախի կառավարության ցանկություններով, բայց այդ ցանկությունները չպետք է միակողմանի հետաքրքիր լինեն միայն Արցախի համար, Հայաստանի շահերն էլ պետք է հաշվի առնվեն:

1.4.

- Այս պնդումները չեն հակասում միմյանց:
- Երկու կետերն էլ արդիական են, քանի որ ոչ բոլոր պատմամշակութային ժառանգության նմուշները կարող են տեղավորվել բիզնես մոդելների մեջ:
- Կարելի է վերոնշյալ երկու տարբերակների միքս անել, հիմնվելով ավելի շատ առաջին տարբերակի վրա:
- Ժառանգությունը պահպանելը, իհարկե, կարևոր է, բայց ոչ ի վնաս պետական բյուջեի (քանի որ 1-ին նպատակը բնակչության բարեկեցությունն է), օրինակ՝ բարեգործական միջոցների հաշվին:
- Երկու տարբերակն էլ կարելի է օգտագործել:
- Վերը նշված պնդումները պետք է միացնել և արդյունավետորեն անել ամեն ինչ:

- Կետ 1-ը պարտադիր, բոլոր հնարավոր դեպքերում կիրառել նաև կետ 2-ը:
- Միավորել առաջին և երկրորդ կետերը:
- Համաձայն եմ 2-ի հետ: Ավելացում՝ լուծումը տեսնում եմ ուժեղ մարքեթինգային ռազմավարության մեջ:
- 1 և 2 կետերի սիմբիոզ պետք է լինի:
- Եթե մենք չպաշտպանենք մեր պատմությունը, նոր սերունդը նոր պատմություն չի ստեղծի:
- Մենք պետք է սովորենք պահպանել մեր պատմական և մշակութային ժառանգությունը ժամանակակից մեխանիզմների միջոցով: Հասարակայնության հետ փոխազդեցություն. մեդիան դա բովանդակության, պատմական ֆիլմերի, մուլտֆիլմերի, հավելվածների և այլնի ստեղծումն է:
- Փոխադարձաբար պահպանել, քանի որ ժառանգություն է և ազգային արժեք, բայց և օգտագործել այն բիզնես մոդելով ինքնաֆինանսավորման հասնելու համար:
- Մեր պատմամշակութային ժառանգության պահպանումը պետք է հանդիսանա ազգային դոկտրինի բաղադրիչ:
- Մենք պետք է սովորենք հարգել և սիրել ինքներս մեզ և մեր ժառանգությունը: Բայց պետք է նաև փող հաշվելն էլ իմանալ:
- Մենք պետք է փաստագրենք մեր մշակութային ժառանգությունը, ներդնենք մտավոր սեփականության իրավունք և արտոնագրենք: Ամեն հայկականը դրոշմավորենք:
- **1.5.**
- Ամենից առաջ պետք է ձգտել ձևավորել էմոցիոնալ կապ հայրենիքի հետ, հայ լինելու վերապրում:
- Հայերենը չպետք է դարձնել հարաբերությունների պարտադիր պայման:
- Երկուսը միասին:
- Հայ լինելը պիտի դառնա շահավետ ողջ աշխարհում:
- Պետք է մշակել և գործարկել միասնական կենտրոնացված կրթական համակարգը, որը կլինի պարտադիր և կունենա վերահսկող պատասխանատու ամեն քաղաքում: Պետք է ներդնել բալային համակարգ:
- Հայապահպանությունը հնարավոր է միայն ուժեղ Հայաստանով, Հայաստանում ապրելով:
- Լեզվի իմացությունը հիմնական հարցն է, որը կարող է համախմբել սփյուռքահայությանը, Արցախի Հանրապետության հայերին, բայց անհրաժեշտ է գրագետ մոտենալ երիտասարդության մոբիլիզացման ուղիներին. այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ստեղծել հանրաճանաչ, հետաքրքիր մեդիա պրոդուկտներ հայերենով՝ մուլտֆիլմեր, սերիալներ, երաժշտություն և այլն:
- Փորձեք ինտեգրել հայոց լեզվի ուսուցումը հեռուստասերիալների, երաժշտության, փոփ մշակույթի, սոցիալական ցանցերի միջոցով:
- Ազգային դոկտրինի բաղադրիչ պետք է լինի ազգային դպրոցի ստեղծումը, որի ձեռքերը կհասնեն Սփյուռքի բոլոր համայնքներին:
- Մայրենի լեզուն սովորելը, իմանալը բիզնես չէ, որ շահավետ լինի: Պետք է ջանքեր չխնայել տարբեր մեթոդներով շահագրգռելու, սիրելի դարձնելու մայրենի լեզվի և մշակույթի ուսուցումը Սփյուռքում: Հայաստանում հաստատվող այլազգիների համար ՀՀ պետական լեզվի իմացությունը պարտադիր է:
- Հայապահպանությունը միայն հայոց լեզուն չէ, կարևոր են նաև ընտանեկան, մշակութային և ազգային արժեքները և դրանց փոխանցումը:
- Լեզվի իմացությունը հակառակ ազդեցություն չունի, ծայրահեղություն է, եթե այս գործիքը արդյունավետ չէ: Այնուամենայնիվ, լեզուն ավելի մեծ չափով փոխանցում է ոգի և ամրապնդում մշակույթը, քան եթե այն չկա:
- Պատմամշակութային ժառանգությունը իբր սահմանափակ է: Քննարկումներն ավելի հետաքրքրական հայտաբերեցին:
- Լեզուն պետք է ապրի, պետք է դաստիարակեն ծնողները:
- Հայերենի իմացությունը պարտադիր է, բայց լեզվի մատուցման և յուրացման գործիքները վաղուց հնացել են: Կարելի է արդիականացնել կրթական համակարգը, որպեսզի աշակերտներն իրենք ձգտեն գիտելիքի:

ՕՐ 2. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1.

- Բավարար չեն եղել, կան հարթակներ, որոնք արդյունավետ չեն: Նոր հարթակներ ստեղծելու փոխարեն հնարավո՞ր չէ արդիականացնել եղածը:

2.2.

- Պետք է դիտարկել «համահայկական օրակարգ» առանց բաժանելու ՀՀ-ն Սփյուռքից:
- Վստահության ամրապնդումից հետո քաղաքական ինտեգրում, այլ ոչ թե ֆինանսական և մշակութային փոխանակում կամ միաձուլում:
- Լուծել կամ նպաստել Արցախի խնդիրների լուծմանը, որպեսզի պատրաստ լինենք Հայաստանի հզորացմանը:
- Հայաստանի հզորացում՝ Սփյուռքի մասնակցությամբ, երաշխավորելով, որ իրենց հայկականությունը միևնույն ժամանակ կպահպանվի, և որ նրանք իրենց կզգան ընդգրկված և աջակցված:
- Հայաստանի հզորացումը՝ ակնկալիքով, որ Սփյուռք ունենալու կարիք չի լինի:
- Առավելագույն հնարավոր փոխօգնությունը՝ գիտակցելով, որ այս դեպքում ռեսուրսները բաշխվում են երկու ուղղությամբ, և, համապատասխանաբար, դրանցից յուրաքանչյուրում դրանց ընդհանուր քաշը չի նվազում:
- Հայաստանը որպես պետություն պետք է դառնա Սփյուռքի գործիքը՝ և՛ ինքնապաշտպանության, և՛ Հայաստանի բարեկեցության նպատակով:
- Հեռավար ուսուցում դպրոցներում՝ Սփյուռքի ուսուցիչների միջոցով:
- Հաշվի առնելով յուրահատկությունները՝ կազմել ծրագրեր: Ստեղծել պետականորեն օրենքով որոշակի իրավասություններով օժտված կառավարությունից անկախ մարմին:

2.3.

- Պետք է այնպիսի հարթակ ստեղծել, որտեղ և սփյուռքի ներկա բնակվող հայերը, և Հայաստանի ներկա բնակվող հայերը օնլայն ռեժիմով մոնիտորինգ կարողանան իրականացնել ռեսուրսների բաշխման մասով և կարողանան առաջարկներ անել:
- Դա պետք է կառավարի Հայաստանին Սփյուռքի օգնությամբ, որը կաշխատի միասնաբար, ուղղորդված և ընդհանուր տեսլականով մոտիվացված: Սփյուռքում մեզ պետք է համակարգում, մեզ պետք չէ նոր կառույց, բայց մենք համակարգում ենք արդեն գոյություն ունեցող կառույցներն ու դրանք կապում Հայաստանի հետ: Ստեղծեք մեծ ծառանման բույս, որի միջուկը և արմատը կգտնվի Հայաստանում:
- Հայաստանն ու Սփյուռքը մեկ ժողովուրդ են, բայց այդ կառավարումը պետք է լինի միասնական:
- «Պետք է կառավարի Հայաստանը» մոտեցումը փորձենք փոխել համագործակցությամբ, որտեղ երկու կողմերի դերը հավասարապես կարևոր է:
- Հայաստանը կառավարում չի իրականացնում, այլ համակարգում է, պայմաններ է ստեղծում, օգտագործում է ԱԳՆ-ի հնարավորությունները (Սփյուռքի հետ գործակցության դեսպանատներում ներկայացուցչությունների, սփյուռքի մասնակցության սահմանադրորեն ամրագրված մեխանիզմների միջոցով):
- Սփյուռքի նախարարության ստեղծում, սփյուռքահայ գործիչների ներգրավում հայկական պետությունում:

ՕՐ 3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃ

3.1.

- Պետք է բարելավել ՀՀ քաղաքացիների սոցիալական և տնտեսական վիճակը, որպեսզի մարդիկ ցանկանան այստեղ ապրել և ծննդաբերել:
- Երկրի անվտանգությունը:
- Բնակչության գիտակցության մակարդակի բարձրացումը:
- Սահմանափակել օտարազգիների ներգաղթը:
- Սահմանադրական իրավունքների գերիաստատում, տնտեսական աճ:
- Համաձայն եմ, որ բոլոր գործոններն ազդում են բնակչության թվի աճի վրա, բայց այս խնդրի լուծման արդյունավետության համար անհրաժեշտ է պետական մակարդակով ուսումնասիրել և վերլուծել այս խնդիրը և առկա ծրագրերը՝ այս ուղղությամբ ավելի արդյունավետ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր մշակելու և պետության կոնկրետ գործողությունների համար:

- Անվտանգ և զարգացած երկրի ստեղծումը։
- Մեկ պատուհանով ինտեգրման գրասենյակ՝ բնակարանով, բիզնեսով և սոցիալական ոլորտների ապահովման համար։
- Անվտանգության, վստահության միջավայր։
- Երկրում որակյալ կյանքի ամրապնդման համար։
- Արդար և մրցակցային միջավայրերի ձևավորում։

3.2.

- Կազմակերպել արտագաղթածների վերադարձը և կասեցնել արտագաղթը Հայաստանից։
- Արտագաղթած հայերը դեռ չեն կորցրել կապը ՀՀ-ի հետ, բայց պատմական Սփյուռքը ժամանակի ընթացքում կուծացվի օտարության մեջ։
- Պայմաններ ստեղծել, իսկ մարդիկ իրենք կմիանան։
- Գրավիչ տնտեսական պայմանների ստեղծում (աշխատատեղեր և ապահովություն)՝ ամբողջ Սփյուռքի ներգաղթի համար։
- Ներգաղթի կազմակերպումը ինքնանպատակ չի կարող լինել։ Հստակ ռազմավարական գործողություններ են հարկավոր։
- Աշխատել ընտանիքների հետ՝ աբորտները նվազեցնելու և մանկատներից երեխաների որդեգրման համար։
- Սահմանափակել օտարազգիների ներգաղթը։
- Բացել երկիր մուտք գործելու բոլոր խոչընդոտները և հայտնել այդ հնարավորության մասին։
- Երկիրը դարձնել անվտանգ և տնտեսապես կայուն, զարգացած։
- Հնարավորության դեպքում բոլոր հնարավոր տարբերակները՝ ա. արտագաղթած հայաստանցիների ներգաղթի կազմակերպումը, բ. պատմական սփյուռքի ներկայացուցիչների ներգաղթի կազմակերպումը, գ. օտարազգիների ներգաղթի կազմակերպումը։
- Արտագաղթած հայաստանցիների ներգաղթի կազմակերպումը և պատմական սփյուռքի ներկայացուցիչների ներգաղթի կազմակերպումը միասին։
- Կարևոր չէ կարգը։
- Առաջին հերթին գրավիչ պայմաններ ստեղծել արտագաղթած և վերադառնալ ցանկացող Սփյուռքի ներկայացուցիչների վերադարձի համար, և որ ավելի կարևոր է, որ մարդիկ չլքեն իրենց երկիրը՝ Հայաստանը։
- Պետք է աշխատել արտերկրում մարդկային ռեսուրսի ներգրավման ուղղությամբ։ Օր.՝ Մերձավոր Արևելքի քրիստոնյա համայնքների և հայերին մոտ գտնվող այլ խոցելի համայնքների համար։
- Ներգաղթ կազմակերպելու համար պետք է օրինական շատ օղակներ ճիշտ գործեն։
- Բոլոր հայերի վերադարձ։
- Խնդիրը ունի կոմպլեքս բնույթ, հարկավոր է բազմակողմանի մոտեցում։
- Կառուցել սփյուռքահայության բնակության շրջաններին նման ենթակառուցվածք (բնակարան և բիզնես)՝ սփյուռքահայ նոր և հին հայրենադարձներին ողջունելու համար։
- Երկրում կյանքի որակի բարելավում։
- Ընդգծեցինք, որ առաջնահերթությունը երիտասարդներին ներգաղթի հարցում աջակցելն է։
- Կանխել արտագաղթը։
- Արտագաղթի նվազեցում։
- Ստեղծել պայմաններ, որպեսզի տեղի բնակչությունը չհեռանա։
- Սեփական որոշմամբ Հայաստան տեղափոխվածներին աջակցություն ինտեգրման հարցում։
- Իմ կարծիքով պետք է առաջին հերթին այնպիսի քաղաքականություն վարել, որպեսզի Հայաստանից կասեցվի արտագաղթը։

3.3.

- Սա ազգային անվտանգության տարր է, և քաղաքականությունը պետք է ընտրվի՝ ելնելով Հանրապետության 10-20 տարվա զարգացման ռազմավարությունից։
- Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է համահունչ լինի սոցիալական և տնտեսական քաղաքականություններին։

- Կյանքի որակի բարելավումը խնդիրների մեծ մասի լուծման բանալին է։
- Ուղիղ ժողովրդավարությունն ու Ծվեյցարիայի նման մայր պետությունը համաձայնագրեր է կնքում սփյուռքի երկրների հետ։
- Առաջին տարբերակը, բայց միաժամանակ առավելագույնը ներդնել մարդկային գործոնի փոխանակությանը՝ ռոբոտիքս, ժամանակակից տեխնոլոգիաներ և այլն։
- Ժողովրդագրական քաղաքականությունը պետք է ազգային դոկտրինի մաս լինի։

3.4.

- Չի կարելի ուժերն ուղղել ներգաղթի ապահովմանը։ Սա կարևոր է Հայաստանի համար, և այս հարցին պետք է հավասարակշռված մոտենալ, վերլուծել, փորձել հասկանալ ինչու է այս կամ այն անձը, կամ մարդկանց խումբը (ընտանիք) արտագաղթում։
- Նախ պետք է ստեղծել միջավայր արդեն արտագաղթածների համար և հետո ներմուծել հայրենադարձության քաղաքականություն։
- Կիսում եմ երկու կարծիքները միաժամանակ՝ ա. ի հավելումն հայրենադարձության քաղաքականության՝ պետք է կազմակերպել նաև օտարազգիների ներգաղթ, այդպիսով կլուծենք բնակչության աճի խնդիրը։ բ. սխալ է բոլոր ուժերն ուղղել ներգաղթ ապահովելուն, երբ Հայաստանում ունենք գործազրկության բարձր մակարդակ և աղքատություն։ Առանց տնտեսական զարգացման և գործազրկության խնդիրները լուծելու՝ ներգաղթը հանգեցնելու է սոցիալական լարվածության։
- Տնտեսական զարգացմանը զուգընթաց կլուծվի ներգաղթի խնդիրը։
- Նշված մտքերը (ա.,բ.) կետերը արդիական են, սակայն պարունակում են մի շարք ռիսկեր։
- Բարձր որակավորում ունեցող դաստիարակված մարդկանց/ընտանիքների համար (անկախ ազգությունից) բաց հասանելիություն։
- Ուժերը ծախսել արտագաղթը կանգնեցնելու վրա։
- Պետք է հստակ ինստիտուտներ կառուցել ներգաղթողներին ադապտացնելու համար։
- Սկզբի համար գրավիչ դարձնել մեր երկիրը հայերի համար, հետո նոր այլազգիների, եթե դա կհաջողվի։
- Օտարերկրացիների փոքր խմբերի ներգաղթն էլ է թույլատրելի։
- Երկու ուղղություններն էլ. ա. բացի հայրենադարձության քաղաքականությունից, պետք է նաև կազմակերպել օտարերկրացիների (ոչ հայերի) ներգաղթ՝ օգնելով մեզ լուծել բնակչության աճի խնդիրը։ բ. սխալ է բոլոր ջանքերն ուղղել դեպի ներգաղթ, մինչդեռ Հայաստանում ունենք գործազրկության և աղքատության բարձր մակարդակ։ Առանց տնտեսական զարգացման և գործազրկության խնդիրները լուծելու՝ ներգաղթը կհանգեցնի սոցիալական լարվածության։
- 10 տարեկան ու նոր սփյուռքահայ հայրենադարձների համար, որից հետո բացել սահմանները օտարազգիների համար։
- Ներգրավել սփյուռքի երիտասարդ սերնդին, որը կարող է լուծել ինքնության, ամուսնությունների, տնտեսական և մտավոր խնդիրները։ Նրանք ավելի իրատեսական և խոստումնալից թիրախային խումբ են։
- Մեծ հայրենադարձության ծրագիր է պետք։
- Ինքնակարգավորում։
- Մարդկանց կրթական, մասնագիտական մակարդակի բարձրացումը կբերի գործազրկության հաղթահարման, կնպաստի տնտեսական զարգացմանը, ինչն էլ որոշակիորեն գրավիչ կդարձնի երկիրը ներգաղթի համար, այդ թվում՝ բարձրորակ օտարերկրացիների համար։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԹԻՄ

ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ զարգացման հիմնադրամ

Արտակ Ապիտոնյան, գործադիր տնօրեն *

Գործառնություն և կառավարում

Վիկտորյա Պապիկյան *

Մարիամ Պողոսյան *

Համակարգում և ծրագրային ապահովում

Ամալյա Չոբանյան *

Դավիթ Աքելյան *

Հանրային կապեր

Դավիթ Սարգսյան *

Գոհար Մարտիրոսյան

Արման Ավետյան *

Վարդուհի Ներսեսյան *

Սյուզաննա Գրիգորյան

Դիզայն և վիզուալ

Կոլյա Գևորգյան *

Արման Բայրամյան

OSCA / Iswe Foundation

Ռիչարդ Վիլսոն *

Քլեր Մելիեր*

Ջոնի Սթորմոնթ-Դարլինգ*

Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն (ICHD)

Աշոտ Խուրշուդյան *

Սևակ Լալայան *

Արմեն Գալստյան

Breavis Research and Communications

Հովհաննես Գրիգորյան

*Անմիջականորեն մասնակցել են զեկույցի մշակմանը